

US 64488 E 1007

2.86

Մ Ի Բ Զ Ա Յ Ե Ա Ն

Բ Ա Ն Ո Ւ Կ Ղ Է Յ Ի Ն

Վ Ա Ր Ո Ւ Ց

Պ Ա Տ Մ Ո Ւ Բ Բ Ի Ե Ը

Գ Բ Ե Ց

Է. Ղ Ե Ի Ո Ն Գ Վ. Յ Ո Վ Ն Ա Ն Ե Ա Ն

Մ Ի Ի Թ. Ո Ւ Ի Տ Է Ն


A II
33686



Վ Ի Է Ն Ն Ա

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ս. Ա Ս Տ Ո Ւ Ա Ն Ն Ն Ն Ի Վ Ա Ն Բ Ը

1852. Ռ Յ Ա.



Մ Ա Ն Ո Ւ Կ Պ Է Յ Ի Ն

Վ Ա Ր Ո Ւ Յ

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Այլ ԵՐԶԻՆ ժամանակները Ազգերնուս մէջ երեւելի ու Հայ անուան պարծանք եղող, եւ իբրեւ Հանճարաւոր ու քաջ քաղաքագէտ նաեւ Եւրոպայի տէրութեանց առջեւ անուն Հանող ազգայիններնէս մէկն ալ է բարձրապատիւ Մանուկ Պէյ Միրզայեան: Բայց սակայն չեմ գիտեր ինչպէս եղած է, որ խիստ քիչ մարդիկ կան՝ որոնք աս հոյակապ ու նշանաւոր անձին վրայ, չըսեմ տեղն ի տեղը, հապա նաեւ վեր ի վերոյ մ'ալ ծանօթութիւն ունենան. գուցէ նաեւ գտնուին Ազգին մէջ, գոնէ հեռաւոր տեղեր, անանկ մարդիկ՝ որոնք եւ ոչ իսկ իր անունը լսած ըլլան:

Այս բանս տեսնելով՝ ուզեցինք իր վարքը համառօտիւ պատմել, առանձին անոր համար՝ վասն զի կը

վախնայինք որ եթէ զինքը ճանչցող եւ հետը կենակից եղող քիչ անձինքներուն՝ որոնք տակաւին կենդանի են, գիտցածը զիր չաւանդուի նէ, գուցէ ժամանակէ մը վերջը իր յիշատակը կամ գոնէ իր գործքերուն մէկ մասը բողբոջին մոռացութեան տակ թաղուի. ինչպէս որ դժբախտութեամբ շատերուն պատահած է, որոնց ժամանակակից ըլլողները փոյթ չտանելով պատմութիւննին գրի տակ ձգելու, վրան ատեն անցնելով՝ հազիւ թէ անուննին ծանօթ մնացած է. որչափներ ալ կան արդեօք՝ որոնց անունն իսկ իրենց գործոցը յիշատակին հետ մոռացութեան խոր անդունդը թաղուած է:

Այլ որովհետեւ Մանուկ Պէյին վարքն Օսմանեան տէրութեան մէջ 1808ին պատահած նշանաւոր դէպքերուն հետ խառն է, անոր համար հարկ է որ իր պատմութեան հետ հիւսենք նաեւ նոյն դէպքերուն եւ անոնց առիթ ըլլող պատահարներուն պատմութիւնը, որոնք ըստ ինքեան ալ ամենուն եւ առանձինն Օսմանեան տէրութեան մէջ գտնուող Ազգայիններնուս հետաքրքրական են:

Նոյն դէպքերուն պատմութիւնն առած ենք ըստ մեծի մասին Օղուլուխեան Պր. Վէորգին գրածներէն քաղելով, երբեմն երբեմն իր խօսքերը գրեթէ բառ առ բառ բերելով: Իսկ Մանուկ Պէյին ան-

ձնական պատմութեան դէպքերը՝ իրեն ժամանակակից ու կենակից եղող մարդիկներէն լսելով եւ զանազան անձանց լրատներն իրարու հետ բաղդատելով՝ զգուշութեամբ գրեցինք : Աս մասին մէջ մեզի առանձինն օգնական եղաւ Մոսկաւի Լազարեան ճեմարանին մէջ կրօնական ուսմանց եւ հայկաբանութեան դասատու եղող պատուական Պր. Մսեր Գրիգորեան Մսերեանց, որն որ տասուերկու տարի (1836—1848) նոյն Մանուկ Պէյի որդւոց քովը գտնուելով՝ առիթ ունեցած է աս երեւելի Անձին վերաբերեալ տեղեկութիւնները ստանալու : Աս պատուական բարեկամնիս մեր աղաչանքին զիջանելով՝ զանազան ծանօթութիւններ խաւրեց, որոնցմով գլխաւորաբար Մանուկ Պէյին ծնողաց, իր տնային կենաց եւ Ռուսաստան անցուցած ժամանակին վրայ ունեցած քանի մը տարակոյսնիս լուսաւորուեցան : Ասոր համար զմեզ պարտական կը սեպենք հոս հրապարակաւ մեր շնորհակալութիւնն իրեն մատուցանելու :

Ի այց թէպէտ այսպէս մենք մեր կողմանէ ամենայն զգուշութիւն ըրինք, ի վերայ այսր ամենայնի կրնայ ըլլալ որ քանի մը երկրորդական պարագաներ մէկգի ձգուած եւ կամ նոյնպիսի նիւթերու մէջ ոմանց լրածէն ու գիտցածէն տարբեր կերպով

պատմուած ըլլան: Անոր համար կ'աղաչենք որ աս
 գրուածքիս շինուելուն հանգամանացը միտ դնելով՝
 զմեզ անմեղադիր ընեն: Մենք մեր վախճանին հա-
 սած կը սեպուինք՝ թէ որ աս մեր գրուածքովն ու-
 ըրիչները նոյն երեւելի Անձին վրայ մտադիր կ'ընենք
 եւ առիթ կու տանք որ վրան աւելի մանրամասն տե-
 ղեկութիւն ունեցողները կերպով մը հասարակաց
 ծանօթութեան հասցընեն: Մանաւանդ որ իր բո-
 լոր կենաց ընթացքին մէջ ցուցուցած գովելի հան-
 գամանքները շատերուն օրինակ կրնան ըլլալ, եւ
 ամէն մարդ կրնայ անոնցմէ օգտակար խրատներ
 քաղել:



Ա.

Թրեմբլէլէ օղլունն ոլըբնւորբնւլը: — Մննլ Պէյթն ձնզւ-
րը: էր րըւյնբննն -- զրբննլնբննւլը:

ԹԻՆՊԷՏ ամէն տէրութեանց մէջ յաճախ տես-
նուած բան է որ անուն չունեցող եւ ստորին կարգի
մարդիկ՝ երբեմն իրենց բնական հանճարովն ու քաջու-
թեան գործքերով, երբեմն ալ պարզապէս բախտին
յաջողելովը, խիստ կը մեծնան, կը հարստանան, կը զօ-
րանան, երեւելի գործողութիւններ կը կատարեն եւ
աշխարհքիս վրայ մեծ անուն կը ձգեն. բայց կրնայ
բուռի որ առանկ դէպքեր ամէն տեղէն աւելի Օսմա-
նեան տէրութեան մէջ կը պատահին: Նոյն պետու-
թեան պատմութիւնն անթիւ անհամար ասանկ ան-
ձինք առջեւնիս կը դնէ, որոնք իսկզբան բոլորովին
աննշան ու անծանօթ էին, եւ մէկէն յառաջ երթա-
լով՝ մեծ անուն հանեցին եւ տէրութեան մեծամեծ
ճառայութիւններ բրին: Ըսածներնուս նշանաւոր ու
յայտնի օրինակ կրնայ բլլալ չէ թէ միայն ան Անձը՝
որուն պատմութիւնը հոս պիտի գրենք, հապա նաեւ
անոնք ալ՝ որոնք իր բարձրանալուն պատճառ ու գոր-
ծիք եղան կամ առիթ տուին, այս ինքն՝ թրսէնիկէ
օղլուն եւ Ալէմար Մուստաֆա փաշան, որոնց վրայ
ալ հարկ է որ խօսինք:

Թրսէնիկէ օղլուն՝ որուն առաջին կենաց վրայ ու-
նեցած տեղեկութիւննիս միայն ան է որ երկայն ժա-

մանակ Ռուշճուկի մէջ ջրկրութիւն կ'ընէր, անցած դարուն վերջերը՝ չեմ գիտեր ինչ կերպով եւ ինչ պատճառի համար՝ կամաց կամաց սկսաւ գլուխը զանազան բախտախնդիրներ ժողովել, եւ անոնցմով մէկտեղ Ռուշճուկի մօտ տեղ Մ'ամբանալով՝ թէ նոյն քաղքին ու թէ ուրիշ մերձակայ տեղերուն բնակիչներն անհանգիստ կ'ընէր: Եւ թէպէտ ոչ տէրութեան գէմ յայտնի ապտամբ էր եւ ոչ ալ հասարակօրէն աւազակութիւն կ'ընէր, բայց գոնէ խկզբան՝ տէրութեան կատարեալ հնազանդ ալ չէր, եւ թէ ինք թէ իր մօրդիկը շատերը կը կեղեքէին, բռնութեամբ շատերէն վաճառք առնելով՝ ստակ չէին վճարէր, եւ իբրեւ փոխ կամ ուրիշ ո՞ր եւ իցէ անուամբ ստակ կորզելով՝ չէին հատուցաներ:

Իսկ բուն Թրսէնիկի օղլուին բարուց ու բնութեան վրայ խօսելով, հասարակօրէն ասանկ ստորին աստիճանէ բարձրացած կը թուութիւն շունեցոյ մարդիկներուն յատուկ նկարագիրն ունէր. այս ինքն՝ Երբեմն մեծանձնական ու մարդասիրական գործքեր կ'ընէր, իր մարդիկներուն գործած անիրաւութիւններն ու բռնութիւնները խստութեամբ կը պատժէր, եւ մինչեւ իր անձին գէմ եղած նախաստիւնները՝ որոնց գուցէ ուրիշը մահուամբ ալ վրէժ կ'առնէր, ինք վեհանձնութեամբ բանի տեղ չէր դնէր ու կը ներէր¹: Իսկ Երբեմն ասոր

¹ Իբրեւ իրեն մարդասիրութեան ցոյց՝ հետեւեալ մանրավէպը կը պատմուի: Թրսէնիկի օղլուին շատ մեծնալէն ետեւ՝ հասարակ մարդ մը բանի մը անգամ անոր պալատին առջեւէն անցնելու ատեն՝ իր փառաւորութիւնն ու փափկութեամբ նստելը տեսնելով, ինք զինքը չէր կրնար բռնել ու կամացուկ մը կը ծիծաղէր: Թրսէնիկին աս բանիս միտ գնելով՝ հետաքրքրութիւնը

Հակառակ օստտիկ բարբարոսական եւ անիրաւ գործ-
քեր կը գործէր. այնպէս որ մարդ չիկրնար ըմբռնել
թէ սոսանկ իրարու Հակառակ հանդամանքներ ինչպէս
մի եւ նոյն անձին վրայ կրնան գտնուիլ: Ասկից կը հե-
տեւէր որ թէպէտ սմանք զինքը կը յարգէին եւ իբրեւ
բարերար ու բարեսիրտ մարդ կը դասէին. բայց աւելի
չատերն ալ իրմէ խիստ կը վախնային եւ սոստիկ կ'ա-
տէին: — Աս կերպով քանի մը տարի յառաջ երթա-
լով՝ շատ մեծցաւ, զօրացաւ եւ անունը սկսաւ չորս
կողմը տարածուիլ:

Նոյն ատենները Ռուշտուկի Հայազգի վաճառա-
կաններուն մէջ գրեթէ ամենէն երեւելին ու անուանին
էր Մանուկ Աղա Միրզայեան, որն որ 1769ին (1771ին)
նոյն քաղաքը ծնած էր¹, հարուստ ու պատուաւոր
ճնուղայմէ:

բռնեց եւ ուղեց պատճառն իմանալ. ուստի անգամ մը
նոյն մարդը՝ դարձեալ ծիծաղած ասան՝ իրեն կանչելով
հրամայեց որ առ իր վարձուներին պատճառն ըսէ: Մար-
դը սոստիկ վախնալով՝ երկայն ատեն զէմ դրաւ. բայց
վերջապէս ստիպուելով՝ Տէր իմ, ըսաւ, երբ որ հիմա-
կուան մեծ փառաւորութիւնդ ու փափկութիւնդ կը
տեսնեմ, ատեն մը մեր տունը ջուր կրելդ մտքս կու
գայ եւ բախտին փոփոխականութեան վրայ կը ծիծա-
ղիմ: Թրսէնիկին քիչ մը ժամանակ ինք իրեն խորունկ
մտածելէն ետեւ՝ իրաւունք ունիս ծիծաղելու, ընկեր,
պատասխան տուաւ. եւ ո՛վ գիտէ որ արդեօք որ մը նոյն
փոփոխական բախտը դարձեալ զիս պիտի շտիպէ որ
նորէն տիկս կռնակս առած՝ ջուր կրելով կեանքս հայ-
թայթեմ: Աս ըսաւ ու ծիծաղելով եւ քաղցրութեամբ
մարդն արձակեց:

¹ Թէպէտ Մանուկ Պէշին պղնձագրոյմ կենդանագրին տակ՝
իբրեւ իր ծննդեան տարին՝ 1771 թուականը գրուած է,
բայց ամէն պարագաները մէկտեղ մտածելով՝ մեզի աւել-

Հայրը Պր. Մարտիրոս երիտասարդութեան ատեն՝ իր հայրենիքը կարբիէն՝ ելլելով՝ քանի մը տարի ասիական ու եւրոպական Տաճկաստանի զանազան կողմերը պտրտեցաւ : Թէպէտ ինք շատ հարուստ էր, բայց ընչից մէկ մասը Պարսից հարստահարութիւններովը կորսնցուցած ըլլալով, որոնց համար ալ ստիպուած էր հայրենիքէն ելլելու, մէկ մասն ալ իր երկայն ճամբորդութիւններուն մէջ ծախելով, հազիւ ձեռքը քիչ մը բան մնացած էր : Սակայն Պուրկազ քաղաքը հարուստ մարդու մը աղջկան հետ կարգուելով՝ դարձեալ բաւական ընչից տէր եղաւ եւ սկսաւ վաճառականութիւն ընել. քիչ մը վերջն ալ եկաւ Ռուշտուկ քաղաքը հաստատուեցաւ : Նոյն տեղը կիճն առանց զաւակ թող տալու մեռնելով՝ Մարտիրոս իր սգոյ օրերն անցնելէն ետեւ՝ երկրորդ անգամ կարգուեցաւ նոյն քաղքին պատուաւոր հայազգի քաղաքացիներէն Հանրմ օղլու անուամբ մէկու մը Մամիկ անուն աղջրկան հետ, որմէ ծնաւ Մանուկ :

Մարտիրոս իր ճարպկութեամբն ու արդարասիրութեամբը քիչ ատենուան մէջ մեծ հարստութիւն ժողվեց : Իր մեծ փոյթն ան էր որ զաւկին աղէկ կրթութիւն տայ. ուստի եւ մինչեւ զրեթէ տասուերկու տարւան եղած ատենը քովը պահելով, նոյն քաղքին դպրոցին մէջ՝ տեղւոյն ու ժամանակին ներածին չափ ուսում սորվեցրնել տալէն ետեւ՝ Նաչ խաւրեց եւ նոյն քաղաքը մեծանուն հայ վաճառականի մը քով դրաւ,

ըի հաւանական կ'երեւայ մեր պատուական բարեկամին մեզի հաղորդած տեղեկութիւններուն մէջ գրուած 1769 թուականը :

¹ Կարբի՝ Մեծ Հայաստանին Արարատեան գաւառին մէջ ամուր աւան մըն է :

որպէս զի իր սպառազայ վիճակին հարկաւոր եղած տեղեկութիւնները ստանայ¹ : Խելացի ու եռանդնոտ պատանին հոն շորս տարւան շափ կենալով՝ չէ թէ միայն հօրը բազմաճիւղին համեմատ՝ վաճառականութեան մէջ հիմնովին կրթուեցաւ, որով եւ իր տիրոջը խիստ սիրելի ու բաւական սորկի տէր եղաւ, հապա նաեւ Մոլտաւացոց (վալպերէն) լեզուն ալ քաջ սորվեցաւ, որն որ ետքէն իրեն շատ օգուտ բրաւ : Նոյն ատեն (1785ին) հայրը՝ ալ զինքը քովն ունենալ եւ իր ծերութեան օրերը սիրելի որդւովը մխիթարուիլ ուզելով՝ Ռուշտուկ կանչեց եւ քիչ մը վերջը զինքը կարգեց Աւետ անուն երեւելի մէկու մը աղջկան հետ : Մանուկ հոն իր հօրը առաջնորդութեան տակ՝ անոր դորձքերը առաջ տանելով ու քանի մը անգամ Աստանդնուպոլիս եւ ուրիշ քաղաքներ երթալով գալով, իր բնական տաղանդները շատ ընդարձակեց եւ միանգամայն հայրենի հարստութիւնը մեծցուց : Չենք զիտեր ճշդիւ թէ Պր. Մարտիրոս երբ մեռաւ. բայց զանազան պարագաներու նայելով՝ հաւանական կ'երեւայ որ Մանուկ Եսաչէն դառնալէն եւ աշխարհք մտնելէն ետեւ շատ տարի շանցած՝ իր սիրելի հօր մահը լալու ստիպուեցաւ : Մէկալ կողմանէ ալ արտաքոյ կարգի մեծ ցաւ ու անմխիթար

¹ Ոմանք կը հաստատեն որ Պր. Մարտիրոս՝ արեւելոց գոփելի սովորութեան համաձայն՝ ուզելով որ իր որդին վաճառականութեան սկսելէն յառաջ՝ արուեստ մ'ունենայ, անոր դերձակութիւն սորվեցընել տուաւ : Եթէ աս բանս, որն որ ստուգիւ մեծ խոհեմութեան ու փորձառութեան նշան է, ստոյգ սեպելու ըլլանք, պէտք ենք անանկ դնել որ Մանուկ դպրոցէն շատ պզտիկ ելած եւ Եսաչ չզացած՝ նոյն արուեստը սորված ըլլայ : Ես պարագան՝ մեր հաւանական սեպած թուականն աւելի հաստատուն կ'ընէ :

արամութիւն կը պատճառէր իրեն կողակցին հիւանդութիւնը, որն որ հետն ամուսնանալէն քիչ մը վերջը ցաւագարութիւն մը ստացած էր :

Աս ամէն վշտոց մէջ թեպէտ սիրտը խորունկ խոցուած, բայց արիութիւնը հաստատուն մնալով՝ իր գործքերը յառաջ կը տանէր, որով եւ ինչպէս վերը գրուցեցինք, Թրոէնիկիին պայծառութեան ատեն՝ ինք Ռուշճուկ քաղքին ամենէն մեծ, հարուստ ու պատուար վաճառականն էր : Նոյն քաղաքն ու ծոտերն ունեցած այլեւայլ ստացումներէն ու կարուածներէն դատ՝ նաեւ Վալարքիայի մէջ ալ երկիրներ ու ազարակներ ունէր, որոնց երբեմն երբեմն այցելութեան կ'երթար, որչափ որ իր գործքերը կը ներէին. բայց իր հաստատուն բնակութեան սեղը Ռուշճուկ էր :



Մանուկ Պելին գլխի հանգանակը: — Թրեմեիլի օղակն էլ
 շանօրհան, եւ մէջ տէր սօ համարում էլ գրել:

ՄԱՆՈՒԿ վսեմ ու փառասոր կերպարանք մ'ու-
 նէր. գծազքութիւնն աղնիւ ու բարակ էր. բարձր ճա-
 կատր՝ նշան էր ողւղյն վեհութեան, եւ սեւ ու կրակօտ
 աշուրները՝ իր բնական աշխուժութիւնը կը ցուցնէին:
 Վեհ կեցուածքն ու անուշ նայուածքը՝ իբրեւ հայելի
 կ'երեւցնէին սրտին աղնուականութիւնը: Հանձարեղ
 ու խելացի էր, եւ երիտասարդական հասակին մէջ ա-
 նանկ խոհեմութիւն ու խորագիտութիւն կը ցուցնէր,
 որ չէ թէ միայն աղղայնոց՝ հապա նաեւ օտարազգեաց
 առջեւն ալ յարգելի ու ակնածելի եղած էր: Անանկ
 ալ ամենուն հետ աղէկ վարուիլ գիտէր, որ բաւական
 էր թէ մարդ հետը մինակ անգամ մը տեսնուէր, սիրտն
 անմիջապէս հետը կը կապուէր: Միանգամայն առա-
 տաձեռն էր եւ աղքատասէր, այնպէս որ բոլոր քաղ-
 քին կարօտեալներուն ապաւէնն եղած էր, անոր հա-
 մար ալ ամէնքը զինք հօր պէս կը սիրէին: Ատնցմէ
 զատ՝ արիական քաջասրտութեան եւ աներկիւղ ու
 ձեռնարկու բնութեան տէր էր, որով դժուարին ու մեծ
 բաներու ձեռք կը զարնէր. ամէն սկսածն ալ իր յարա-
 տելութեամբն ու հատաստութեամբը յաջողութեամբ
 գլուխ կը տանէր: Արիութեան ու հաստատութեան
 հետ բնական ճարտարաբանութիւն ալ ունէր, եւ անով

սաստիկ դժուարին պարագաներու եւ ծանր վտանգներու մէջ ելքը կը գտնէր: Աս ամէն ընտիր հանդամանքը կը պատկեր սաստիկ վտահաճութիւն յԱստուած ու ամէն առթի մէջ Անոր ապաւինիլ, որով մեծամեծ վտանգներու մէջ անվրդով ու հաստատուն կը կենար եւ իր պարտքն ու աղէկ սեպած բանէն ամենեւին չէր հեռանար. ինչպէս որ պատմութեան ընթացքին մէջ շատ անգամ առթի կ'ունենանք տեսնելու:

Մանուկին անունն ու իր գովելի հանգամանաց համբաւը Թորոնթիկի օղուին ականջը հասնելով՝ թէ զանկիա տեսնելու եւ թէ անոր հարստութեամբն իր կարօտութիւնը լեցրնելու համար՝ որ մը անոր մարդ խաւրեց որ իրեն դայ: Չիկրնար երեւակայուիլ թէ աս հրամանն ինչ մեծ ազդեցութիւն բրաւ պատանւոյն բուրր ազգականաց ու բազմաթիւ բարեկամաց վրայ. իրենց սիրելոյն գլուխը մեծ դժբախտութիւն մ'եկածի պէս՝ ամէնքը սկսան լալ ողբալ, եւ միաբան խրատ կու տային որ մէկ կերպով ինք զինքն աս վտանգաւոր պատահարէն զերծուցանէ: Իրօք ալ Թորոնթիկի օղուին եւ իր քովիներուն բնութեան ու հասարակօրէն բռնած ընթացքին նայելով՝ Մանուկի պէս մարդու մը մեծապէս վտանգաւոր բան էր անոնց հետ գործք տեսնելը. որովհետեւ եթէ կենացը մնաս մը չհասնէր նէ ալ, զոնէ բոլոր հարստութիւնը կորսնցրնելու վտանգի մէջ կրնար իյնալ: Անոր համար ալ իրաւունք ունէին իր ազգականներն ու ծանօթները վախնալու. բայց Մանուկ՝ որուն, ինչպէս ըսինք, նկարագիրն էր արիական համարձակութիւն ու աներկիւզութիւն, զիրենք կրցածին չափ հանդարտեցուց, եւ տուած խրատներուն հակառակ՝ ելաւ անմիջապէս զնաց, թէպէտ ինք ալ յայտնապէս զիտէր որ Թորոնթիկիին զինքը կանչե-

լուն զլխաւոր պատճառն իրմէ վաճառք կամ ստակ ուղեւ է :

Մեծ սիրով ու քաղցրութեամբ ընդունեցաւ զինքը Թրսէնիկին, եւ անոր վեհ կերպարանքն ու աներիտասարգական հասակին մէջ ցուցուցած խելքն ու արիութիւնը տեսնելով՝ վրան խիստ մեծ համարում ստացաւ : Քայց եւ այնպէս զինքը կանչելուն բուն պատճառն առջեւը դնելով՝ պահանջեց որ շուտ մը իրեն ծանրագին վաճառներ բերէ ու խել մը ստակ սայ : Մանուկ՝ որ արդէն իրեն ըլլալու առաջարկութիւնը կը կռահէր եւ ընելիքն յառաջուրնէ որոշած էր, առանց այլայլելու եւ ամենեւին առանց մտածելու՝ խոստացաւ որ հրամանը կատարէ : Միայն թէ իրբեւ պայման դրաւ որ ալ անկէ ետեւ ամենեւին ուրիշ մէկու մը ստրկի կողմանէ նեղութիւն չհասցընէ, որն որ Թրսէնիկի օղլուն սիրով յանձն առաւ : Այսպէսով Մանուկ իր սեպհական ինչքովն ազգայնոց ու քաղաքայնոց ինչքն ապահովցընելով, մեծ վաճառաշահ ըրածի պէս ուրախութեամբ քաղաք դարձաւ :

Մերձաւորներն ու ազգականները՝ որոնք անձկութեամբ իր դարձին կը սպասէին, թէպէտ եւ զինքն անվնաս տեսնելով՝ շատ ուրախացան, բայց երբ որ կանչուելուն պատճառն իմացան, մեծապէս խռովելով՝ սկսան ամէն ճիգն ի դորձ դնել, որպէս զի զինքը համոզեն որ չէ թէ միայն իրմէ ուզուած վաճառքն ու ստակը շտանի, հապա ժամ մը յառաջ ապահով տեղ մը պահուրտի, մանաւանդ թէ ոմանք կը յորդորէին որ ծածուկ քաղքէն ելէ եւ ուրիշ երկիր մը փախչի : Սակայն ինք իր միտքը դրածին մէջ հաստատուն կենայն աղէկ սեպեց, չէ թէ միայն անոր համար՝ վասն զի սուբանս մեծապէս օգտակար էր քաղաքացւոց, ազգին եւ

նոյն իսկ տէրութեան, հապա նաեւ անոր համար ալ որ խօսք տուած ըլլալով՝ խոստման դէմ ընելը իրեն պատուոյն ու պարտքին դէմ կը համարէր: Եւ որովհետեւ ամէն առթի մէջ իր մեծանձնական բնութիւնն ու առատաձեռնութիւնը կը ցուցնէր, եւ իրեն սկիզբ դրած էր ամենայն ինչ կատարեալ կերպով եւ չէ թէ կիսկատար ընել, անոր համար աս առթին մէջն ալ իր մէ ուղուածէն աւելի վաճառք ու ստակ առնելով՝ խոստացած ժամանակէն յառաջ տարաւ:

Պուցէ ինք Թրսէնիկիի օղլուն ալ կը տարակուսէր իր հրամանին կատարուելուն. բայց անշուշտ մտքէն ալ չէր անցընէր ասանկ շուտով եւ այսպիսի կերպով կատարուելիքը: Անոր համար աս հեղ զՄանուկ առջի անգամուրնէ աւելի սիրով ու պատուով ընդունեցաւ. եւ երբ որ բերած վաճառներուն աղէկութիւնն ու շատութիւնը եւ սարկին առատութիւնը տեսաւ, Մանուկին վրայ լաճներէն ու իր առաջին տեսութենէն վրան ստացած համարումն աւելի եւս մեծցաւ: Եւ չեմ գիտեր՝ աւելի զանիկա վարձատրելու, թէ այսպիսի առատաձեռն մարդու ձեռքով իր կարօտութիւնը լեցնելու մտքը, զինքն իր առաջին վաճառականն ու սեղանաւորն ըրաւ, խոստանալով որ ժամանակին՝ ստակն ամբողջ կը հատուցանէ:

Այսպէսով Մանուկ Թրսէնիկիի օղլուն քով մուտք ունեցաւ. եւ կամաց կամաց սկսաւ իրեն երթալ՝ չէ թէ միայն իբրեւ վաճառական՝ վաճառք տանելու, եւ իբրեւ սեղանաւոր՝ ստակ մատակարարելու համար, հապա նաեւ իբրեւ խորհրդական, մանաւանդ թէ իբրեւ բարեկամ ալ: Ղ ասն զի Թրսէնիկին՝ որչափ որ աւելի առիթ կ'ունենար զինքը տեսնելու եւ հետը խօսելու, այնչափ ալ վրան ունեցած համարումն ու յարգը կ'աւ-

ելնար. եւ անոր համար կ'ուզէր հետը յաճախ տեսնուիլ, շատ անգամ ծանրակշիռ դէպքերու մէջ կարծիքը կը հարցընէր եւ տուած խորհուրդներուն ճշդիւ կը հետեւէր: Շատ հեղ զինքը սեղանի կը հրաւիրէր. կ'առնէր քովը կը նստեցընէր եւ հետը խիստ ընտանեւորաւ ու մտերմութեամբ կը վարուէր: Ասով Մանուկին պատիւը քաղքին բոլոր բնակիչներուն առջեւն ալ շատ մեծցաւ, եւ ամէնքն իրեն յառաջուրնէ աւելի յարգութիւն կը ցուցընէին:

Ըստ կերպով խել Տ'ատեն անցաւ. եւ թէպէտ Մանուկ ստակ Տ'ալ չէր ընդունէր, եւ ոչ ալ դոնէ հեռուանց՝ ընդունելու յոյս մը կը տեսնէր, բայց թէ Թորոսէնիկիին եւ թէ անոր քովիներուն կարօտութիւնները լեցընելու եւ պահանջմունքնին դոհ ընելու համար՝ կը ստիպուէր անդադար վաճառք տանիլ ու ստակ տալ: Աստեսնելով՝ շատերը կը վախնային որ քիչ մը վերջը ալ չկրնալով դիմանալ՝ պիտի կործանի. բայց ինք ամենեւին ընթացքը չէր փոխեր. միշտ ալ խօսքն ասէր թէ՛ Նաւազդէն է որ ես մինակ կործանիմ եւ իմ կործանմամբս ազգայինքս ու քաղաքացիքս մնասէ զերծ ըլլան, քան թէ ուրիշները կորորնցընեն եւ ես անմիտս մնամ: Աերջապէս եկաւ ժամանակը՝ որուն մէջ իր ասմեծանճնական եղբայրսիրութիւնը վարձատրուեցաւ եւ ըրած մեծամեծ ծախուցը հատուցումն առաւելութեամբ իսկ ընդունեցաւ:



Թրեմիլէն օգլանն ինք ի լ յեռնայ -- քաղաք--նէն պարտ-- ի լն-
 ր--նի : -- Ման--ն լար ի լ քաղաք--նի : -- Ման--նն ի լն--
 քայ նիւք--նի--ննիքն -- իայք--նիլլ :

Ինչպէս որ անմիաբանութեամբ եւ անկարգու-
 թեամբ մեծամեծ իշխանութիւններ ու թագաւորու-
 թիւններ կ'իյնան կը կործանին, այսպէս ալ միաբանու-
 թեամբ ու կարգաւորութեամբ շատ պզտիկ ու շնչին
 ընկերութիւններ կը մեծնան եւ նշանաւոր գործողու-
 թիւններ կը կատարեն : Աս բանիս օրինակ կրնան ըլլալ
 Թրսէնիկլին եւ իր գլուխը ժողոված մարդիկը : Աս իր
 քիչուոր կողմնակիցներն ետեւէ ետեւ սաստիկ բազմա-
 ցան . եւ կամաց կամաց մէջերնին կարգ կանոն մտնելով
 եւ իրարու հետ աղէկ միաբան ու խորհրդով գործելով՝
 շատ յառաջ գացին եւ մեծ համարում ստացան : Ասոր
 մեծապէս օգնեց Մանուկ իր իմաստուն ու խոհեմական
 խորհուրդներովը, որոնցմով Թրսէնիկլին շատ բանի
 մտադիր կ'ընէր, ձեռք զարկածները գլուխ տանելու
 յարմար միջոցները կը սորվեցընէր, շատ բանի յառա-
 ջաակն ըլլալով՝ արգելքները կը վերցընէր, եւ ամէն
 բանէն վեր այն անկիրթ ու բիրտ մարդիկներուն մէջ
 խաղաղութիւնն ու միաբանութիւնը հաստատուն կը
 պահէր : Աերջպպէս Թրսէնիկլի օղունն այնչափ զօրա-
 ցաւ՝ որ բարձրագոյն Գուռը պատշաճ սեպեց զինքն ան
 աստիճանին մէջ ի պաշտօնէ հաստատել՝ զորն որ անիկա
 արդէն իրմէ առած էր եւ իրօք ի գործ կը դնէր . այս

իրքն՝ զինքը Ռուշճուկի փաշա անուանեց : Այսպէսով
 իր անձնական իշխանութեան ու զօրութեան վրայ՝ աս-
 տիճանին ու պաշտօնին զօրութիւնն ալ աւելնալով՝
 սկսաւ աւելի եւս մեծնալ, անուն հանել եւ բազմութիւ
 կողմնակիցներ ժողովել. անանկ որ մօտաւոր տեղերու
 փաշաներն ու կառավարները իրեն հետ մեծ յարգու-
 թեամբ եւ պատուով վարուելէն զատ՝ իբրեւ թէ իրենց
 պարծանք մը կը սեպէին անոր պաշտպանութեան ներ-
 քէն ըլլալը եւ անոր կողմնակից սեպուիլը : Նոյն իսկ
 տէրութիւնն ալ զինքը քանի մը անգամ ծանրակշիռ
 զործքերու եւ գլխաւոր ապստամբները զսպելու զործ-
 ածելով՝ անոր թէ հաւատարմութեան եւ թէ քաջու-
 թեան փորձը տեսաւ :

Աս բաներուն ամենէն առջի հետեւութիւնն ան ե-
 ղաւ որ յառաջագոյն ըստ մեծի մասին կարօտութեան
 մէջ գտնուող եւ գրեթէ յափշտակութեամբ ապրող
 մարդը՝ անկէ ետեւ տէրութենէն առած առատ թոշա-
 կով եւ ամէն կողմանէ մեծէն ու պղտիկէն ընդունած
 մեծագին պարգեւներով՝ քիչ ատենուան մէջ խիստ
 մեծ հարստութեան հասաւ : Այսպէսով կրցաւ Մա-
 նուկին մինչեւ նոյն ատեն իրեն բերած բոլոր վաճառ-
 ներուն գինն ու մատակարարած ստակն ամբողջ հա-
 տուցանել : Եւ իբրեւ թէ իրմէ ընդունած բարիքներուն
 հատուցում մ'ընելու համար՝ զինքն իբրեւ իր առաջին
 վաճառականը, իբրեւ իր գլխաւոր սեղանաւորը զործ-
 ածելէն զատ՝ միանգամայն իբրեւ առաջին խորհրդ-
 դական, իբրեւ ամենէն մտերիմ եւ ամենէն հաւատա-
 րիմ բարեկամ, մանաւանդ թէ իբրեւ սիրելի եղբայր
 կամ որդի կը նկատէր. այնպէս որ գրեթէ քովէն չէր
 զատեր ու իրեն խորհուրդ չհարցուցած՝ ամենեւին բա-
 նի մը ձեռք չէր զարներ եւ որոշում մը չէր ըներ. որով-

33686
 22803



Հետեւ մինչեւ նոյն ժամանակ շատ անգամ առիթ ունեցած էր թէ անոր հանձարն ու խոհեմութիւնը եւ թէ անյողողող հաւատարմութիւնն իմանալու: Քերանն իբրեւ առակ բրած էր ամէն առթի մէջ բուլ: Մէյ մը Մանուկին կարծիքը հարցընէր, նայինք Մանուկ ինչ կը զրուցէ: Ապրծես թէ որչափ որ իշխանութիւնն ու զօրութիւնը կ'աւելնար, այնչափ ալ Մանուկին վրայ ունեցած տէրն ու համարումը կ'ածէր. եւ իրաւունք ալ ունէր, վասն զի փորձով կը տեսնէր որ անիկա իր զօրութեան ու իշխանութեան ամէնուն մեծուպէս օգնականն ու գործակից կ'ըլլայ:

Առաջնուկ քաղաքն աս բաներով քիչ տեսնուան մէջ խիստ շէնցաւ ու պայծառացաւ, եւ Մանուկին պատճառուն ու միջնորդութեամբը առանձինն մեր ազգայինը շատ յառաջ գացին: Վասն զի աս երեւելի Անձր իր ուրիշ գովելի ու շքնաղ հանդամանաց վրայ մեծ հայրենասիրութիւն մ'ալ կ'աւելցընէր, որով ամէն ատեն եւ ամէն առթի մէջ իր ազգակիցներուն ձեռք կը բռնէր եւ ամենայն եղանակաւ զիրենք յառաջ տանելու ետեւէ կ'իյնար, որն որ փաշային քով ունեցած մեծ համարմամբն ու աստիճանաւր գիւրութեամբ կրնար գլուխ տանիլ: Բայց շունէր ան կոյր նախանձախնդրութիւնն ու շափէ դուրս ազգայնական անկարգ խտրը՝ որն որ ամենեւին չ'ուզէր որ ուրիշ ազգերուն ալ ըստ պատշաճի եւ ըստ տեղոյն բարիք ըլլաի. հապա իր քսակն աստիճանաբար եւ համեմատութեամբ՝ ամէն ազգաց կարօտեալներուն բաց էր, իր պաշտպանութիւնն ալ՝ բոլորին պատրաստ: Ասանկով շատերուն մեծամեծ բարիքներ ընելէն զատ՝ շատոնք ալ մեծ վտանգներէ եւ մահուրնէ իսկ ազատեց: Եւ թէպէտ ինք այս ամենայն՝ միայն իր ազնուականն ու բարեմտիւր

բնութենէ շարժեալ կ'ընէր, եւ շէ թէ փոխարէն հա-
տուցում Տ' ընդունելու մտօք, սակայն Անիկա՝ որն որ
բաւժ է թէ Աբանի ողորմածաց, վասն զի իրենք ալ
ողորմութիւն պիտի գտնեն, առ խօսքիս Տշմարտու-
թիւնն իր վրայ ալ ցուցուց բացայայտ ու շօշափելի
կերպով մը. ինչպէս որ իր տեղը պիտի տեսնենք :

Յայտնի է որ առ կերպով վարուելով՝ Մանուկ ա-
մենան, թէ ազգայնոց եւ թէ օտարազգեաց վերջին
աստիճանի սիրելի եւ յարգելի էր : Բայց չկրցաւ բոլոր-
ովին ազատ ըլլալ նախանձէն, որն որ առաքինութեան
ու պատուոյն անմեկին ստուերն է եւ ամէն ատեն անոնց
ետեւէն կ'երթայ : Այնչափ զինքը յարգողներուն ու
սիրողներուն մէջ՝ շէին պակսեր նաեւ թշնամիք եւ իր
փառացը նախանձօտներ, մանաւանդ Տաճկաց մէջէն,
որոնք չկրնալով տանիլ որ քրիստոնեաց մը ան արտի-
ճանի պատուոյ հասնի եւ իրենցմէ վեր սեպուի, ամէն
կերպով կը ջանային զինքը փաշային աչքէն հանել, եւ
ամենեւին առիթ մը ձեռքէ շէին փախցըներ իրեն վնաս
հասցընելու : Շատ անգամ մինչեւ իր կենացը դաւ
գործեցին : Բայց իրենց բոլոր ջանքն ու դարանքը պա-
րսպ ելաւ. եւ քանի մը հեղ անոր վնաս հասցընելու
ետեւէ ինկած ատեննին՝ աւելի եւս պատիւն ու համա-
րումը մեծցուցին եւ իրենք խայտառակեցան : Աս դէպ-
քերէն մէկը կ'ուզենք հաստեղս ընդարձակ պատմել,
որմէ թէ Թրսէնիկի օղուին իր վրայ ունեցած սերն ու
համարումը եւ թէ իր արիական համարձակութիւնն ու
քաջասրտութիւնը յայտնի կ'երեւայ :

Ինչպէս առաջները զրուցած ենք՝ Մանուկ Գանուբ
գետին անդիի կողմը Ալալաբիայի մէջ քանի մը կա-
լուածներ ունենալով, երբեմն ան կողմերը կ'երթար՝
անձամբ ամէն բան նայելու համար : Արդ անգամ մը

դարձեալ հոն երթալու հարկաւորութիւն ունեցաւ եւ սովորականէն աւելի երկայն ժամանակ մնաց¹։ Թշնամիներն աս բանս իրեն դէմ ունեցած ատելութիւննին յազեցրնելու յարմար սեպեցին, եւ մէջերնին խօսք մէկ ընելով՝ սկսան ետեւէ ետեւ առանձին առանձին փաշային երթալ ու վրան զանազան զրպարտութիւններ ընել, որոնցմով կ'ուզէին ցուցրնել թէ անիկա Օսմանեան տէրութեան թշնամի եւ Ռուսաց հետ ծածուկ բարեկամ ու դաշնակից է։ Խարդախ ու նենգաւոր բնութիւն ունի, կ'ըտէին, եւ նոյն իսկ քեզի ալ ցուցուցած սէրն ու բարեկամութիւնը՝ միայն երեսանց է, սրտանց քեզի ալ միաստիկ հասցրնելու կը ջանայ։ Աս եւ ասոր նման հազարումէկ ուրիշ զրպարտութիւններ ընելէն ետեւ՝ կը հետեւեցրնէին որ մահուան արժանի է. եւ եւ թէ դուն զինքը չես մեռցրներ նէ, կ'ըտէին, թէ դուն թէ մենք միշտ վտանգի մէջ կ'ըլլանք։ Այնչափ խօսեցան, այնչափ ըրին, մինչեւ կարծելով որ Թրսէնիկլի օղլուն բսածններնուն վրայ համոզուեցաւ, սկսան ուրախանալ որ ալ իրենց վախճանին հասան եւ թշնամիներն անշուշտ պիտի կործանեն։

¹ Այն կարծեաց մէջ կը գտնուէին նաեւ Թրսէնիկլիին քովն եզոզ այն անձինք՝ որոնք Մանուկին սրտանց

¹ Արեւի է որ աս դէպքն իր ընկերօջը մահուանէն անմիջապէս վերջը պատահած ըլլայ, որն որ ինք տարի գրեթէ միշտ ցաւազարտութիւն քաշելէն ետեւ՝ վերջապէս առանց զուակ թող տալու՝ մեռաւ, իր ամուսինն անհնարին սգոյ մէջ ձգելով, որմէ քիչ մը փոփոխելու եւ միանգամայն իր վշտաց տեսարանէն քիչ մը տտեն հեռու կենալու համար՝ Մանուկ Պէյ երկընկեկ Ալալաքիա մնացած կրնայ ըլլալ։ Եթէ ենթադրութիւննիս ստոյգ է նէ, աս բանս շուրջ 1795ին սկիզբները պատահած պիտ'որ ըլլայ։

բարեկամ էին : Անոր համար իրենցմէ մէկը՝ որն որ արգէն յառաջագոյն անոր կենացը գործուած դարաններուն ալ տեղեակ էր, միտքը դնելով որ ալ աս անգամ կարող պիտի չըլայ ինք զինքը ճողոպրել, ուղեց զանկա կերպով մը վերահաս վտանգէն ազատել. ուստի գաղտ նամակ մը գրելով՝ եղածները բոլոր խնայրնելէն ետեւ՝ խրատ տուաւ որ գլխոյն ճարը հոգայ եւ Ալալաքիայէն ետ չգառնայ, մանաւանդ թէ անկից ալ ելէ ուրիշ տէրութեան մը երկիր փախչի : Մանուկ նոյն թուղթն առնելով՝ շատ այլայլեցաւ եւ իր թշնամեաց շարութեան վրայ խիստ մեծ ցաւ ունեցաւ. բայց իր անմեղութեան եւ Թրսէնիկի օղլուին արդարատիրութեան վրայ վստահ ըլլալով՝ իր բարեկամին խրատին բոլորովին հակառակն ի գործ դրաւ : Անմիջապէս առանց ատեն կորսընցընելու, կառք հեծնելով՝ դէպ ի Ռուշտուկ ճամբայ ելաւ :

Ինք այսպէս շտապաւ մօտիկցած ատեն՝ իր թշնամիները, որոնք ըստ մեծի մասին փաշային քովի մարդիկներուն ամենէն երեւելիներն եւ անոր խորհրդականքն էին, հետը մէկտեղ նստած՝ խորհուրդ կ'ընէին անոր պալատին մէկ սրահին մէջ, որուն պատուհանները Գանուբ գետին վրայ կը նայէին : Թրսէնիկի օղլուն պատուհանին առջեւը նստած ատեն՝ գետին մէկալ դին Ալալաքիայի կողմը հեռուէն սաստիկ փոշի մը կը տեսնէ, որն որ մինչեւ ամպերը կը բարձրանար : Ասոր վրայ խիստ զարմանալով՝ քովիներուն ալ կ'իմացընէ, ըսելով թէ Անշուշտ սուրհանգակ մը պիտ'որ ըլլայ, որն որ ծանրակշիռ լուր մը կը բերէ : Երթալով հետաքրքրութիւնն աւելնալով՝ դիտակը ձեռքն առած՝ դէպ ի ան կողմը կը նայէր, ուսկից փոշին ասդին կը մօտենար : Գիշ մը վերջը փոշոյ մրրկին մէջէն կառք մը կը տես-

նախ, որ սրբնութաց հովի շուտութեամբ յառաջանալով՝
 գետեզքը կը մերձենայ, եւ հոն գտնուած մեծ նաւի մը
 մէջ կը մտնէ, որն որ կը սկսի գէպ ի Ռուշտուկ գալ:
 Թրսէնիկլի օղուն՝ որ անշարժ ու մտադրութեամբ կը
 նայէր, մէկէն իր խորհրդականներուն կը դառնայ եւ
 ուրախութեամբ՝ Տեւորք, կ'ըսէ, եկողը Մանուկն է:
 Աս լսելով՝ ամէնքը կը շփոթին, իրար կ'անցնին, կը
 սկսին մէկմէկու երես նայիլ, եւ ոչ ոք կը համարձակի
 բերան բանալ ու խօսք մ'ըսել:

Ընտր գեռ նոյն ապշութեան մէջ եղած տատն՝
 նաւը գետին ասդիի եզերքը կը հասնի, Մանուկ շուտ
 մը դուրս կ'ելլէ, ընթացքը գէպ ի պալատ կ'ուղղէ եւ
 կու գայ շիպ շիտակ խորհրդոյ սրահէն ներս կը մտնէ:
 Փաշան զինքը տեսնելով՝ արտաբոյ կարգի կ'ուրախա-
 նայ, իբրեւ մէկ մարդ մը՝ որն որ մտքին մէջ ունեցած
 եւ յայտնելու չհամարձակած կարծիքին հաստատուն
 բլայուն վրայ ապահովութիւն կը ստանայ. ուստի եւ
 զինքը սովորականէն աւելի սիրով ու պատուով ընդու-
 նելով՝ կ'ուզէ որ դայ իր քովը նստի: Մանուկ յանձն
 չ'առնէր, այլ կ'ուզէ վարը (էրէտն Բնդէրէին վրայ)
 նստիլ. բայց Թրսէնիկլին կը բռնադատէ քովը կը նըս-
 տեցընէ եւ կը հրամայէ որ սուրճ ու միքաշ բերեն:
 Սակայն Մանուկ՝ որուն վեհ կերպարանաց վրայ խոր
 արտմութիւն մը նկարուած էր, առանց ուրիշ խօսք
 մ'ըսելու՝ փաշային կ'աղաչէ որ կարող բլայ հետը քիչ
 մը ատեն առանձին խօսիլ. փաշան խնդիրքը կ'ընդունի
 եւ շուտ մը սրահին մէջիններուն կը հրամայէ որ դուրս
 ելլեն: Երբոր առանձին կը մնան, Մանուկ բերանը բա-
 նալով՝ կը սկսի իր արիական համարձակութեամբն այս-
 պէս խօսիլ. Տէր, դուն ինքնին գիտես՝ որչափ ժամա-
 նակ է որ ես ամենայն հաւատարմութեամբ ու եռան-

դեամբ քեզի կը ծառայեմ. կը ճանչնաս որ քովի բոլոր մարդիկներէդ աւելի՛ ես քու յաջողութեանդ եւ պայծառութեանդ համար ամէն կերպով կ'աշխատիմ ու կը ճգնիմ. ծանօթ է քեզի որ ինչպէս գրեթէ ինքզինքս եւ իմ անձնական շահս մոռցած՝ դիշեր ցորեկ բոլոր մտածմունքս ան է որ քու շահդ յառաջ տանիմ: Այս ամենայն ընելէն ետեւ՝ կը կարծէի թէ իրաւունք ունենամ յուսալու որ դուն ինծի չէ թէ միայն բարբար տէր, հապանակեւ օգնական ու պաշտպան ըլլաս:

Թորոնիկիին աս խօսքերը մտադրութեամբ մտիկ ընելէն ետեւ՝ բոլոր բռածներուն իրաւունք կու տայ, եւ քաղցրութեամբ մը զինքը յանդիմանելով՝ կը հարցընէ թէ երբեք իմ վարմունքովս քեզի առիթ մը տուած եմ կարծելու որ վրադ ուրիշ կերպ համարում ունիմ:

Է նորհակալ կ'ըլլայ Մանուկ, եւ ետքը համարձակութեամբ խօսքն այսպէս յառաջ կը տանի. Ինչու ուրեմն իմ թշնամիներու յայտնի զրգարտութիւնները մտիկ կ'ընես. ինչու ականջ կը կախես անանկ մարդիկներու՝ որոնց ինչպիսի բնութիւն ունենալը միայն իրենց ինծի դէմ ըրած մեծ ապերախտութենէն կրնաս իմանալ: Գիտես արդէն որ ան ինծի դէմ զրգարտութիւն ընողներէն շատերը ինծմէ, կամ լաւ եւս՝ քեզմէ իմ միջնորդութեամբս, որչափ բարիքներ ընդունած են. քանիները խիստ պատիժներէ եւ մահուանէ իսկ ազատած եմ, եւ իրենք հիմակ իմ կենացս դարանակալ կ'ըլլան:

Փաշան ըսելէն ետեւ որ Ես քու վրադ ունեցած համարումս անանկ խօսքերով չեմ փոխած ու երբեք չեմ փոխեր, եւ միայն մտքերնին իմանալու եւ վրանին ծիծաղելու համար թող տուի որ խօսին, աս ալ աւելցուց. Ապահով եղիր որ մինչեւ կենացս վերջին բոպէն՝

քեզի ունեցած սէրս ու համարումս շինուազիր. եւ որպէս զի նշան մ'ունենաս որ զըպարտիչներէդ սրչափ վեր կը բռնեմ զքեզ, հիմա զամէնքն ալ ներս կը կանչեմ, իսկ դուն իւրաքանչիւրոց բրած բարիքներդ եւ ինծմէ իրենց համար ընդունած շնորհքներդ յիշեցընելէն ու զիրենք յանդիմանելէն ետեւ՝ պէտք է որ երեսնին թքնես :

Մանուկ ամենայն զօրութեամբ դէմ կը դնէր եւ ամենեւին չէր ուզեր յանձն առնուլ աս հրամանը կատարել, ըսելով որ Քեզմէ ընդունած ապահովութիւնս՝ ինծի բաւականէն աւելի հատուցում է: Բայց Թրսէնիկին՝ որն որ մէկ ըսած խօսքը ետ առնել չէր գիտեր, մինչեւ մահ սպառնալով՝ պահանջեց որ պատուէրը կատարէ: Եւ շուտ մը զամէնքը ներս կանչելով՝ հրամայեց որ ըսածն ի գործ դնէ: Աերջին հարկէն ստիպուելով՝ սկսաւ Մանուկ ամէն մէկուն իրմէ կամ իր միջնորդութեամբն ընդունած բարիքներն երեսնին զարնել. եւ զամէնքը լմընցընելէն ետեւ՝ գետինը թքնել մը ձեւացուց: Ասոր վրայ փաշան արտաքոյ կարգի զուարճանալով՝ բարձրաձայն ծիծաղեցաւ, եւ Աեցցես Մանուկ ըսելով՝ ամենուն սուրճ ու միւրաշ բերել տուաւ:



Թրսէնիկէն իւ Բուֆի Իւ էրին իւ յաղորտե Ալիտոր Մանուս
 Մանուս : — Մանուսի նոր Բուսիւն ուղիւն աւ Բէժ հաճա-
 բան իւ սորուս : — Պէյսութեան ուղիւն իւ լըսուի :

ՄԱՆՈՒԿԻՆ Թշնամիները տեսնելով որ անոր գէժ
 բան մը շէն կրնար ընել, մանաւանդ թէ անոր մնաս
 հասցընելու ջանալով իրենք կը խայտառակին, եւ դըւ-
 խաւորաբար վերջին գէպքը խելքերնին զլուխնին բե-
 րած ըլլալով, թէպէտ ասելու թիւննին անով աւելի
 սաստկացաւ եւ ներքուստ աղջիկէն աւելի իրեն գէժ
 աղբայ կը կրճտէին, ի վերայ այսր ամենայնի գէժ ար-
 տաբուստ հանդարտեցան եւ զինքը զոնէ դրսանց ամէն
 կերպով կը պատուէին ու կը մեծարէին : Այսպէսով
 Մանուկ իր թշնամիներէն զերժանելով եւ փաշային
 սերն ու համարուժը լիով վայելելով՝ օրրստօրէ աւելի
 կը մեծնար՝ մինչեւ Թրսէնիկիին մահը :

Աս մարդս, ինչպէս որ մեր պատմութեան սկիզբն
 ըսինք, մեծանձնութենէ ու բարբարոսութենէ խառն
 բնութիւն մ'ունենալով, շատերն իրեն թշնամի բրած
 էր, շէ թէ միայն ուամիկ եւ ստորին աստիճանի մար-
 դիկներէն, հապա նաեւ նոյն իսկ իր քովն եզոզ մե-
 ծամեծներուն եւ ամէն օր իր շնորհքը վայելաղնեբուն
 մէջէն : Միայն անցեալ գլխոյն մէջ պատմուած գէպ-
 քին վերջին մասը՝ որն որ իր բնութիւնն աղէկ կը ցու-
 ցընէ, բաւական էր իր քովիներուն սիրան իրմէ հե-
 ռացընելու, եւ նմանօրինակ զիպուածներ խիստ յա-

Ճախ կը պատահէին : Եւ թէպէտ ինք իր զօրութեան ու զլուխը ժողոված զօրքին անձնանուէր հաւատարմութեան վրայ վտահելով՝ ամենեւին մէկէ մը չէր վախնար, բայց ոչ իր սաստիկ զօրութիւնը եւ ոչ իր մարդիկներուն տիրասիրութիւնն ու հաւատարմութիւնը կրցան զինքը մահուրէ ազատել : Օր մը բաց դաշտի վրայ իր մեծամեծներովը մէկտեղ կերակուր ուտելու տուն՝ հեռուէն նետուած երէք հրացանի զնդակներէ զարնուելով՝ անմիջապէս մեռաւ, 1804ին : Ստոյգ է՝ չիկրնար հաստատութեամբ ըսուիլ որ աս սպանութիւնն իր քովիններն ընել տուած ըլլան. բայց մէկալ կողմանէ ալ անոնցմէ դոնէ ոմանց մասնակից ու խորհրդակից չըլլալուն ցոյց մը չկայ : Ընդհանրապէս զինքը մեռցրնողներուն սով ու ինչպիսի մարդիկ ըլլալը՝ նոյն ատեններն անժանօթ մնաց, եւ զիրենք զանելու համար եղած ջանքն անպտուղ ելաւ :

Թրսէնիկլիին մահուամբը Մանուկ սաստիկ վտանգաւոր վիճակի մը մէջ մտաւ : Ստուգիւ թէ որ իր անձնական արժանաւորութեան, մեռնողին քով ունեցած աստիճանին եւ ամենուն առջեւը վայելած յարգութեան ու համարման միտ դրուելու ըլլար, պէտք էր որ ինք անոր տեղն անցնէր. բայց իր քրիստոնէայ ըլլալուն համար՝ հարկ էր որ մէկգի ձգուէր եւ ուրիշ մէկն ընտրուէր : Արդ թէ որ նոյն պատիւն ընդունողը իր թշնամիներէն մէկն ըլլար, անշուշտ իր բանը բուսած էր. որովհետեւ թէպէտ նոր փաշան՝ հասած աստիճանովն անոր վրայ ալ նախանձելու առիթ չունենալով եւ մանաւանդ անոր օգնութեան ու խորհրդոցը կարօտելով՝ ինք իր կողմանէ անոր վնաս մը հասցրնել չուզէր ալ՝ նէ, ի վերայ այսօր ամենայնի անտարակոյս այնչափ հաստատութիւն չէր ունենար՝ որ անոր թշնա-

միներուն ամէն օր խօսած զըպարտութեանց ու զինքը կորսընցընելու համար բրած ճգանց դէմ դնէր եւ զՄանուկ իր շնորհաց մէջ պահէր : Բայց Աստուծոյ յաջողելովը Թրսէնիկլի օղլուին անանկ յաջորդ մը գրուեցաւ՝ որն օր անօր քովի մարդիկներուն մէջ եղող Մանուկին սակաւաթիւ բարեկամներէն մէկն էր, եւ գուցէ ալ վրան իր նախորդէն աւելի սէր ու համարում ունէր :

Աս յաջորդն էր Ալէմտար կամ Պայրազտար (Գրօշակիր) Մուստաֆա փաշան : — Ասիկա տասն'ութերորդ դարուն մէջերը Ռասկրատ կամ Հազարկարտ պղտիկ քաղքին մէջ աղքատ ու գեղացի ծնողացմէ աշխարհք եկած էր : Մուստաֆա խել մը ժամանակ ծնողացը քով գեղջկական գործքերու զբաղելէն ետեւ, ան կեանքէն ձանձրանալով եւ ներսէն՝ աւելի ազնուական վիճակի մը բաղձանք զգալով, ժողոված քիչ մը ստրկովը սկսաւ ձիու վաճառականութիւն ընել : Նոյն գործքին մէջ ալ քիչ մը ատեն յառաջ երթալէն ետեւ՝ վերջապէս զինուորութեան կարգ մտաւ : Բնութեամբ շատ արիասիրտ ու քաջ եւ ընդհանրապէս մեծ ձրից տէր ըլլալով, եւ շատ առիթներու մէջ իր ձիրքերն ու քաջութիւնը ցուցընելով, շուտ մը խիստ յառաջացաւ, եւ հասած աստիճաններէն զատ՝ ընդունեցաւ նաեւ Ալէմտար կամ Պայրազտար մականունը, որովհետեւ պատերազմի մէջ թշնամիներուն ձեռքէն դրօշ մ'առած էր, եւ թէպէտ ընդունած վերքերէն արիւնը հեղեղի պէս կը վաղէր եւ թշնամեաց բազմութիւնը չորս կողմը պաշարած՝ իրեն գէմ կը կռուէին, ի վերայ այսր ամենայնի ինք առիւծի պէս յուսահատաբար պատերազմելով՝ ամենուն գէմ դրաւ եւ աւարած դրօշն իր բանակը հասցուց : Աս ու ասոր նման

գործողութիւններով Թրսէնիկէին ալ սաստիկ սիրելի եղաւ, որն որ զինքը քովն առաւ եւ հետը մէկտեղ կը տանէր իր բրած ամէն պատերազմներուն, որոնց մէջ անիկայ երթալով աւելի կը ցուցնէր իր քաջութիւնն ու պատերազմական հանճարը, մանաւանդ Փաղուան օղուին դէմ եղած պատերազմին մէջ: — Արդ աս մարդն եղաւ՝ որ իր այսչափ արդեանց համար՝ Թրսէնիկէին յաջորդ ընտրուեցաւ:

Արդէն իր նախորդին օրինակն աչքին առջեւն ունենալով եւ անոր առաջնորդութեամբն աղէկ կրթութեամբ ըլլալով, Մուստաֆա փաշան աս իր նոր աստիճանին հասնելուն պէս՝ աւելի մեծ գործողութիւններու ձեռք զարկաւ ու գլուխ հանեց, տէրութեան ալ մեծամեծ ծառայութիւններ բրաւ: Եւրոպական տէրութեանց զանազան կարգերուն փոքր ի շատէ տեղեակ ըլլալով, ուղեց իր մարդիկները մանաւանդ զօրքերը ետեւէ ետեւ նոյն կերպով կարգաւորել: Իր հրամանին տակ եղող զինուորները շատցուց, կամաց կամաց մէջերնին զինուորական հրահանգ խոթեց, եւ ամէն եզանակաւ կը ջանար որ զիրենք Եւրոպայի կարգաւորեալ զօրաց պէս՝ կրթեալ զօրք ընէ. անուննին ալ «էյմէն» դրաւ: Ստոյգ է՝ նոյն զօրքերը քիչուոր, ու Եւրոպայի կրթեալ զօրաց համեմատութեամբ՝ դեռ անկատար էին, բայց ասանկ սկզբնաւորութիւն մ՝ ընելն ալ իրեն մեծ պարծանք է: Նոյնպէս իր քովի մեծերն ու խորհրդականներն ալ աղէկ կարգի դրաւ, եւ զանազան աստիճաններու բաժներով՝ ամէն մէկուն հանճարին ու կարգին համաձայն՝ այլեւայլ պաշտօններ կու տար, եւ ինք վերին տեսչութիւն միայն ընելով՝ աղէկ կը հսկէր որ ամէն մարդ իր պարտքը ճշդիւ կատարէ: Ինչպէս որ աստատձեռն էր ամենափոքր արդիւնքն իսկ ըստ ար-

ժանեղն վարձատրելու, նոյնպէս եւս խիստ էր թեթեւ զանցառութիւնն ալ պատժելու: Բայց աս ամէն գործողութեանց մէջ միշտ բարձրագոյն Գրան հպատակուհնազանդ էր. շատ հեղ իր զօրացը գլուխն անցած՝ տէրութեան պատերազմները մղեց եւ քանի մը անգամ մեծ յաղթութիւններ բրաւ:

Մուստաֆա փաշային բրած կարգադրութեանց մէջ իրեն գլխաւոր օգնութիւն բնողն ու խորհուրդ տուողը, մանաւանդ թէ շատ բաներն անոր միտքը ձգողը՝ Մանուկն էր. անոր համար փաշան ալ զինքն իր աջ բազկին պէս կը սիրէր ու կը յարգէր, եւ չէ թէ միայն իր առաջին խորհրդականն ու գլխաւոր պաշտօնեան բրած էր, եւ անոր համար իրեն շահարցուցած՝ բան մը չէր բներ, հասպա նաեւ իրրեւ իր երկրորդականն ու տեղակալը գրած էր եւ ամենուն հրամանատար: Նոյն ծանր պաշտօնին մէջ ալ Մանուկ իր խոհականութեամբն ու աշալթութեամբը շատ կ'օգնէր Մուստաֆա փաշային բարձր աստիճանին բռները թեթեւցրնելու: Աս ամէն իրմէ բնդունած մեծամեծ ծառայութիւնները վարձատրելու համար՝ նոյն ատենները փաշան Գոնէն խրնդրեց եւ բնդունեցաւ իրեն համար Պէյութեան պառիս, որն որ ինչպէս արդէն յայտնի է, Օսմանեան տէրութեան մէջ քրիստոնէի մը տրուած ամենէն մեծ պատուոյ աստիճանն է:

Բրած կարգաւորութիւններովը խիստ շատ մեծցաւ, զօրացաւ ու հարստացաւ Մուստաֆա փաշան, եւ կամաց կամաց սկսաւ աւելի ստեպ խորհրդակցիլ ու աւելի անձկութեամբ կապուիլ մերձաւոր փաշաներուն հետ, որոնք՝ ինչպէս յառաջագոյն բրած ենք, արդէն թրսէնիկիլիին հետ ալ հաղորդակցութեան մէջ էին: Եւ որպէս զի իր բրած նոր կարգադրութիւններն աւելի

չուտով եւ աւելի աղէկ յառաջ երթան եւ ուրիշ տեղեր ալ տարածուին, երբեմն երբեմն բոլոր իր դաշնակից փաշաները քովը կանչելով՝ անոնց հետ խորհուրդ կ'ընէր: Աս ամէն խորհուրդներուն ալ հոգին էր Մանուկ Պէյ: Բայց՝ ինչպէս որ քիչ մը վերը զրուցեցինք, մէջերնին ամենեւին տէրութեան միասակար կամ ապրտամբական հոգի չկար, հապա մանաւանդ անոր հակառակ՝ միակ վասճաննին էր տէրութեան յառաջադիմութիւնն ու պայծառութիւնը. անոր համար ալ Գրան հետ միաբան եւ կամակից էին եւ ստէպ Աստանդնուպոլոս պաշտօնէից հետ կը թղթակցէին: Արդէն Մուստաֆա փաշային եւ իր կողմնակիցներուն ինչ աստիճանի հաւատարիմ ըլլալը յայտնի կ'երեւայ ասկից ետքը պատմելիքներնէս:



Սուրբ Սեղիմի ղարթիւնները, քահանայապետը, երկուսն էլ հանդիմանում են իրենց հանդիմանողներին: — Երբեք չեն հարգում իրենց: — Երբեք չեն հարգում իրենց: — Սուրբ Սեղիմի ղարթիւնները, Սուրբ Սեղիմի ղարթիւնները, Սուրբ Սեղիմի ղարթիւնները:

Սուրբ պատմութեան ամբողջութիւնը կը պահանջէ որ հաստեղս Սուրբ Սեղիմի եւ իր թագաւորութեան ժամանակին վրայ խօսինք: Բայց բուն նիւթերնէս շատ չհեռանալու համար՝ մէկդի կը ձգենք իր բրած պատերազմները, Եւրոպայի նոյն ատենուան շփոթութեանց՝ Տաճկաստանի վրայ ունեցած ազդեցութիւնը, եւ տէրութեան մէջ պատահած ան զէպքերը՝ որոնք թէպէտ ըստ ինքեան նշանաւոր բաներ են, բայց մեր պատմութեան հետ հարկաւոր կապակցութիւն չունին. եւ միայն մեզի պէտք եղած նիւթերուն վրայ կը ծառենք:

Աս մեծանուն ինքնակալը՝ որն որ խելացութեամբը, իմաստուն կառավարութեամբը, բրած մեծամեծ նորագութիւններովն ու իր ժողովրդեան վրայ ունեցած սիրովը՝ Օսմանեան պետութեան ամենէն երեւելի թագաւորներուն կարգն անցնելու արժանի է, Սուրբ Մուստաֆա Գլին միակ որդին էր, եւ ծնաւ 1761ին վերջը կամ 1762ին սկիզբը: Սեղիմ թագաւորին առջինեկ որդին ըլլալով, իր ծնունդը՝ բոլոր տէրութեան մէջ մեծ ուրախութիւն պատճառեց եւ շքեղ հանդէսներով տօնուեցաւ: Իր հայրը 1774ին մեռնելով՝ ըստ կարգի անոր յաջորդեց կրտսեր եղբայրը Սուրբ Մուստաֆա:

իւլ-Համիտ. եւ թէպէտ Սէլիմ՝ սովորութեան Համաձայն՝ պալատին փակարանին մէջ իր պահուէր, բայց Տօրեղբայրը վրան սաստիկ սէր ունենալով՝ իրեն մեծ ազատութիւն կու տար: Սէլիմ երիտասարդութեան ատեն ծանր Հիւանդութիւն մը կրեց, որուն վրայ բոլոր տէրութիւնը տխրութեան մէջ ինկաւ, որովհետեւ Սուլդան Ապտիւլ-Համիտ զեռ զաւակ ունեցած չըլլալով՝ ինք թագաւորութեան միակ ժառանգն էր: Ասկից կրնայ մակարերուիլ իր առողջանալուն պատճառած ուրախութիւնը: Բայց նոյն Հիւանդութիւնն իրեն մեծ օգուտ բրաւ եւ տէրութեան ապագայ վիճակին վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ. ինչու որ Սէլիմ ասով առիթ ունեցաւ Եւրոպացի բժիշկներու ծանօթանալու, եւ անոնցմէ զանազան օգտակար խորհուրդներ ու եւրոպական կարգերու վրայ այլեւայլ տեղեկութիւններ առնելու:

Այսպէս թէ Հիւանդութեան ատեն եւ թէ ետքը նոյն բժշկաց հետ տեսնուելով, եւ միանգամայն կարգալով իր հօրն իրեն համար գրով թող տուած խրատները, (որոնցմով աս զժբախտութեան մէջ կրթուած թագաւորը՝ իր ատենուան երեւելի դէպքերը միշտակեղէն ետեւ՝ տէրութեան մէջ մտած զանազան անկարգութիւններն ու բլլալու նորոգութիւնները որդւոյն առջեւ կը դնէր.) կամաց կամաց կը կրթուէր, եւ երթալով աւելի հաստատութեամբ մտքին մէջ կը դնէր, որ օր մը հօրը գահն անցնի նէ՛ անոր օրինակին եւ զբաժ խրատներուն հետեւելով՝ տէրութիւնը նորոգէ ու կարգաւորէ: Այսպիսի գովելի բաղձանքները զլուխ հանելու համար հարկաւոր եղած ազնիւ հանգամանքներն ալ ունէր: Իր քովի մարդիկներուն շողքորթութեանց ահանջ չէր կախեր եւ անոնցմով չէր զուար-

ճանար. հապա կ'ուզէր որ ճշմարտութիւնը լսէ: Գիշեր մը՝ որ քիչ մը անհանդիստ բլլալով՝ քովը եւրոպացի բժիշկ մը կը սպասէր, որն որ Սուլդան Մուստաֆայէն մեծամեծ բարիքներ ընդունած էր, եւ ըստ սովորութեան՝ քաղաքականութեան վրայ կը խօսէր, մէկէն արքայորդին վեր ցատքելով՝ ձեռքը բռնեց եւ երիտասարդական աշխուժով մը կանչեց. Գուն իմ բարեկամս ես: Ուրիշներն ինչ կ'ուզեն նէ՝ ըսեն, ես գիտեմ որ հասարակ մարդիկներուն պէս մարդ մըն եմ: Ուրիշները զիս խաբել կ'ուզեն. բայց դուն պէտք է որ միշտ ճշմարիտն ըսես: Աս բանս կը խնդրեմ ու կը պահանջեմ քեզմէ իմ հօրս անուամբը՝ որմէ շատ բարիք տեսած ես: — Ստուգիւ թաղաւորի արժանի խօզք: — Թէ որ իր փակուած մնալուն վրայ կը ցուէր նէ, միակ պատճառն ան էր՝ որ չէր կրնար ուղածին չափ բան սորվիլ եւ աղէկ կըթուիլ: Բոլոր իր ըրած հարցումներովն ու խնդրած տեղեկութիւններովը կը ցուցընէր որ մտքին մէջ ապագային համար մեծամեծ զաղափարներ եւ սաստիկ բաղձանքներ ունի:

Նօրեղբօրն իրեն թող տուած ազատութեամբը՝ չէ թէ միայն իր հօրը հաւատարիմ պաշտօնատէրներուն եւ տէրութեան մէջ գանուող ուրիշ երեւելի մարդիկներուն հետ կը թղթակցէր, հապա (ոմանց ըսածին նայելով) մինչեւ Գաղղիա մարդիկ խաւրեց (1786ին), որպէս զի կառավարութեան այլեւայլ ճիւղերուն վրայ աղէկ լուսաւորութիւն ու տեղեկութիւն ստանայ. եւ միշտ անանց գլխաւորը՝ Խոսհակ Պէյին հետ կը թրղթակցէր. իր թղթերուն մէջ քաղաքականութեան գլխաւոր նիւթերուն վրայ խնդիրներ կ'ընէր, եւ ընդունած պատասխաններուն վրայ խորհելով՝ ապագային համար մեծամեծ պատրաստութիւններ կը տեսնէր: Աս

զաղանի թղթակցութեանց համար, եւ մանաւանդ մօրը՝ անոր հանդերձեալ մեծութեան ու յաջողութեան վրայ տարածել տուած գուշակութեանց պատճառաւ, որոնց որ ժողովուրդը հաւատք կ'ընծայէր, Սուլդան Ապտիւլ-Համիտ սկսաւ իր եղբորորդին քիչ մ'աւելի նեղ բանել եւ վրան աւելի զգուշաւորութեամբ հսկել տալ: Բայց այս ամենայն մեծ ազդեցութիւն մը չը բաւ, եւ Սէլիմ թէ մէկ կողմանէ իր գրտի հետ թղթակցութիւնը յառաջ կը տանէր եւ թէ մէկալ կողմանէ միտքը զանազան օգտակար ու թագաւորի մը հարկաւոր եղած տեղեկութիւններով զարդարելու ետեւէ կ'իյնար: Միանգամայն մարմինն ալ այլեւայլ հրահանգներով վարժեցընելու կը ջանար. անոր համար ալ աստեոսակ հրահանգաց մէջ խիստ քաջ էր, շատ աղէկ ձի կը հեծնէր ու ճարտար սուր կը խաղցընէր:

Այլ երջապէս ասպարէզ ելլելու եւ իր մեծ ու վսեմ խորհուրդներն ի դորձ գնելու ատենն եկաւ: Սուլդան Ապտիւլ-Համիտ 1789ին, Ապրիլի 7ին մեռաւ, եւ Սուլդան Սէլիմ Գ. գահն ելաւ՝ քսանութը տարւան: Անմիջապէս ալ առիթ ունեցաւ իր մտքին մէջ ունեցածները հրապարակաւ ցուցընելու: Գահ նստած օրը նստարանին քով հրդեհ մ'ելլելով, նոր թագաւորը լսելուն պէս՝ պալատէն դուրս վազեց, եւ իր յատուկ նստակը ծովեզրը շղանելով՝ հոն եղած հասարակ նստակ մը մտաւ, կրակին տեղն ամապարեց: Գուրս ելած ատեն՝ ծովապետն իրեն ձի մատոյց. աշխոյժ թագաւորն առանց սպասելու որ զինքը հեծցընեն, երիտասարդական առողջութեամբ վրան նետուելով՝ հրդեհին տեղը զնաց. հոն ամենէն վտանգաւոր կողմերը պարտելով, արթնութեամբ ու իմաստութեամբ պատշաճ հրամանները տալով եւ առատածեռն պարգեւներ բաժնե-

լով՝ կրակին առջեւն առաւ: Իսկ հանդիսութեամբ սուր
կապելու օրը՝ որ Ապրիլի 13ին կատարուեցաւ, ժողո-
վըրդեան բաժնել տուած ստրկէն զատ՝ բանտերու մէջ
գանուող բոլոր պարտապաններն ազատեց, պարտատէր-
ներուն՝ իր անձնական գանձէն հարիւրին երեսուն վճա-
րել տալով: Գարձեալ իր առանձնական գանձէն սատ-
տիկ շատ ստակ տալով՝ քանի մը ամէն վեր Աստուան-
դնուպօլսոյ մէջ սաստկացած սովը դադարեցուց: Բոլոր
պրտորեց ալ ետ դառնալուն հրաման հանեց: Իր երե-
ւելի նախորդներուն պէս ութ օրը մէյ մը ծպտեալ
կ'ելէր կը պտրտէր, որպէս զի ամէն բան անձամբ տես-
նելով եւ բոլոր անկարգութիւններն իմանալով՝ ճար
հողաց: Իրօք ալ յանցաւորները խստութեամբ պատ-
ժելով եւ զանազան իմաստուն կարգաւորութիւններ
ընելով՝ շատ պակասութիւններու առջեւն առաւ եւ մե-
ծամեծ նորոգութիւններ բրաւ, որով ժողովրդեան զա-
նազան դիւրութիւններ եղան:

Աս իր նորոգութիւններն աւելի աղէկ ու հաստա-
տուն կերպով յառաջ տանելու եւ զխաւորաբար զի-
նուորական արուեստն ու հրահանգը նորէն ի հիմանց
կարգաւորելու համար՝ Գաղղիայէն զանազան գործա-
ւորներ եւ արուեստաւորներ, միանգամայն պլեւայլ
աստիճանի ծովական ու ցամաքային պաշտօնակալներ
բերել տուաւ, որոնք անմիջապէս թագաւորին կամացը
համաձայն՝ սկսան իւրաքանչիւր իր ճիւղին մէջ գոր-
ծել: Ամէն բանէն յառաջ թնդանօթ ձուլելու գործա-
րան մը հաստատուեցաւ. միանգամայն բոս եւրոպական
հրահանգաց վարժեալ թնդանօթաձիգներու գունդ մը
կազմուեցաւ. նոյնպէս հետեւակազօրաց պղտիկ գունդ
մը գրուեցաւ, որն որ նոր տեսակ թեթեւ զգեստ ու
թեթեւ զէնք ունէր, եւ միշտ կրթութիւն ընելով՝ ա-

դէկ կը վարժէր: Զիրենք աւելի յորդորելու համար՝
 թագաւորը շատ հեղ անձամբ կ'երթար իրենց կրթու-
 թեանց ներկայ կը գտնուէր, խօսքով կը քաջալերէր,
 ըստ տեղւոյն գովութիւն եւ վարձք կու տար: Իրօք ալ
 աս վերջին գունդն այնպէս վարժ ու ճարտար եղաւ, որ
 քիչ մը ետքը (1798ին) Ա. քեայի պաշարման ատեն՝ մեծ
 քաջութեան ու կարգաւորութեան ցոյց տուաւ. որով
 Սուլթան Սելիմ իր բաղձանքին մէջ աւելի հաստատուե-
 ցաւ: Մանաւանդ երբ որ տեսաւ թէ մայրաքաղաքին
 ժողովուրդն ան զօրքին պատերազմէն դարձած ատեն՝
 զիրենք սիրով ընդունեցաւ եւ աղէկ աչքով կը նայի,
 աւելի եւս քաջալերուելով՝ միտքը դրաւ որ նոյն գուն-
 դը բազմացընէ, ու ետեւէ ետեւ ուրիշ նոյնպիսի կրթ-
 թեալ ու կանոնաւոր զօրաց զնդեր կազմելով՝ շատոն-
 ցուրնէ մտքին մէջ ունեցած խորհուրդը գլուխ տանի,
 այս ինքն է՝ ջնջել Աէնիշէրիները, որոնց յանդգնու-
 թիւնն ու անպիտանութիւնը ալ վերջին աստիճանի
 հասած էր, եւ թէ ժողովուրդը, թէ մեծամեծներն ի-
 բենց բանութեանց գերի բրած էին:

Ասանց կամաց ամէն բան պատրաստելէն ետեւ՝
 1802ին արքունի հրովարտակաւ մը հրաման տուաւ որ
 կարգաւորեալ զօրաց զնդեր կազմուին, որոնց մէջ ըլ-
 լան հետեւակ, ձիաւոր եւ թնդանօթածիօգ, ըստ ամե-
 նայնի Աւրոպայի կրթեալ զօրաց համաձայն. եւ աս
 զօրաց անունը դրուի 'Աէզաֆ ճէրիք': Աս նոր զնդերը
 քիչ ատենուան մէջ կարգաւորուելով եւ յուսացուա-
 ծէն աւելի աղէկ յաջողելով՝ թագաւորն ուղեց աւելի
 եւս անցընել. ուստի եւ 1805ին արքունի հրովարտա-
 կաւ մը հրաման հանեց որ տէրութեան եւրոպական
 մասին քաղաքներէն եւ երեւելի զիւզաքաղաքներէն՝
 թէ Աէնիշէրիներուն ու թէ հասարակ ժողովրդեան մե-

ջէն՝ զօրաւոր եւ առողջ երիտասարդներ ժողովելով, նորահաստատ զնդաց մէջ խոթուին: Աս հրամանը՝ որ դուքէ ժամանակէն քիչ մը յառաջ էր, վերջին ատիճանի հասցուց Եէնիչէրիներուն եւ անոնց կողմնակցաց զրգուութիւնը, որոնք եղած նոր կարգադրութեանց դէմ արդէն շատոնց աղբայ կը կրճտէին: Ուստի թագաւորը սաստիկ ընդդիմութիւններու եւ անակնկալ դժուարութիւններու պատահելով՝ չկրցաւ ուզածը զլուխ հանել, եւ ստիպուեցաւ ուրիշ պատշաճաւոր ժամանակի ձգել: Բայց եւ այնպէս երկու տարի վերջը իր բաղձանքը բացարձակապէս կատարել ուղեւորով, նորէն հրաման հանեց որ զինուորական նոր կարգադրութիւններն ամէն կողմ մտնեն. եւ Պոսիօրոնի ու Չանագալէսիի զղեակները նոր զօրաց զգեստները խաւրեց, որ հոն դառնուող Եէնիչէրիներն ալ հազնին:

Աս հրամանը մեծ ապստամբութեան մը պատճառ եղաւ, որն որ Սուլթան Սէլիմին զահէն իյնալովը լմնցաւ: Եւսմէ բուռած անկանոն ու խառնիճաղանճ զօրքերը՝ որոնք Նիշաֆէ ճէպի կամ Շահաֆէ կոչուած կանոնաւոր զօրաց հետ Պոսիօրոնի զղեակներուն պահպանութիւն կ'ընէին, ամենէն յառաջ սոք ելան: Ասոնք թագաւորին հրամաններն ի դորձ դնել տալու եկող պաշտօնատէրները սպաննեցին (1807, Մայիսի 25ին), եւ սկսան իրենց քովն եղող կարգաւորեալ զօրաց հետ զարնուիլ, որոնք թէպէտ մեծ քաջութեամբ պատերազմեցան, բայց թշնամեաց բազմութեան դէմ չկրնալով դնել՝ վերջապէս ստիպուեցան ետ քաշուիլ դուրս ելլել: Եւսմագներն ասով ոգի առնելով եւ գիտնալով որ քանի մը զլխաւոր մեծամեծներ եւ առանձինն Քենպէտն իրենց կողմն է, Աստանդնուպոլսոյ Եէնիչէրիներուն հետ խորհրդակցելէն ետեւ՝ Քապագչը

օղլու անուամբ մէկու մը հրամանատարութեան տակ սկսան մայրաքաղաքին վրայ քալել: Իսկզբան 1800 հոգւոյ չափ հազիւ կային, բայց ճամբան թուերնին շատ աւելցաւ: Ամէնքը մէկտեղ եկան Արստանդնուպոլսոյ էթ մէյտանը հրապարակը կեցան եւ կը պահանջէին որ Սուլթան Սէլիմ գահէն վար առնուի:

Առտլութիւններուն աս աստիճանի հասնելէն թագաւորը բան մը չէր գիտեր. վասն զի իսկզբան իրեն ծանուցող եղաւ ալ նէ՝ Եէնիչէրիներուն կողմնակից եղող մեծամեծները գոցեցին եւ իրեն այնպէս հասկըցուցին որ փոքր շիթութիւն մըն էր ելաւ, բայց շուտ մը զսպուեցաւ: Արդ երբ որ ապստամբութիւնը վերջին աստիճանի հասաւ եւ թագաւորը մէկէն խմանալով՝ ինչ ընելիքը չէր գիտեր, իրեն հաւատարիմ մնացողները խրատ տուին որ մեծամեծ պաշտօնատէրներէն եւ կարգացողներէն քանի մը հոգի քովն առնէ. որպէս զի հարկ եղած ատեն՝ զանոնք մեռցնելով եւ գլուխնին ապստամբներուն տալով՝ ինք ազատի: Բայց Սուլթան Սէլիմ արքայտօլայել մեծանձնութեամբ դէմ դրաւ, ըսելով թէ Երբ որ ապստամբները զանոնք իրենց տեղը չգանելու ըլլան, ժողովրդեանս արիւնը կը թափեն: Լաւ է ինծի գահէս հրաժարիլ, քան թէ իմ ժողովրդեանս արեան թափուելուն պատճառ ըլլալ:

Իսկ գենպետը՝ որն որ ինչպէս ըսինք, Եէնիչէրիներուն կողմն ու նոր կարգադրութեանց դէմ էր, ապրստամբներուն խնդրելովը՝ վճիռ տուաւ որ Սուլթան Սէլիմ անարժան է թագաւորելու, որովհետեւ, կ'ըսեր, ան թագաւորը՝ որն որ տասն'ութը տարի թագաւորելով՝ զաւակ չ'ունենար, որուն ժամանակը Մէքքէ ուխտաւորութեան չ'երթցուիր, արժանի չէ գահին վրայ մնալու. մանաւանդ որ իր ըրած փոփոխու-

Թիւններն ու խոթած նորութիւնները կրօնէն արգելուած բաներ են: Աս վճռով ապստամբներն աւելի զրգռուելով ու մեծագոյն յանդգնութիւն ստանալով՝ բացարձակապէս կը պահանջէին որ Սուլդան Սէլիմ վար ձգուի: Եւ թէպէտ սրտերնին աւնելու եւ զիրենք զոհ ընելու համար՝ թագաւորն իր ան պաշտօնատէրներուն գլուխը կտրել տուաւ, որոնց մահը կը խնդրէին Եէնիչերիք, թէպէտ հրաման հանեց որ նոր զօրքերը ցրուին, ի վերայ այսր ամենայնի ապստամբք չհանդարտեցան եւ իրենց պահանջումէն ետ չկեցան:

Աս բաները կ'ըլլային Մայիսի 28ին, եւ բոլոր օրը պալատին դռները դոց էին: Երկրորդ օրը (29ին) որ ուրբաթ էր, հարկ էր որ թագաւորը հրապարակաւ մղկիթ երթար աղօթք ընելու: Աւստի եկան զինքը հրախրեցին. բայց ինք չուզեց դուրս ելլել, վախնալով մանաւանդ թէ հաստատութեամբ գիտնալով որ դուրս ելածին պէս՝ զինքը կը սպաննեն: Սակայն իմանալով ալ որ անկէ ետեւ ինք չիկրնար թագաւորել եւ չուզելով որ իր պատճառաւ ժողովուրդը մնաս կրէ, միտքը դրաւ որ ինք իրմէ հրաժարի. ուստի իր հօրեղբորորդւոյն (Սուլդան Ապտուլ-Համիտին անդրանիկ որդւոյն) Մուստաֆային մարդ խաւրեց ըսել տուաւ որ գայ իր զահր նստի, որովհետեւ, ըսաւ, խաժամուժը զիս չուզեր եւ ալ իմ բանս բուսած է. միանգամայն իրեն յաջողութիւն ու բախտաւորութիւն մաղթեց: Խրկած մարդիկն ետ չգարձած՝ իր հաւատարիմները ժողովեց, իրենցմէ թողութիւն խնդրեց եւ ապապրեց որ յաջորդին ալ նոյնպիսի հաւատարմութեամբ ծառայեն:

Իսկ Մուստաֆա՝ երբ որ իրեն եղած առաջարկութիւնը լսեց, սաստիկ այլայլելով՝ սկսաւ լալ եւ ըսաւ. Ես աս կերպ զահ նստել չէի բաղձար. չէի ուզեր հօր-

եղբորորդիս աս վիճակին մէջ տեսնել: Լաւագոյն էր որ մեռնէի՝ քան թէ աս օրուան հասնէի: Ես դուրս չեմ ելլեր, ինչ ընեն նէ՝ ընեն: Թէ Սուլդան Սէլիմին խրկած մարդիկն եւ թէ իր քովինները շատ ջանացին միտքը փոխել տալու. կը զրուցէին որ Աս բրածդ Սուլդան Սէլիմին բարեկամութիւն չէ, որովհետեւ դուն հիմա կամօք յանձն չես առներ նէ թագաւորել, ապրտաամբք զինքը կը սպաննեն եւ զքեզ կը ստիպեն դահ ելլելու. ուր որ եթէ հաւանիս նէ, Սուլդան Սէլիմ գոնէ մահուրնէ կ'ազատի: Աս ու ասոր նման պատճառներով վերջապէս համոզեցին որ յանձն առնու:

Այբ որ Սուլդան Մուստաֆա իր տեղէն ելած՝ կու գար գահը նստելու, Սուլդան Սէլիմ ալ գահէն իջած՝ ներս կ'երթար. ճամբան մեկզմեկ դիմաւորեցին, փատտուեցան իրարու եւ սկսան երկուքն ալ լալ ու ողբալ: Քիչ մ'ատեն այսպէս լռութեամբ լայէն ետեւ՝ Գնա, սրգեակ, ըսաւ Սուլդան Սէլիմ, Գնա գահդ նստէ, եւ Աստուած քեզի յաջողութիւն տայ: Իմ բախտս ասանկ է եղեր: Աս ըսաւ ու հօրեղբորորդւոյն ճակատը պազաւ. իսկ Սուլդան Մուստաֆա ինկաւ անոր օտքը պազաւ: Սուլդան Սէլիմ իրեն քանի մը օգտակար խրատներ տալէն ետեւ՝ լալով ողբով իրարմէ բաժնուեցան:

Անմիջապէս Սուլդան Մուստաֆային գահ ելլելը հրատարակուեցաւ, որն որ Եէնիչէրիք սիրով ընդունեցան եւ այսպէս խռովութիւնը դադրեցաւ: Իսկ Սուլդան Սէլիմ փակարանը մտաւ, ուր որ զինքը պատուով կը նայէին: Իր դրած զօրքերուն զգեստը փոխեցին, զէնքերնին ձեռուրնրնէն առին ու զերենք ցրուեցին:

Մ---Գ---Ք--- Ժ---Լ--- ԵՐ Ի---Ղ---Ի---Ե---Ի---Ը ԸՐԾԻ Կ---Գ---Կ---Գ---Ը
 Ի---Ի---Ե---: — Ս---Լ--- ՍԵԼԻՄ ԵՇ ԴԵՆԻ Ե--- Ս---Լ--- Մ---Գ---Գ---
 ԵՇ Բ---Գ---ԵԻ:

ՈՐՈՂՀԵՏԵԻ Մուստաֆա փաշան Սուլդան Սելի-
 մէն շատ բարիք տեսած էր, եւ միանգամայն անոր բրած
 փոփոխութիւններն ու կարգադրութիւնները շատ կը
 հաւնէր, մանաւանդ թէ ինք արդէն նոյնպիսի կարգա-
 դրութիւններն իր զօրաց մէջ խոթած էր, անոր համար
 երբ որ նոյն թագաւորին գահէն իյնալը լսեց, սաստիկ
 այլայլեցաւ ու ցաւեցաւ. իր մարդիկներովը մէկտեղ
 երկայն ատեն իր բարերար ու մեծանձն թագաւորին
 վրայ կ'ողբար, եւ միշտ թէ առանձին թէ իրեններուն
 հետ՝ զանիկայ նորէն թագաւորեցընելու հնարք մը կը
 մտածէր: Իր ցան աւելցուցին եւ իր դիտաւորութեան
 մէջ զինքն աւելի հաստատեցին Աստանդուպուէն եւ
 տեւէ ետեւ եկած մէկը մէկալէն աւելի գէշ լըերը, եւ
 նոյն մայրաքաղաքին ու շրջակայ տեղերուն մէջ ապրա-
 տամբներուն գործած շարիքներուն եւ բռնաւորութիւն-
 ներուն ստորագրութիւնը:

Ինք իր ներքին խորհրդականներովն աս մտածմանց
 մէջ եղած ատեն՝ Թայեար փաշան՝ զորն որ չարագործ-
 ները վեղիրութենէ վար առած էին, Ռուշտուկ գալով՝
 իրաց վիճակն աւելի տեղն ի տեղը հասկրցուց: Ասոր
 վրայ որոշեցին որ ինչ ընեն շընեն՝ նոյն անկարգու-
 թիւնները վերջացընել տալու միջոց մը գտնեն: Անոր

Համար Մուստաֆա փաշան բոլոր իր բարեկամ ու դաշնակից փաշաները խորհրդի ժողովեց եւ անոնց հետ սկսաւ խորհիլ թէ ինչ կերպով կրնան իրենց մտածմունքը՝ եթէ կարելի է առանց արիւն թափելու՝ դուրս հանել:

Արկայն ատեն մտածելէն վերջը՝ Մանուկ Պէյին իմաստուն խորհրդին հաւանելով՝ որոշեցին որ մէջերնէն հաւատարիմ ու խոհեմ մէկը խաւրեն անմիջապէս Չէլէպի Մուստաֆա մեծ վեզիրին, որն որ բանակաւն Ազրիանուպոլիս կը կենար, եւ անիկա՝ առանց Սուլդան Սէլիմին վրայ խօսք ընելու՝ զինքը համոզէ որ իրենց հետ մէկտեղ միանալով՝ Կոստանդնուպոլսոյ խռովութիւնները վերջացնելու գործակից ըլլայ: Նոյն պատգամաւորը բաները հոն յարմարցնելէն ետեւ՝ Կոստանդնուպոլիս անցնի, եւ Սուլդան Սէլիմին ու անոր նորոգութեանց կողմն ըլլողները աղէկ մը պատրաստէ: Եթէ աս բաներս իրենց յուսացածին պէս յաջողի նէ, Մուստաֆա փաշան իր ու դաշնակցաց զօրօքը Ազրիանուպոլիս՝ վեզիրին զօրացը հետ միանալով՝ մայրաքաղաքին վրայ երթայ, եւ քաղքէն դուրս բանակ դնելով՝ ջանայ խաղաղական կերպով մը խռովութիւնները դադրեցնել ու շարագործները զսպել, եւ ետքը զՍուլդան Սէլիմ՝ նորէն իր գահը նստեցրնէ: Իսկ եթէ բանն աս կերպով լմնցրնելն անկարելի կ'ըլլայ, իր զօրքովը քաղաք մտնէ, Եէնիչէրիները ճնշէ, զՍուլդան Սէլիմ գահը նստեցրնէ. բայց ինք ներսը չկենայ, հապա անմիջապէս քաղքէն դուրս ելլէ բանակի ու հոնկից ամէն բան կարգի դնէ: Եւ երբ որ մայրաքաղաքին մէջ հանդարտութիւնն ու ապահովութիւնը կատարեալ հաստատուի նէ, իր զօրքովը Ռուշտուկ դառնայ եւ հոն պատրաստ կենայ, որպէս զի ապստամբութեան բազ-

ձանք ունեցողները դիտնալով որ իրենց դէմ պատրաստական բանակ մը կայ, վախնան. եւ եթէ իրօք ալ նորէն շփոթութիւն մը հանելու յանդգնին նէ, բանակը կարող ըլլայ անմիջապէս վրանին քալել: Մասնաւորաբար աս ալ սահմանեցին որ Մուստաֆա փաշան վէզիրութիւն յանձն չառնէ, թէ որ թագաւորը նոյն պաշտօնն իրեն տալ ուզէ:

Ասոնք որոշելէն ետեւ՝ անմիջապէս յարմար մէկն Ազրիանուպոլիս ու Աոստանդնուպոլիս խաւրեցին. իսկ իրենք կամաց կամաց սկսան պատրաստութիւն տեսնել: Եւ երբ որ լսեցին թէ իրենց պատգամաւորն ամէն տեղ աղէկ ընդունելութիւն դտեր ու օգնականութեան խոստում է ընդուներ, Մուստաֆա փաշան իր ու դաշնակցաց զօրքին մէկ մասովը ճամբայ ելաւ: Բայց որպէս զի Աոստանդնուպոլսոյ մէջ բանը ժամանակէն յառաջ իմացուելով՝ շփոթութիւն մը չծագի, միտքը դրածն ամենեւին ուրիշի մը եւ ոչ իսկ իր զօրաց յայտնեց. հապա ձայն հանեց որ Սերուխացւոյ վրայ կ'երթայ, ասկից ալ զատ՝ իր բանակէն միայն 4000 հոգւոյ չափ մարդ հետն առած՝ ինք քիչ մը առջեւէն դնաց, իսկ բանակին մնացեալ մասը՝ որ 12,000 հոգւոյ չափ էր, ետեւէն կ'երթար: Այսպէս կամաց կամաց Ազրիանուպոլիս մտնենալով՝ Չէլէպի Մուստաֆային քոյն եկաւ, եւ մէկտեղ խորհելով՝ որոշեցին որ նախ վէզիրն իր յատուկ բանակաւ եւ ետքը Մուստաֆա փաշան իր սեպհական զօրքովը Աոստանդնուպոլսոյ մտնիկնան: Եւ շուտ մը աս որոշմունքնին ի դորձ դրին:

Ինչպէտ՝ ինչպէս ըսինք՝ Մուստաֆա փաշան կարելի եղածին չափ ծածուկ կը գործէր. բայց բանակի մը դէպ ի մայրաքաղաք քալելն ինչպէս կրնար դադար մնալ: Անոր համար երբ որ աս լուրը Աոստանդնուպոլիս

Հասաւ, ամենուն մեծ զարմանք ու վախ պատճառեց: Մանաւանդ որ երկու զօրապետներն ալ Սուլդան Մուստաֆային նկատմամբ մեծ յարգութիւն ցուցրնելով՝ դրսէն մէկը չէր գիտեր թէ ինչ պատճառի համար այսչափ բազմութեամբ մայրաքաղաք կու դան: Արդ ամէն մարդ այլեւայլ մտածմունքներու կամ կասկածներու մէջ եղած առեն՝ բանակը Աստանդնուպոլիս Հասաւ, 1808ին Յուլիսի 26ին:

Մուստաֆա փաշային առաջին դործքն եղաւ բռնել ու սպաննել անօրէն շարագործ Գապագճը օղուն, որուն առաջնորդութեամբ՝ ինչպէս տեսանք՝ Պոսիօրոնի բերդերուն ապստամբները մայրաքաղաք եկած էին, եւ որն որ հոնտեղը գեռ բռնացած՝ ամէն տեսակ շարիք կը գործէր: Ետքը գենպետն ու շարագործաց կողմնակից եւ նորոգութեանց թշնամի եղող ուրիշ քանի մը մեծամեծներ փոխել տուաւ: Աերջապէս իր յատուկ կանոնաւոր ու հաւատարիմ զօրքէն 6000 հոգւոյ չափ մարդ հետն առած՝ Յուլիսի 28ին Մուստաֆա փաշան առտուանց կանուխ քաղաք մտաւ եւ վեզիրին հետ մէկտեղ Գուռը դնաց, Արշ օրասը կոչուած սրահը նստաւ:

Արդէն իր դալատեան մէկ նպատակին հասած, այս ինքն՝ ապստամբներուն գլուխը մեռցուցած եւ իր գրւխաւոր վախճանին ուղղակի հակառակ եղող մեծամեծներէն ոմանք մեռցուցած ըլլալով, եւ ալ անկէ ետեւ վեզիրին օգնականութեան կարօտութիւն չունենալով, ուզեց զինքը պաշտօնէն վար առնել, որովհետեւ իմացած էր որ անիկա Սուլդան Սէլիմին նորէն գահ ելլելուն վրայ իրեն կամակից չէ: Աս գործողութիւնն ալ շուտ մը կատարելէն ետեւ՝ իր զօրաց մէկ մասովն արքունիք դնաց եւ յայանեց որ կ'ուզէ մէյ մը ղՍուլդան

Սէլիմ տեսնել, որովհետեւ շատ բարիք գտած է իրմէ : Աս որ լսեցին հոն եղողները՝ յանկարծակիի եկան, եւ միտքը կէս մը կռահելով՝ ելան դացին : Մուստաֆա փաշան քանի մը ժամ սպասելէն ետեւ՝ տեսնելով որ եկող դացող չկայ, բարկացաւ ու մարդ խաւրելով՝ ներքինապետը կանչել տուաւ, եւ իր բացայայտ հրամանը կատարելու այսչափ ուշանալուն պատճառը հարցուց : Ներքինապետը նեղ մտնելով՝ պատասխանեց որ Սուլդան Սէլիմ դուրս ելել է չուզեր : Ան ատեն Մուստաֆա փաշան՝ միտքը դրածն ալ աւելի երկայն ժամանակ ծածուկ պահելն աւելորդ սեպելով՝ իր գալուն վախճանը բացայայտ զրուզեց, որ էր Սուլդան Մուստաֆան վար առնել եւ զՍուլդան Սէլիմ նորէն իր աթոռը նստեցրնել : Ասոնք ըսելէն ետեւ՝ իր առաջին հրամանն աւելի սաստիկութեամբ դարձեալ կրկնելով՝ ներքինապետը խաւրեց, որն որ ներս մտնելուն պէս՝ ներքին դռները գոցուեցան :

Պայլատին մէջ Եէնիչէրիներուն կողմնակիցներն ու Սուլդան Սէլիմին թշնամիները Մուստաֆա փաշային գալուն բուն պատճառն արդէն յառաջագոյն իրենք իրենցմէ իմացած ըլլալով եւ գիտնալով որ միտքը դրածն անշուշտ զլուխ կը տանի, ուզեցին անօրէն եղեռնագործութեամբ մը անոր խորհուրդները դերեւ հանել եւ ստիպել որ ուզէ չուզէ՝ զՍուլդան Մուստաֆան ճանչնայ. այս ինքն սպաննել զՍուլդան Սէլիմ եւ զՍուլդան Մահմուտ՝ Սուլդան Մուստաֆային պղտիկ եղբայրը, որպէս զի տիրող թագաւորէն զատ՝ ամենեւին մարդ չգտնուի թագաւորելու : Արդ անզգամ ներքինապետը Սուլդան Սէլիմին բնակարանը մտաւ, եւ պատճառելով որ ժողովարդը զինքը կ'ուզէ, կը ստիպէր որ դուրս ելէ : Շատ դէմ դրաւ թագաւորը. բայց

վերջապէս յանձն տաւ: Հազիւ թէ դռնէն անցած էր, մէյ մ'ալ հոնտեղը պահուրտած անազորոյն մարդիկ մէկէն վրան ինկան, սկսան կատղած դազաններու պէս՝ սաստիկ թշնամանելով եւ հայհոյելով՝ մորուքը քաշել, ապտակ զարնել, սրով խոցխոցել: Եւ թէպէտ Սուլդան Սէլիմ խիստ զօրաւոր ըլլալով՝ խել մը ժամանակ դէմ դրաւ, ինք զինքը պաշտպանեց, եւ իր քանի մը հաւատարիմ Սեւերը վրայ հասնելով՝ սկսան շարագործներուն հետ քաջութեամբ կռուիլ. բայց անօգուտ, իր հաւատարիմներն ինկան իրենց տիրասիրութեան զոհ եղան, իր զօրութիւնն ալ վերջապէս կտրելով՝ սկսաւ տեղի տալ. ուստի եւ ան՝ վայրենի դազաններէն աւելի անազորոյն շարագործները՝ շարաշար սպաննեցին խեղճ թագաւորը:

Իսկ Սուլդան Մահմուտին քովի հաւատարիմ մարդիկ եւ մանաւանդ իր դաստիարակը՝ բանն ատենին իմանալով՝ առին զինքը սկսան փոխոցընել: Ետեւնէն ինկողները՝ երկայն ատեն փնտռելէն ետեւ՝ վերջապէս գտնելով, ուղեցին իրենց դազանութիւնն անոր վրայ ալ յաղեցընել. բայց քովիններն աղէկ զինած ու խիստ քաջ ըլլալով՝ մէկ կողմանէ քաջութեամբ կը պատերազմէին, մէկալ կողմանէ ալ կը ջանային արքայորդին ապահով տեղ մը հասցընել:

Սուստափա փաշան երկրորդ անգամ ներսը հրաման խաւրելէն ետեւ՝ կը սկսի կասկածի երթալ. եւ ներքինապետը նորէն կանչելով՝ կը սպառնայ որ եթէ Սուլդան Սէլիմին բան մը պատահի նէ, պալատին մէջ եղողները բոլորն ալ, բայ ի Սուլդան Մահմուտէն՝ թրե կ'անցընէ: Ներքինապետը դարձեալ առջի անգամուն պատճառանքը բերելով եւ զրուցելով որ Սուլդան Սէլիմ հիւանդ է, կ'ելլէ ներս կը դառնայ եւ դռները նո-

բէն կը գոցուին: Մէյ մ'ալ քիչ մը ետքը կանանոցին կողմէն անհնարին ճիշ ու վայնասուն մըն է կը փրթի, անանկ որ բոլոր օդը կը թնդար: Մուստաֆա փաշան աս վայնասունը լսելով՝ կասկածը կ'աւելնայ, եւ ալ համբերութիւնը հատնելով՝ իր մարդիկներուն կը հրամայէ որ դռները կտարեն ներս մտնեն: Անմիջապէս աս պատուէրը կը սկսի ի գործ դրուիլ. բայց ներսինները մտածելով որ եթէ փաշան բռնի մտնէ նէ՛ բաներնին շատ դէշ կ'ըլայ, իրենք իրենցմէ դռները կը բանան: Փաշան առիւծի պէս ներս կը յարձակի, եւ կը պահանջէ որ նոյն բողէն զՍուլդան Սէլիմ իրեն բերեն: Սակայն սով կրնայ ստորագրել իր ցաւն ու միանգամայն կատաղութիւնը՝ երբ որ իր սիրելի թագաւորին տեղ՝ կը բերեն առջեւը կը ձգեն անոր անշնչացեալ մարմինը:

Հաւէն եւ այլայլութենէն ինք իրմէ ելած՝ քիչ մը ժամանակ անշարժ ու ապշած կը մնայ. աշուրներն ան արիւնաթաթախ մարմնոյն վրայ սեւեռած՝ ինչ ընելիքն ու ինչպէս ողբալիքը շիգիտեր: Բայց շուտ մը խելքը գլուխը բերելով՝ զՍուլդան Մահմուտ կը հարցրնէ, վախնալով որ անոր ալ բան մ'ըրած չըլան: Նոյն միջոցին՝ զարբայորդին փախցրնողները բախաւորութեամբ ան կողմերը կը հասնին, եւ Մուստաֆա փաշան արբայազուն իշխանն սղջ առողջ տեսնելով՝ քիչ մը ատեն ցաւը կը մոռնայ, նորէն կենդանութիւն ստացածի պէս՝ կը վազէ կ'երթայ, առջեւը կ'իջնայ ու ոտքը կը պահնէ: Իր մարդիկն անոր նայելով՝ ամէնքը մէկէն կը սկսին Աեցցէ Սուլդան Մահմուտ մեր թագաւորը կանչել: Եւ անմիջապէս կ'առնեն զինքն արքունական դահլը կը նստեցրնեն:

Այրբ որ աս գործողութիւնը լմնցաւ, Մուստաֆա փաշան զարձեալ սրտի ցաւէն ու մորմնքէն յաղթուե-

լով՝ ինկաւ իր բարերար ու սիրելի Թագաւորին մար-
 Ֆեոյն վրայ եւ սկսաւ անոր բարի բարի բնաւորութիւն-
 ները, մեծանձնութիւնը, առատաձեռնութիւնը, ողոր-
 մածութիւնը, աղքատսիրութիւնը, Ժողովուրդն եր-
 ջանկացրնելու եւ տէրութիւնը կարգաւորելու համար
 բրածները յիշատակելով՝ լալ ու ողբալ, եւ այսպիսի
 բարերար ու մեծ Թագաւորը սպանողներուն վրայ ա-
 նէճք կարգալ: Եւ Թէպէտ սպառնացած էր որ անոր
 բան մ՝ ըլլայ նէ, Սուլդան Մահմուտէն զատ՝ պալատին
 մէջ զանուողները բոլոր մեռցրնել կու տայ, ինչպէս
 վերը զբուցեցինք. բայց գոհ եղաւ միայն զլիսաւոր յան-
 ցաւորներն ու Թագաւորին մահուան ուղղակի դործա-
 կից ըլլողները սպաննել տալով: Սուլդան Մուստա-
 ֆային համար ալ՝ որն որ եղբայրն ալ մեռած կարծե-
 լով՝ ապահովութեամբ կը կենար, հրամայեց որ վեր-
 ցրնեն ըստ սովորութեան փակարանը տանին:

Իսկ նոր Թագաւորը՝ որն որ փակարանին մէջ Սուլ-
 դան Սէլիմին հետ յաճախ տեսնուած եւ անկից զանա-
 զան օգտակար խրատներ լսած ըլլալով՝ բոլորովին անոր
 հոգին ստացած եւ միտքը դրած էր որ անոր ձեռք
 զարկած ու զլուխ հանել չկրցած կարգաւորութիւն-
 ներն ինք յառաջ տանի, տեսնելով Մուստաֆա փա-
 շային քաջութիւնը, անոր զօրաց կարգաւորութիւնն
 եւ առ Սուլդան Սէլիմ ցուցուցած սէրն ու հաւատար-
 մութիւնը՝ վրան մեծ համարում ստացաւ, եւ ուղեց
 անմիջապէս զինքն իր վէզիրն բնել: Աս բանս Ռուշտուկ
 ամենուն միաբան հաւանութեամբ որոշածին հակա-
 աակ ըլլալով՝ փաշան երկայն ատեն դէմ դրաւ. բայց
 երբ որ Սուլդան Մահմուտ շատ ետեւէն ինկաւ եւ մին-
 չուկ ըսաւ որ Գուն վէզիրս չես ըլլար նէ՛ ես չեմ կրնար
 Թագաւորել, ստիպուեցաւ յանձն առնել:

Ըս բարձր իշխանութեան հասնելուն պէս՝ այլեւայլ կարգադրութիւններ սկսաւ բնել, թէ զինուորական հրահանգը նորոգելու եւ Սուլդան Սէլիմին բոլոր ուրիշ սկսածները յառաջ տանելու համար, եւ թէ ժողովըրդոց հանգստեան ու դիւրութեան հարկաւոր եղած բաները հոգալու համար: Եւ որովհետեւ երկուքին ալ անհրաժեշտ կարեւոր էր Եէնիչէրիներուն ջնջուիլը, անոր համար պաշտօնի անցնելուն պէս՝ իր բոլոր ճգանց ու գործողութեանց զրեթէ միակ վախճան դրաւ՝ նոյն բանը գլուխ տանիլ: Բայց մէկ կողմանէ իր ուղածը կատարելու համար բանեցուցած խստութիւնն ու շատ աճապարելը եւ ամէն բան մէկէն նորոգել ու փոխել ուղելը, եւ մէկալ կողմանէ իր յանձնապատանութիւնն ու խրատ մտիկ բնել չուղելը՝ թող շտուին որ գլուխ հանէ. հապա անոր հակառակ ինք զոհ եղաւ իր խորհրդոցը: Եւ ան նորոգութիւնները՝ որոնք եթէ կամաց կամաց, հանդարտութեամբ ու խոհեմութեամբ եւ բոստեղւոյն զիջանելով յառաջ տանիլ ուղէր նէ՝ գուցէ քանի մը տարւան մէջ կը կատարուէին, հազիւ քսան տարի վերջը սկսան ըլլալ:



Մանուկ Պէյ Կոստանդնուպոլիս իւ հանի Ե իւ ջնայ Մանուկ
 Կոստանդնուպոլիս իւ հանի Ե իւ ջնայ Մանուկ
 — Մանուկ Պէյին լիւր լինի — իւ հանի Ե իւ ջնայ Մանուկ
 Կոստանդնուպոլիս իւ հանի Ե իւ ջնայ Մանուկ

ՄՈՒՍՏԵՔԱ փաշային Ռուշտուկէն ելած ատենը՝
 Մանուկ Պէյ քիչ մը ժամանակ ալ հան մնաց, զանա-
 զան կարեւոր գործքեր կարգի դնելու համար, զորոնք
 լմրնցընելէն ետեւ՝ ինք ալ ծամբայ ելաւ, եւ ան ատեն
 հասաւ Արստանդնուպոլիս՝ երբ որ փաշան ամէն բան
 կարգի դնելէն ետեւ՝ վէզիր եղած էր։ Ինք՝ փաշային
 խոհեմութեան ու աշարջութեան, եւ թէ անոր թէ
 իր հրամանին տակ եզող զօրաց քաջութեան ու հրա-
 հանգին վրայ մեծ համարում ունենալով, միտքն այն-
 պէս դրած էր որ մայրաքաղաք հասած ատեն՝ ամենայն
 ինչ իրենց ուղածին ու որոշածին համաձայն կարգա-
 դրուած եւ զՍուլթան Սէլիմ նորէն դահ էլած կը
 գտնէ։ Անոր համար շատ սլլայլեցաւ ու ցաւեցաւ, երբ
 որ նոյն դժբախտ թագաւորին սղբալի մահուան գոյժն
 առաւ. որովհետեւ իբրեւ հաւատարիմ ու տիրատէր
 հպատակ, եւ իբրեւ քաջ քաղաքագէտ ու սիրող նո-
 րողութեանց ու կարգաւորութեանց եւ տէրութեան
 յառաջադիմութեան ցանկացող՝ այնպիսի մեծ, բարե-
 բար ու նորոգիչ թագաւորը խիստ կը սիրէր ու կը յար-
 գէր։ Բայց եւ այնպէս մխիթարեցաւ լսելով միանգա-
 մայն Մուստաֆա փաշային գտած յաջողութիւնն ու
 Սուլթան Մահմուտին դահ անցնիլը, յուսալով որ Սուլ-

դան Սելիմին մահուամբ տերութեան եղած վերջն՝ անհկա կը պատէ, սգացեալ ոգիները կը սփոփէ եւ անոր գլուխ հանել շկրցածն ինք կը կատարէ :

Սակայն մէկալ կողմանէ իրեն մեծ արտմութիւն եւ խիստ սաստիկ ցաւ պատճառեց տեսնելը որ Մուստաֆա փաշան՝ Ռուշտուկ եղած խորհրդին ու որոշման հակառակ՝ չէ թէ միայն քաղքին մէջ կը կենայ, հապա վէզիրութիւնն ալ յանձն է առեր. որովհետեւ աս բանս մեծապէս վնասակար կը համարէր չէ թէ միայն փաշային եւ իրենց կողմնակցութեան, այլ նաեւ նոյն իսկ տերութեան ու Սուլթանին : Աս պատճառաւ՝ առջի անգամ անոր առջեւն ելած ատեն՝ իրենց սիրելի թագաւորին մահուան համար վշտակից բլլալէն եւ ձեռք զարկած գործքը դռնէ ըստ մասին յաջողութեամբ գլուխ տանելուն համար շնորհաւորելն ետեւ, իր համարձակախօս բնութեամբն ու աստիճանին համաձայն, բացայայտ խօսքերով ցուցուց իր զարմանքն ու ցաւը՝ միաբան հաւանութեամբ որոշածներնուն հակառակ վարուելուն համար : Աւերջապէս խորհուրդ տուաւ ու ստիպեց որ վէզիրութեան աստիճանը կերպով մը թողու, իր զօրքն առնէ քաղքէն դուրս քաշուի, եւ ամենայն ինչ՝ միաբանութեամբ որոշածներնուն համաձայն կատարէ :

Մուստաֆա փաշան՝ թէպէտ եւ զՄանուկ Պէյ առջինին պէս մեծ սիրով ու պատուով ընդունեցաւ, եւ հետն ըստ սովորութեան՝ ընտանեկան կերպով կը վարուէր, բայց այնպէս ալ գլխաւոր նիւթին մէջ զիջանիլ չուզեց, ըսելով որ թէպէտ զուցածներդ ստոյգ եւ իրաւացի են, բայց հիմա պարագաներուն փոխուելուն համար՝ չեմ կրնար այլազգ ընթացք բռնել եւ Ռուշտուկ որոշածներնուս պէս գործել : Պարապ տեղ

կը ջանար Մանուկ Պէյ իր բրածին վնասակարութիւնն առջեւը դնելով՝ համոզել որ ետ կենայ. անկարելի եղաւ միտքը դրածէն շարժել : Այսպէս խեղճը՝ թէ փաշային ուստի եւ իրեն անձին կործանումը, թէ տէրութեան վնասը յայտնի տեսնելով՝ տրտում տխուր իրմէ բաժնուեցաւ :

Մանուկ Պէյ աս իր համոզման մէջ երթալով աւելի հաստատուեցաւ եւ իր վախն օրէ օր աւելի կը սաստկանար. վասն զի Մուստաֆա փաշան, չեմ գիտեր մինչեւ նոյն ատեն գտած յաջողութենէն՝ յանձնապատանութեան մէջ իյնալով, չէ նէ նենգաւոր կամ անխոհեմ խորհրդականներու խրատին անսալով, վերը զրուցածնուս պէս՝ Մանուկ Պէյին իմաստուն խորհուրդները մերժելէն զատ՝ իր առջի ընթացքէն բոլորովին տարբեր ընթացք մ'ալ կը բռնէր. այս ինքն՝ միտքը դրածն ամէն կարելի միջոցներով եւ շուտ մը յառաջ տանելու կը ջանար, ուստի շատ անգամ բռնութիւն ու խարէութիւն կը բանեցընէր, որով չէ թէ միայն իր թշնամիներն աւելի կը գրգռուէին, հապանոյն իսկ իր բարեկամներուն ու կողմնակիցներուն սիրտը կամաց կամաց իրմէ կը պաղէր : Աս բաներս Մանուկ Պէյին ազատական ու անկեղծ բնութեան բոլորովին հակառակ ըլլալով՝ շատ ջանաց ճար մը տանել. բայց ասոր մէջն ալ աշխատութիւնը փուճ եղաւ : Աերջապէս Մուստաֆա փաշան իր ամէն բրածններուն վրայ ուրիշ մեծ անխոհեմութիւն մ'ալ աւելցուց, որն որ իր կործանումն աճապարեց : Հրաման հանեց որ հետը բերած կանոնաւոր ու կրթեալ հաւատարիմ զօրքերը քաղքէն ելնն ցրուին, եւ իր օգնական փաշաներն ալ իւրաքանչիւր իր սեպհական զօրքն առնէ տեղը դառնայ : Քովը միայն շորսհարիւրի շափ «էյֆէն» պահեց :

Եւէնիչէրիներն ու իրենց կողմնակիցները, որոնք թէպէտ յազթուած ու ձայներնին քաշած էին, բայց բոլորովին ճնշուած չէին եւ ի ծածուկ վէզիւրին ու ի բրածներուն դէմ աղբայ կը կրճտէին, երբ որ աս վերջին գործքը տեսան, սաստիկ ուրախանալով եւ հոգի առնելով՝ կամաց կամաց սկսան խլրտիլ ու ծածուկ պատրաստութիւններ տեսնել՝ Մուստաֆա փաշան կործանելու եւ անոր դրած կարգերը ջնջելով Եւէնիչէրիութիւնը նորէն կանգնելու: Ա՛ռզէին միանգամայն զՍուլդան Մահմուտ զահէն վար առնել եւ տեղը նորէն նստեցրնել զՍուլդան Մուստաֆա, որուն սակաւ ժամանակեաց թագաւորութեան ատեն՝ ուղածնին բրած էին: Բանն ան աստիճանի հասաւ՝ մինչեւ սկսան վէզիւրին դէմ յայտնի սպառնալիքներ ընել, եւ ասդին անդին թղթեր կպցրնելով՝ իրենց միտքն ու բաղձանքը հրապարակաւ յայտնել: Այնպէս որ բոլոր մայրաքաղաքին մէջ ամէն մարդ աչքին առջեւը կը տեսնէր անոր կործանումը, եւ միայն ինք իր յանձնապատաստանական կուրութեան մէջ՝ ապահովութեամբ կը կենար եւ ամենեւին վտանգ մը չէր տեսներ:

Մանուկ Պէյ՝ որ միշտ Գուռը կ'երթար կու գար, այս ամենայն տեսնելով՝ իր հայրենասէր ու տիրասէր սիրտը չկրցաւ դիմանալ, եւ համարձակելով անդամ մը քաղքին վիճակն ու Եւէնիչէրիներուն եւ անոնց կողմնակցաց ոգին ու տեսած պատրաստութիւններն իրեն կատարեալ յայտնելէն ետեւ՝ խրատ տուաւ որ ժամանակ չկորսընցուցած ու բանը բանէն շանցած՝ աճապարէ քաղքէն դուրս ելլէ, ետ դարձուցած զօրքն ալ շուտ մը նորէն կանչէ: Բայց բոլոր խրատն ու աղաչանքը յանձնապատաստան փաշային վրայ ամենեւին ազդեցութիւն մը չըրին, որն որ՝ Քանի մը ջլեբաց ջրկիր

ու բեռնակիր խաժամուժն ինձի ինչ կրնայ ընել ըսելով՝ միտքը դրածէն ամենեւին չէր շարժեր. որովհետեւ անանկ կը համարէր որ Եէնիչէրիներուն զօրութիւնը կտարած եւ զիրենք ջնջած է :

Մուստաֆա փաշային աւագանւոյն մէջ շատ երեւելի էր իր տան հազարապետը՝ որն որ Քէօսէ քէհեա կ'անուանէր : Ասիկա շատ խորամիտ ու խոհեմ մարդ ու ամէն բանի մէջ Մանուկ Պէյին խորհրդեան հաւան եւ միաբան էր, եւ շատ անգամ հետը մէկտեղ աս եղածներուն վրայ կու լար կ'ողբար ու մէկտեղ՝ ճար մը գտնելու եւ վերահաս չարեաց առջեւն առնելու կը ջանային : Արդ ինքն ալ վտանգը յայտնի տեսնելով եւ Մանուկ Պէյէն խրատուելով ուղեց վերջին փորձ մը փորձել, յուսալով որ գուցէ վէզիրն աչքը կը բանայ : Աւստի գնաց իր բարեկամին ու խորհրդակցին ըսածներն ինք ալ կրկնեց : Բայց Մուստաֆա փաշան չէ թէ միայն անոր խօսքին չանսաց, հապա նաեւ մահ սպանացաւ՝ թէ որ մէյ մ'ալ նոյն նիւթին վրայ առջեւը բերան բանալու ըլլայ : Եւ տեսնելով որ չ'ուզեր շուտով մը մեկնիլ երթալ, խօսքը վերջացուց ըսելով՝ Գուրս էլ, եւ մէյ մ'ալ առջեւս մ'երեւար : Քէօսէ քէհեան աս իբր հրամանն ի գործ դնելով՝ շուտ մը կ'ելլէ չէ թէ միայն վէզիրին առջեւէն ու ապարանքէն, հապա նաեւ քաղքէն ալ, եւ աճապարելով Ռուշտուկ կ'երթայ, առանց յառաջագոյն մէկու մը բան ըսելու : Հոն իբրեւ փաշային տան հազարապետը՝ անոր ապարանքը կը մտնէ, բոլոր ծանրազին բաները կը կապտէ, կ'առնէ Պուքրէշ կ'երթայ եւ անկից ալ Ռուսաստան կ'անցնի, ուր որ մնաց մինչեւ իր մահը :

Բայց մենք դառնանք մեր պատմութեան : Աստանդուլուպուլոյ ապստամբները Մուստաֆա փաշային

անհոգութիւնը տեսնելով եւ դրսերէն ետեւէ ետեւ մայրաքաղաք թափուող իրենց կողմնակիցներով խիստ զօրանալով՝ ան աստիճանի յանդգնութեան հասան, մինչեւ ամէն մարդ յայտնի կը տեսնէր որ քիչ ժամանակուան մէջ անշուշտ մեծ խռովութիւն ու ապստամբութիւն մը պիտի փրթի. անոր համար ալ ամէնքը տակն ու վրայ կ'ըլլային եւ ահուդողի մէջ ինկած էին : Միայն վէզիրն ապահովութեամբ ու անհոգութեամբ կը կենար եւ իր զբօսանքին կը նայէր : Քէօսէ քէհեային մերժուելուն երկրորդ օրը՝ Մանուկ Պէյ, թէպէտ եւ պատճառ մը չունէր յուսալու որ վէզիրն իրեն հետ տարբեր կերպով մը կը վարուի, ի վերայ այս ամենայնի ասանկ պարագայից մէջ լռելն իր պարտուց դէմ սեպելով՝ համարձակեցաւ անգամ մ'ալ իր ազդարարութիւնն ընել : Ուստի եւ պաղատախառն կերպարանօք, մինչեւ աշուրներէն արցունք թափելով, փաշային ոտքն ինկած՝ աղաչեց ու թախանձեց որ գոնէ իր անձին խնայէ ու քաղքէն դուրս ելլէ. կամ ինք զինքը պաշտպանելու վիճակի մէջ գնէ, եւ ամէն կողմ սուրհանդակ հանելով՝ ջրուած զօրքերուն հրաման խաւրէ որ աճապարեն ետ դառնան եւ մայրաքաղաքին առջեւը բանակին : Բայց ալ վէզիրն առջի Մուստաֆա փաշան չէր. Մանուկ Պէյին մինչեւ նոյն ատեն ունեցած արգիւնքն ու բրած հաւատարիմ ծառայութիւնները մոռնալով, չյիշելով որ իր այնչափ յառաջ երթալուն ու մեծնալուն՝ օրչափ դորձակից եղած է, սկսաւ հետը սաստկութեամբ խօսիլ : Սակայն միշտ կը տեսնուէր որ վրան ունեցած սէրն ու համարումը չէր կրնար սրտին մէջէն բոլորովին հանել. անոր համար ալ իրեն հետ նոյն նիւթին վրայ այնպէս համարձակութեամբ խօսելը յանդիմանելէն ետեւ, իբրեւ թէ բրածին վրայ զղացածի

մէջ շփոթութիւն ու վայնասուն մըն է կը վրթի. բոլոր քաղաքը կը վողովի, ամէնքն իրար կ'անցնին, եւ շուտ մը շանթի արագութեամբ չորս կողմն աս լուրը կը տարածուի թէ վէղերին ապարանքը կ'այրի, որուն՝ ապստամբներուն շարութենէն պատճառած բլալուն վրայ ոչ դք կը տարակուսի: Աարծես թէ օդն ալ անոնց կը նպաստէր եւ վէղերին յանդգնութիւնը պատժելու գործակից կ'ըլար. երկինքն ամպերով պատած՝ ամէն կողմ խոր խաւար մը կը տիրէր, որմէ կրակին ահրելի պայծառութիւնն աւելի ահագին կ'երեւար, եւ սաստիկ կատաղի հով մը փշելով՝ մարելն աւելի գժուարին կ'ընէր:

Ապստամբ Եէնիշերիք՝ որոնք ներսի ստորին պաշտօնատեարց եւ սպասուորաց հետ խօսք մէկ ըրած էին, անոնց օգնականութեամբը ներս մտնելով՝ նախ սկսան «էյֆէննէր»-ն հետ պատերազմիլ: Արդէն կռիւք սկսած էր, երբ որ Մուստաֆա փաշան հրացաններու ձայնն ու աղմուկը լսելով՝ մէկէն կէս հազուած դուրս ցառքեց եւ իր «էյֆէննէր»-ն հետ միանալով՝ սկսաւ Եէնիշերիները զարնել: Ասոնք թէպէտ բաղմութեամբ վէղերին մարդիկներէն շատ աւելի էին, բայց անոնց քաջութեան դէմ երկայն ժամանակ չկրցան դիմանալ, եւ տեսնելով որ մէջերնէն խիստ շատ մարդ կը մեռնի, սկսան կամաց կամաց քաշուիլ դուրս ելլել, մէկ կողմանէ ալ ասդին անդին կրակ ձգելով: Քիչ մը վերջը ստոյգ է պալատին մէջ թշնամի շմնաց. բայց ինչ օգուտ՝ որ կրակն ալ չորս դին առած էր, եւ հովին սաստկութենէն՝ գրեթէ մարելն անկարելի էր: Միանգամայն Եէնիշերիք չորս կողմանէ պաշարած կը կենային, եւ թող չէին տար որ դրսէն ամենեւին կրակը մարելու օգնութիւն գայ. բոլոր դռները բռնելով՝

Ապագայի համար լինելու համարձակ լինելու համարձակ : — Մասնա-
 փայլուն ինչ շինելու համարձակ լինելու համարձակ : — Մասնա-
 համարձակ լինելու համարձակ :

Թե որ պատմութեան մէջ իրենք զիրենք զօրաւոր
 կարծելով, եւ բարձրամտութեամբ ու յանձնապաս-
 տանութեամբ՝ ուրիշներուն խրատն արհամարհելով ու
 իրենց սուանձնական կարծեաց հետեւելով՝ չարաչար
 կործանողներու օրինակ չունենայինք, միայն առ Մուս-
 տաֆա փաշային կործանման օրինակը բաւական էր՝
 դժբախտութեամբ ամէն ժամանակ եւ ամէն տեղ
 գտնուող ինքնահաւան ու յանձնապաստան մարդիկ-
 ներուն աչքը բանալու :

Ինչպէս որ յառաջագոյն ըսինք, արդէն քանի մը
 օր էր (Նոյեմբերի 10էն, 1808, սկսեալ,) որ դրսերէն
 օսաստիկ բազմութիւն մայրաքաղաքը կը թափէր եւ
 դրդուութիւնն երթալով կը սաստկանար : Ռամազան
 ամիսը լմրննալու վրայ էր, եւ Եէնիշէրիք կ'աճապարէին
 բանը շուտով զլուխ հանել, որովհետեւ Մուստաֆա
 փաշային որոշման համեմատ՝ նոյն ամիսն անցնելուն պէս՝
 բոլոր Եէնիշէրիք կամ նոր դրուած զինուորական զըն-
 դերուն մէջ պիտի մանէին եւ կամ քաղքէն ելլէին :
 Արդէն շատերը ստիպուած էին ան իրենց ատելի զնդե-
 բուն մէջ մանելու, որպէս զի անօթութենէ չմեռնին :
 Աւերջապէս վէզիրն իր մէկ գործողութեամբն ապստամ-
 բութեան փրթելը փութացուց :

Նոյեմբերի 15ին՝ Մանուկ Պէյին իրեն հետ վերջին անգամ տեսնուելուն երկրորդ օրը, Մուստաֆա փաշան հետն իր զօրքերէն 200 հոգւոյ չափ մարդ առած՝ դենպետին այցելութեան դնաց: Հոնկից ելլելու ատեն՝ տեսնելով որ բոլոր հրապարակն ու փողոցները բազմութեամբ լեցուն են եւ կատկածելով որ իրեն դէմ գէշ դիտաւորութիւն մ'ունենան, քովիններուն պատուիրեց որ զօրքը մտադիր ու պատրաստ ըլլայ, եւ բազմութիւնը բռնութեամբ ձեղքելով յառաջ երթան: Հոն եզոզները՝ որոնք քստ մեծի մասին իրեն դէմ ատելութեամբ լեցուած էին, աս ալ տեսնելով՝ խիստ սաստիկ սյլայլեցան ու բարկացան, եւ շուտ մը ասդին անդին տարածուելով՝ սկսան իրարու հոգի տալ եւ ուրիշներն ալ զրգուել որ զէնք առնեն եւ ընելիքնին շուտով լմնցնեն:

Իսկ վեզիրն ապարանքը կ'երթայ եւ իր քովն եզոզ 3—400ի չափ սէյֆլններուն զխաւորն եզոզ Չազրը հազարապետին կը հրամայէ որ նոյն մարդիկն իրենց տեղերը խաւրէ: Ասիկա՝ որ հաւատարիմ ու քաջ մարդ մըն էր, արդէն ապոտամբներուն զրգուութեան ու պատրաստութեան տեղեակ ըլլալով՝ կ'աղաչէ որ նոյն գիշեր ապահովութեան համար զօրքը ներսը պահեն: Բայց Մուստաֆա մտիկ չընելով՝ հրամանը սաստիկութեամբ կը կրկնէ եւ ինք կանանոցը կը քաշուի: Չազրը հազարապետը թէպէտ չհամարձակիր իր տիրոջ յայտնի հրամանին դէմ ընելով՝ ամէնքն ալ ներսը պահել, բայց իբրեւ թէ ներքին ազդեցութեամբ մը պատահելիքը գուշակելով՝ մէջերնէն ամենէն քաջերէն ու ամենէն հաւատարիմներէն քառասուն յիսուն հոգւոյ չափ մարդ հոն կը պահէ:

Մէյ մ'ալ կէսգիշերէն քիչ մը ետքը քաղքին

նչ ներսէն դուրս, ոչ ալ դրսէն ներս մարդ կը թողուին: Ախճաննին ան էր՝ որ վէզիբը կամ ներսը մնալով՝ այրի եւ կամ եթէ դուրս ելլելու յանդգնի՝ նէ՛ բռնեն մեռցնեն:

Այն միջոցին Չազըր հազարապետը տեսնելով որ կրակը կեցած տեղերնին չորս կողմանէ կը պաշարէ, դարձաւ փաշային ըսաւ. Տէր, ինձի հրաման տուէք, իմ քաջ ընկերներու հետ դուրս յարձակիմ. ապահով եղէք որ քանի մը բուպէի մէջ բոլոր հրապարակը կը մաքրեմ, մարդ չեմ թողուր: Իրգք ալ աս բանս՝ թէպէտ դժուար եւ յանդգնական գործք էր, բայց բոլորովին անկարելի չէր. ինչու որ ստոյգ է՝ քաղքին մէջ Եէնիչէրիք ու իրենց կողմնակիցները շատ բազմաթիւ էին, բայց Մուստաֆա փաշան սրտերնուն մէջ այնպէս վախ էր ձգեր, որ իսկզբան հազիւ 6—700 հոգի համարձակած էին պալատին բոլորտիքը ժողվուելու. ասոնք ալ արդէն աղէկ ջարդ մը կերած եւ աշուրնին սաստիկ վախցած ըլլալով, հաւանական էր որ չէին յանդգներ երկայն ատեն դէմ դնելու. մանաւանդ որ չէին գիտեր թէ վրանին յարձակողներն որչափ մարդ են եւ անշուշտ կը կարծէին թէ ներսը դեռ շատ բազմութիւն կայ: Ի վերայ այսր ամենայնի վէզիբն իրեն եղած իմաստուն առաջարկութիւնը մերժեց. ուստի եւ ապստամբները տեսնելով որ իրենց դէմ ելող չկայ՝ երթալով խիստ բազմացան, այնպէս որ քիչ մը ետքը թուերնին 5—6000ի հասաւ:

Ասոնք այսպէս վէզիբին ապարանքը պաշարած ատեն, մէկալ կողմանէ իրենց դաւակիցները գունդ գունդ եղած՝ կանոնաւոր զօրաց զօրանոցներուն վրայ կը յարձակէին: Ասոնցմէ ոմանք թէպէտ քաջութեամբ պատերազմելով՝ Եէնիչէրիներէն շատ մարդ կը ջար-

դէին. բայց ի՛նչ օգուտ, կարծես թէ իյնողներուն արիւնէն՝ տասնապատիկ աւելի Եէնիշէրիք կը բուսնէին, որոնց անհնարին բազմութեան դէմ շէին կրնար դիմանալ: Ամա՛նք ալ առանց պատրաստութեան գտնուելով՝ ամենեւին իսկ շէին կրնար դէմ դնել. կը գտնուէին այնպիսիներ ալ՝ որոնք կամ ներքուստ անոնց կողմն ըլլալով կամ վախերնէն անոնց կողմը ձեւանալով, Մե՛նք ալ Եէնիշէրի ենք կը կանշէին ու ապստամբաց կողմը կ'անցնէին:

Իսկ Մուստաֆա փաշան, թէպէտ եւ յառաջագոյն գոնէ դրսանց ամենեւին վախ չէր ցուցրներ, ի վերայ այսր ամենայնի կ'երեւայ որ բոլորովին անկասկած ալ չէ եղեր, որովհետեւ հիմակուան գտնուած վիճակը զուշակելով, հարկաւորութեան ատեն ապաստանարան մ'ունենալու համար՝ պարտիզին մէջ ամուր քարուկիր շէնք մը շինել տուած էր, որուն տակ հաստատուն գետնափոր մ'ալ կար: Աս շէնքին մէջ միշտ զէնք եւ պատերազմի պաշար ու քանի մ'օրուան կերակուր կը գրանուէր, միանգամայն տակէն ալ ական մը փորուած էր: Արդ երբ որ տեսաւ թէ կրակն ամէն բան կը լափէ մութիր կը դարձընէ եւ չորս դին պաշարելով՝ կեցած տեղւոյն կը մօտենայ, ընտանիքն ու խել մը ոսկի եւ պատուական քարեր հետն առած՝ քովի «էյֆէննէրու» հետ գնաց ան շէնքին մէջ մտաւ. ընտանիքը գետնափորին մէջ ապահովընելով՝ ինք իր մարդիկներուն հետ մեկտեղ պատերազմելու պատրաստութիւն սկսաւ տեսնել: Ար յուսար որ զէթ քիչ մը ատեն հոնտեղը ինք զինքն ապստամբաց դէմ կրնայ պաշտպանել, եւ նոյն միջոցին իր կողմնակիցները բանն իմանալով՝ զօրօք օգնութեան կը հասնին, զինքը կ'ազատեն: Պալատին մէջ գտնուող ուրիշ մարդիկները՝ որոնք ըստ մեծի մասին ի ծածուկ

ապստամբաց կողմը շահուած , եւ ոմանց ըսածին նայելով՝ նոյն իսկ կրակ ձգելու օգնած ու գործակից եղած էին , արդէն յառաջագոյն զանազան կողմանէ սպրդած դուրս ելած էին :

Այսպէսով վեղիրին բոլոր պալատը քիչ ատենուան մէջ բոցերուն ճարակ եղաւ , եւ ան մեծակառոյց շէնքը քանի մը ժամու մէջ մոխրոյ ու փլատակի կոյտ մը դարձաւ : Որովհետեւ ապստամբաց ատելութեան ու կատաղութեան գլխաւոր , կրնայ ալ ըսուիլ նաեւ՝ միակ նպատակը Մուստաֆա փաշան էր , անոր համար ատուան դէմ երբ որ կրակին սաստկութիւնն իջաւ , ներս մտան սկսան փլատակներուն մէջ իր գիակը փնտռել , որպէս զի թէ մեռնելուն վրայ ապահով ըլլան եւ թէ իրենց կատաղութիւնն անոր անշնչացեալ մարմնոյն վրայ յաղեցրնեն : Աս գործողութեան զբաղած ատեննին՝ պարտիզին մէջի քարուկիր շէնքն ամբողջ տեսնելով՝ կասկածի գացին որ չըլայ թէ վեղիրը հոն պահոււած կենայ : Բայց տարակոյտնին լուծելու համար երկայն ժամանակ մտածել հարկ չեղաւ . մէկէն վրանին ան կողմէն տեղացող հրացաններու զնդակները յայտնեցին իրենց Մուստաֆա փաշային ներկայութիւնը : Աս տեսնելով՝ սկսան բազմութեամբ շէնքին վրայ յարձակիլ եւ մէջններուն հետ պատերազմիլ , յուսարով որ քիչ ատենուան մէջ կը յաղթեն : Բայց յաղթութիւնը կարծածնուն չափ դիւրաւ չկրցան ձեռք ձգել : Ղանն զի ներսինները բոլոր ընտիր ու քաջ մարդիկ ըլլալէն զատ՝ վերջին աստիճանի յուսահատութեամբ կը պատերազմէին . միանգամայն իրենք ծածկուած ըլլալով՝ գրեթէ թնամիներէն անկտակած ու ապահով էին : Ասանկով ապստամբներէն խիստ շատ մարդ ինկաւ , այնպէս որ քիչ մը ետքը սկսան լքանիլ . եւ ոմանք մեռնելով կամ

վերաւորելով, ամանք ալ ձգելով երթալով՝ դուրսը քիչ մարդ մնաց:

Չազրը հազարապետ աս տեսնելով վեղիբին ըսաւ. Տէր, հոս այսպէս փակուած կենայն աղէկ չէ. կրնայ ըլլալ որ ապստամբները նորէն շատնան եւ աւելի եւս բազմութեամբ ու աւելի կատաղութեամբ վրանիս յարձակելով՝ դէմ չկարենանք դնել. հիմակ յարմար ժամանակն է որ հոսկից դուրս ելլենք: Ես իմ քաջ ընկերներովս հրամանոցդ ու ընտանեացդ չորս կողմն առնելով՝ արդէն լքած ու վհատած խաժամուժին մէջէն կը կտրեմ կ'անցնիմ: Քանի մը բոպէէն Սօուզ Չէշմէի դուռը կը հասնինք. եւ մէյ մը մենք զմեզ դռնէն դուրս ձգելէն ետեւ՝ ալ վախնալու ամենեւին բան չիմնար: Իսկ վեղիբը՝ որն որ կարծես թէ բոլորովին կուրութեան մէջ ինկած էր, աս իմաստուն առաջարկութիւնն ալ մերժեց. եւ անրմբռնելի հանդարտութեամբ մանաւանդ թէ անհոգութեամբ նստելով՝ սկսաւ ծուխ քաշել:

Ի այց շատ չընաց խոհեմ ու քաջ հազարապետին խօսքը կատարեցաւ: Եոյն ատենները Եէնիշէրիներուն նորէն նորէն օգնութիւն գալով՝ սաստիկ բազմացան ու զօրացան, եւ դրսերը կանոնաւոր զօրաց վրայ եղած յաղթութիւններուն լուրն ետեւէ ետեւ առնելով՝ հոգի առին քաջալերուեցան, ուստի եւ նոր կատաղութեամբ ու գազանութեամբ մը սկսան յարձակում ընել ու կռուիլ: Մէկ դիէն ասանկ սաստիկ կռուած ատեննին՝ մէկալ կողմանէ շէնքին կռնրկի դիէն ամանք վրան ելան, սկսան յարկը քակել: Մէջիններն՝ աս բանս որ տեսան, վհատութեան մէջ ինկան. մանաւանդ որ Չազրըը՝ նոյն ատեն յարկին վրայէն յանկարծ պարպուած հրացանի գնդակով մը զարնուելով՝ ինկաւ մեռաւ: Արդէն քանի մը ժամէ վեր անդադար աշխատու-

Թե՛նէն անհնարին յողնած ըլլալով, երբ որ իրենց քաջ գլուխն ալ կորսնցուցին, ան աստիճանի լքան յուսահատեցան, որ ալ գրեթէ հրացան չէին արձակեր: Աս տեսնելով գրսիներն ալ քիչ մը ժամանակ հանդարտեցան, որով իբր թէ զինադադար մ'եղաւ:

Նոյն միջոցին Մուստաֆա փաշան գլուխը դուրս հանելով՝ խնդրեց որ Եէնիչէրիներուն զլխաւորը կամ Աղան իրեն գայ, հետը խօսելու բան մ'ունի: Արժեւս թէ ապստամբներն իր զարհուրելի կերպարանքը տեսնելով ու որոտման նման ձայնը լսելով՝ վերջին աստիճանի ապշութեան մէջ ինկան, մտացան գանուած վիճակնին, եւ ի նմա տեսնելով նոյն ան Մուստաֆա փաշան՝ որուն անուան իսկ բաւական էր զիրենք գողացընելու, չհամարձակեցան բան մ'ընել. պատասխան տուին որ Եէնիչէրիներու գլուխ չկայ: Նոյն գիշերը ոտք ելած ատեննին՝ տեսնելով որ անիկա բոլորովին իրենց կողմը չէ, զինքն սպաննած էին: Ալեզիրն ան ատեն իր գնդին (Եէնիչէրիներուն) գնդապետը (ռ-սոթան) խնդրեց, որն որ քիչ մը ետքը դալով, անոր ըսաւ. Որովհետեւ ձեր գործքն ինծի հետ է, թող տուէք որ քովիններս ելլեն երթան, եւ ետքը զիս ինչ կ'ուզէք նէ՛ ըրէք: Անոնք մէջերնին քիչ մը խօսելէն ետեւ՝ խոստացան որ դուրս ելլողներուն ամենեւին մնաս չեն ըներ: Ուստի եւ Մուստաֆա փաշան իր ընտանիքը «էյվէններուն» ձեռքը յանձնելով՝ թող տուաւ որ դուրս ելլեն երթան. նոյնպէս քովը գտնուող ուրիշ քանի մը հոգւոյ ալ հրաման տուաւ որ երթան¹. ներսը մնաց մինակ ինք եւ իր մարդիկներէն երկու երեք հոգի:

¹ Աս գլխոյս մէջ պատմուածները՝ մինչեւ նոյն ատեն Մուստաֆա փաշային քով գտնուողներէն մեկուն բերնէն լսելով գրած ենք:

Ըն ատեն տեսնելով որ ալ ազատելիք չկայ, պէտք է որ Եկեղիշէրիներուն ձեռքն իյնայ, քովիններէն մէկուն հրամայեց որ ահանին կրակ տայ: Պատուէրը շուտ մը կատարուելով՝ բոլոր շէնքը սաստիկ ահագին գըրգմամբ օդն ելաւ, եւ Եկեղիշէրիներէն խիստ շատ մարդիկ հոն իրենց գերեզմանը գտան. բայց ինք փաշան ալ փլատակներուն տակ թաղուեցաւ: Իր մարմինը ետքը Եկեղիշէրիք գտան դուրս հանեցին, եւ մայրաքաղաքին փողոցները քաշելով պտրտոցընէն ու քանի մը ժամ ոտքէն կախելէն ետեւ՝ փոս մը նետեցին: — Այսպէս չարաչար վախճան ունեցաւ աս քաջ ու խելացի մարդը, որն որ՝ եթէ խելքին ու քաջութեան չափ խոհեմութիւն ու անսացողութիւն ալ ունենար, ստուգիւ մեծամեծ բարիքներ կրնար ընել. բայց իր մեծ յանձնապաստանութեամբն ու բարձրամտութեամբը՝ չէ թէ միայն ինք կործանեցաւ, հապա նսեւ տէրութեան ալ մեծ վնաս հասցուց:



Մանուկ Պէյ շարժանութի իրող շահանքի զարթոյնն ընդ Ռուս-
 ցոյն իրող Պոլսոյն ի շահանքի :

ԱՊՍՏՆԱՐԻ ԵՔԵՆՅԵՐԻՔԻ Մանուկ Պէյին Մուստաֆա
 փաշային քով ունեցած բարձր աստիճանն ու անոր
 զլխաւոր եւ առաջին խորհրդականը մանաւանդ թէ բո-
 լոր գործողութեանց հողին բլալն աղէկ գիտնալով, եւ
 կարծելով որ ինք անոր բռնութեան գործքերուն հետ ալ
 միաբան ու կամակից է, կրնայ բաւիլ որ զինքն ալ վե-
 զիրին չափ կ'ատէին եւ շատոնցունէ իրեն դէմ ազրայ
 կը կրճատէին : Անոր համար երբ որ մէկ մասերնին վեզիրին
 սպարանքին քով իրենց արիւնդուշտ գործողութեանց
 սկիզբ կ'ընէին, մէկ մասերնին ալ սողին անդին կա-
 նոնաւոր զօրաց հետ կը կռուէին, մէջերնէն խել մը
 մարդիկ ալ ծամբայ ելան, որ երթան զինքը բռնեն,
 մեռցնեն :

Իսկ ինք՝ որ ԵՔԵՆՅԵՐԻՔԻՆԵՐՈՒՆ իրեն դէմ ունեցած
 աստիճան տեղեակ էր, երբ որ լսեց թէ անոնք
 սոք ելեր ու վեզիրին սպարանքը կրակ են ձգեր, թէ-
 պէտ եւ մահն աչքին առջեւ տեսնելով՝ մէկէն քիչ
 մ'այլայլեցաւ, բայց իր բնական քաջասրտութեամբն
 ու պարտքը կատարած մարդու մը խղճի հանգստու-
 թեամբը՝ շուտ մը հանդարտեցաւ, եւ աղէկ սեպեց
 քիչ մը ժամանակ սպասել, որպէս զի ետքը տեսնելով
 թէ բաներն ինչ երես կը բռնեն, ընելէքն սրտէ : Միան-

գամայն Մուստաֆա փաշային՝ իր խօսքին ու խորհրդին դէմ վարուիլն եւ վերջին տեսութեան ժամանակ հետն այնպէս խստութեամբ ու սաստիկութեամբ խօսիլը մտնալով, եւ միայն մինչեւ նոյն ատեն իրեն ցուցուցած սէրն ու բարեկամութիւնը յիշելով, անոր գլուխն եկածին վրայ սկսաւ սրտանց ցաւիլ եւ ինք իրեն կը մտածէր թէ արդեօք կրնայ զանիկա կերպով մը վտանգէն ազատել:

Ինք աս մտածմանց մէջ եղած ատեն՝ մէյ մ'ալ յանկարծ Եէնիչէրիներուն զխաւորներէն մէկը շտապաւ բնակած տան գուռը զարնելով՝ կ'ուզէ որ բանան: Տան բնակիչներն իրար կ'անցնին, կը վախնան բանալու: Բայց դրսինը երգմամբ հաստատելով որ գէշ մտօք եկած չէ, այնչափ կ'աղաչէ կը պաղատի՝ որ վերջապէս կը բանան: Ներս մտնելով եւ իմանալով որ Մանուկ Պէյ հոն է, կը զրուցէ. Մանուկ Պէյին ըսէք որ աճապարէ գլխուն ճարը տեսնէ: Հիմակ Եէնիչէրիներու գունդ մը զինքը հաստեղս փնտռելու պիտի գայ. վայ իրեն, թէ սր ձեռք իյնայ նէ. անշուշտ զինքը պատասպատա կ'ընեն: Թող շուտ մը գաղտ աս անէն ելլէ, ուրիշ մօտաւոր տուն մը պահուրտի եւ հոնկից գուրս չելլէ, մինչեւ որ ես իրեն նորէն ազգարարութիւն չընեմ: Թէ որ, աւելցուց վրան, ըսածներուս ստուգութեան եւ իմ հաւատարմութեանս ու անկեղծութեանս վրայ տարակուսի երթալու ըլլայ, ըսէք իրեն որ ես եղբայր եմ այս անուն մարդուն՝ զորն որ ինք Ռուշտուկ մահուրնէ ազատեց. եւ ես անոր տեղ կ'ուզեմ իր կեանքը պահել: Աս խօսքերն աճապարելով ըսելէն եւ կրկին կրկին յանձնելէն ետեւ որ շուտով փախչի, փութով անէն գուրս ելլաւ ու սաստիկ արագութեամբ աներեւոյթ եղաւ:

Մանուկ Պէյ աս ազգարարութիւնն առնելուն պէս՝ Աստուծոյ իր վրայ ցուցուցած մասնաւոր խնամոց շնորհակալ ըլլալով եւ զինքն Անոր պաշտպանութեան յանձնելով՝ շուտ մը տան յարկին վրայէն սկսաւ փախչիլ եւ ուրիշ մօտաւոր տուն մը գնաց պահուրտեցաւ : Հազիւ թէ վրան քանի մը բոպէ անցած էր, մէյ մ'ալ հեռուէն աղաղակ ու վայնասուն մըն է փրթաւ : Գունդ մը Եէնիչէրի ոտքէ մինչեւ գլուխ զինած՝ սաստիկ կատաղութեամբ կը մօտենային . եւ ան գլխաւոր Եէնիչէրին՝ որն որ փախչելու ազգարարութիւնն բրած էր, առջեւին անցած՝ իրենց կ'առաջնորդէր եւ ուրիշներէն աւելի սաստիկ պոռալով կանչուրտելով՝ Մանուկ Պէյէն վրէժխնդրութիւն առնելու կը գրգռէր : Աս վայրենի գազան դարձած մարդիկ նոյն կերպով անցան իշխանին պահուրտած տան առջեւէն, որն որ երբ որ ան քիչ մը յառաջ եկող Եէնիչէրիին ձայնը լսեց, կարծելով թէ բոլոր բրածն ու ըսածը խաբէութիւն էր եւ միայն իր նոյն տեղերն ըլլալուն վրայ ապահովութիւն ստանալու համար անանկ ձեւացուց, մահն անշուշտ սեպեց : Եւ թէպէտ մեռնիլը հօգը չէր, բայց անկից կը վախնար որ իր թաքստեան տեղը յայտնուելով՝ չըլլայ թէ զինքը պատասպարողներուն վնաս մը հասնի : Եէնիչէրիք առանց տեղ մը կենալու՝ անցան գացին եւ բուն իր տան առջեւը կենալով, մեծ մասը տունը պաշարեցին՝ որ դուրս մարդ չփախչի . եւ միայն ոմանք իրենց առաջնորդին հետ ներս մտան, սկսան ամէն կողմ փրնտուել : Զինքը հոն չգտնելով՝ կ'ուզէին անեցիքը ստիպել որ սէր եղածը յայտնեն . բայց գլխաւորին թող չտուաւ, ըսելով թէ Իրենք ինչ պիտի գիտնան, պարտապ տեղ անմեղ մարդոց վնաս չհասցընենք : Աս զրուցեց եւ սկսաւ ինք զինքն ու իր ընկերները նախատել

եւ ըսել թէ Մինչեւ որ մենք դանդաղութեամբ ժող-
վեցանք եկանք նէ, նոյն անօրէն մահապարտը բանն ի-
մանալով՝ փախեր է, ասկէ ետեւ զինքը հոս փնտռելը
պարսպ է. փուճ տեղ ժամանակնիս հոստեղս չկորսըն-
ցընենք, անշուշտ հեռու տեղ մը դացած պիտ'որ ըլ-
լայ, աճապարենք շուտ մը մէկ մասերնիս՝ քաղքէն
դուրս ելլելու ճամբաները բռնենք, որ գէթ բոլորովին
ձեռքերնէս չփախցընենք, մէկ մասերնիս ալ ուրիշ կող-
մերը մեր ընկերաց օգնելու երթանք: Աս ըսելով առաւ
զիրենք հոնկից հեռացուց:

Ասանկով Մանուկ Պէյ՝ իր բարեսրտութեան ու
ողորմածութեան փոխարէն՝ յայտնի մահուրնէ ազա-
տեցաւ: Բայց դեռ բոլորովին ապահով չէր. որովհե-
տեւ եթէ Եէնիչէրիք յաղթէին եւ զՄուստաֆա փա-
շան մեռցընէին, ինչպէս որ հաւանական կ'երեւար,
կրնար ըլլալ որ զինքն ալ ձեռք ձգէին: Սակայն Աս-
տուած վրան զթալով՝ անկէ վերջն ալ իր խնամոց
տակ պահեց: Երեք օր իր թաքստեան տեղը մնալէն
ետեւ, ան գլխաւոր Եէնիչէրիս՝ իր խոստման համեմատ՝
նորէն եկաւ իմացուց որ ալ ճամբաներուն վրայ իրեն
զգուշութիւն ընող չկայ, ուստի եւ կրնայ հանդիստ ու
անխափան՝ ուզած տեղն երթալ: Մանուկ Պէյ աս ա-
պահովութիւնն առնելով՝ շուտ մը ծպտեալ զգեստով
քաղքէն ելաւ դէպ ի Ռուշճուկ ճամբայ ինկաւ:

Բայց ինչպէս տարբեր էին սրտին հիմակուան
զգածմունքը՝ քանի մ'ամիս յառաջ նոյն քաղաքը
մտած ատեն ունեցած զգածմունքէն: Եկած ատեն՝
իր երկայն տարիներու աշխատութեանց ու մտածմանց
արդիւնքը տեսնելու, Օսմանեան տէրութեան կրկին
պայծառութեան ու նորոգութեան հիմը դրուած եւ
գահին վրայ մեծ ու նորոգող թագաւոր մը գտնելու

յուսով՝ սիրտն ուրախութեամբ լեցուած էր: Իսկ հիմա . . . բոլոր իր աշխատութեանց ու տքնութեանց պատուը կորսընցուցած, իր տէրն ու բարերարը՝ ապիրաաներու զոհ եղած, բոլոր տէրութիւնը տակնուվրայ եւ իր սիրելի թագաւորն ապստամբներու ձեռք մատնուած ձգելով, թախծեալ սրտիւ ու արտմութեամբ գուրս կ'ելէր: Նոյն զգածմանց մէջ էին բոլոր իր բազմաթիւ բարեկամները, որոնց սիրտը յափշտակած էր իր սակաւամնեայ բնակութեան ատեն՝ իր զեղեցիկ բնաւորութիւններովն ու սքանչելի վարմունքովը: Ճամանակին պարագաներուն համար՝ ասանցմէ միայն քիչերը քովը ժողովուած՝ լալով ողբով իրմէ կը բաժնուէին, իբրեւ հաստատուն մտքերնին զնելով թէ աս վերջին անգամն է որ զինքը կը տեսնեն: Բայց թէպէտ իր բարեկամներն ու ծանօթներն այսպէս խոր արտմութեան մէջ էին եւ խիստ մեծ էր իր ցաւն ալ, սակայն ինք բոլորովին առանց մխիթարութեան չէր: Պատահած գոթախտութիւնները խափանելու համար ձեռքէն եկածն բրած բլալը, նոյն քաղքին մէջ բրած բարերարութիւններն ու ողորմածութեան գործքերը, այն ապահովութիւնը՝ զորն որ ունէր թէ իրմէ օգնութիւն եւ նպաստ գտնող աղքատներն ու տառապեալները, իր պաշտպանած որբերն ու այրիները հիմակ իրեն համար անդադար աղօթք կ'ընեն, իր սրտին մեծ մխիթարութիւն ու ցաւոցը թեթեւութիւն կու տային: Մանաւանդ որ բացայայտ տեսնելով թէ յայտնի մահուրնէ ազատիլն իր բարերարութեան պատուին է, հաստատութեամբ կը յուսար որ աս վերջին բրած բարեգործութիւններն Ամենակալին առջեւն ելլելով՝ իր վրայ Անոր պաշտպանութիւնն ու խնամքը կ'իջեցընեն եւ զինքն անկէ վերջն ալ ամէն վտանգներէ զերծ կը պահեն:

Արդ աս ապահովութեամբ ու վստահութեամբ ճամբայ ելաւ Մանուկ Պէյ Կոստանդնուպօլսէն : Եւ գիշեր ցորեկ առանց տեղ մը կենալու յառաջ երթալով՝ հասաւ Ազրիանուպօլսոյ մտերրր, ուր որ նոյն ասեանները կը բնակէր Սուլդան Թաթարլար ըսուած հին ու նշանաւոր ցեղը, որուն անդամներուն ինք յառաջագոյն մեծամեծ ծառայութիւններ բրած ըլլալով՝ խիստ սիրելի էր : Ասոնք զինքն իրօք ալ շատ սիրով եւ ուրախութեամբ ընդունեցան, ու մեծ պատուով քանի մը օր քովերնին պահելէն եւ հանգչեցրնելէն ետեւ՝ ճամբորդութեան բոլոր պիտոյքը հոգացին, եւ ապահովութեան համար քովը մարդիկներ ալ տալով՝ ճամբայ դրին :

Այսպէս առանց վտանգի հանգստութեամբ հասաւ Ռուշտուկ, ուր որ իր ազգականներն ու բարեկամները զինքն իրենց ակնկալութեան դէմ ողջ առողջ եւ անվնաս տեսնելով՝ շատ ուրախացան : Բայց ինք Կոստանդնուպօլսոյ նոյն ատենուան վիճակը մտածելով եւ գիտնալով որ թշնամիներն իր ետեւէն իյնալէն ու կենացը դարան գործելէն պիտի չզաղրին, հոն կենալն ապահով չտեսցայ. ուստի եւ ընտանիքն ու ընչից մէկ մասը հետն առած՝ Պուքրէշ անցաւ :



Մեծի Պետի Պարեւ հարարին -- հն ըրն Բրիտի :
 — Ռոմոն ի Օւոնիտնյ Տէլ իւզաւնիտն Տիւրք Իւււն :
 — Ասարիտնի Իրիւնն նոնիւլ :

Որովհետեւ Կոստանդնուպոլսի մանաւանդ թէ բոլոր Օսմանեան տէրութեան վիճակն այնպէս շփոթութեան մէջ էր՝ որ քիչ ատենուան մէջ շիտկուելու ակնկալութիւն չկար, անոր հակառակ Աէնիշէրիք ու իրենց կողմնակիցներն օրըստօրէ աւելի կը հաստատուէին, եւ կարծես թէ բոլոր ճիգերնին ան էր՝ որ նորոգութեանց ու փոփոխմանց կողմն բլտղները ջնջեն վերցրնեն, եւ եթէ կարելի է՝ մինչեւ նոյն ատեն եղածներուն յիշատակն ալ խլեն, անոր համար Մանուկ Պէյ՝ քիչ մը ժամանակ Պուքրէշ քաղաքը իրբեւ օտարական անորոշ վիճակի մէջ անցրնելէն ետեւ՝ որոշեց որ զէթ առժամանակեայ բնակութիւնը հոն հաստատէ, յուսարով որ իր թշնամիքը նոյն քաղքին մէջ իրեն վնաս մը չեն կրնար հասցրնել :

Աս որոշումն ընելուն պէս՝ սկսաւ մտածել թէ իր հարստութիւնն ու ժամանակն ինչ բանի գործածէ, որ թէ իրեն շահաւոր ու թէ հասարակաց օգտակար բլայ . եւ ամենէն աւելի յարմար սեպեց մշակութեան զբաղիլը : Անոր համար արդէն ան կողմերն ունեցած երկիրներուն վրայ՝ քանի մը գեղ ու ագարակ զնեց, որոնց հետ միանգամայն հողատէրութեան իրաւունք կապուած էր, եւ մէջի բնակիչներն ու զեղացիները հողատէրին կամ

երկրին տիրոջ հպատակ էին : Հոն իբրեւ նոր Աինկին նատոս մը սկսաւ երկրագործութեան ետեւէ ըլլալ . եւ այն անձը՝ որ իբրեւ տէրութեան մեծ պաշտօնատէր, իբրեւ երեւելի քաղաքագէտ ու խորհրդական՝ ժամանակը քաղաքականութեան դժուարին նիւթերուն վրայ զբաղելով կ'անցընէր, ալ հիմայ միտքն ու խորհուրդները՝ երկրի մշակութեան գործքերու կը զբաղեցընէր : Բայց իր գլխաւոր մտածմունքը չէր այնչափ իր երկիրներուն նիւթական որպիսութիւնը լաւացընել եւ աւելի մուտք ունենալ անոնցմէ, որչափ իր հպատակներուն վիճակն ազնուացընել, իրենց ծանր ու դժուարին աշխատութիւնները ձեռքէն եկածին չափ թեթեւցընել, ըստ կարելոյն՝ իրենց հանգստութիւն ու դիւրութիւն շնորհել, մէկ խօսքով ըսելու համար՝ անոնց կեանքն երջանկացընել :

Օչարմանալի ու միանգամայն սրտաշարժ տեսարան մըն էր՝ զեղացոյց գլխաւորներուն հետ կեցած՝ ասնիւթերուն վրայ խօսիլը տեսնել : Ըստ պատահման զինքը նոյն վիճակին ու զբաղման մէջ տեսնողը՝ չէր կրնար կարծել որ մեծ հարստութիւն ունեցող հողատէր մըն է իր հպատակաց մէջ, հապա հողացող ու խնամոտ հայր մը՝ իր սիրելի զակրներուն մէջ, այնչափ սիրով ու մտերմութեամբ կը վարուէր անոնց հետ : Իսկ անոնց վրայ ունեցած գութն ու գորովն արտաքոյ կարգի էր . բաւական էր՝ որ մէկն իր խեղճութիւնն ու կարօտութիւնը առջեւը դնէր, անմիջապէս անոր կողմանէ օգնութիւնն ու նպաստը պատրաստ կը գտնէր : Աս պատճառաւ իր հպատակները զինքն ճշմարիտ հայր կը սիրէին . ամէն մարդ անոր համար աշխատած ատեն՝ այնպիսի փութով ու սիրով կը գործէր՝ իբրեւ թէ իր անձնական շահուն համար գործէ : Այսպէսով՝ ինչպէս

ըստ ինքեան կրնայ խմայուիլ չէ թէ միայն իր դիտած գլխաւոր վախճանին հասաւ ու հպատակներն երջանկացուց, հապա նաեւ իր երկիրները խիստ յառաջացան ու ծաղկեցան, որով եւ քիչ ատենուան մէջ հարստութիւնը գրեթէ կրկնապատկեցաւ :

Բայց աս երեւելի անձը սիրողներն ու յարգողները՝ միայն իր հպատակները չէին . քաղքին ու մօտաւոր տեղերուն բոլոր նշանաւոր անձիւնքն ու իշխանները զինքը շատ կը մեծարէին, եւ ամէնքն անոր բարեկամութիւնը կը փնտռէին, որովհետեւ անոր բարեկամ համարուիլը՝ մեծ պարծանք մը կը սեպուէր : Զինքը մէկ անգամ տեսնելը բաւական էր վրան մեծ համարում ու սէր ստանալու . իր գեղեցիկ բնաւորութիւններովը՝ առջի տեսութեան մէկէն ամենուն սիրտն իրեն կը յափշտակէր : Հարստին ու աղքատին, մեծին ու պզտիկին մէջ՝ իր վրայ մինակ մէկ ձայն կար . եւ ան ձայնն այնպիսի էր՝ որ մարդ աւելի բանի մը չէր կրնար բաղձալ : Ասոնցմով միանգամայն Գրան առջեւն ունեցած համարումն ալ շատ մեծցաւ . եւ իր հաւատարմութիւնն անանկ յայտնի էր՝ որ վրան ամենեւին կասկած մը չըլլալէն զատ՝ մեծ ալ վստահութիւն կար : Աս ալ բաւական չէ, նաեւ Ռուսաց տերութիւնը վրան մեծ համարում ունէր եւ Ռուսք զինքն իբրեւ մեծ քաղաքադէտ ու իբրեւ արդարասէր մարդ կը յարգէին : Ըսածնիս յայտնի կ'երեւայ հետեւեալ դէպքէն, որն որ Մանուկ Պէյին կենաց ամենէն նշանաւոր դիպուածներէն մէկն է, եւ իրօք ալ ամենամեծ քաղաքագիտի մ'ալ պարծանք ըլլալու բաւական է :

Գրեթէ չորս տարիէ վեր Ռուսաց եւ Օսմանեանց մէջ պատերազմ կար, եւ նոյն տարիներուն մէջ շատ անգամ իրարու հետ զարնուելով՝ երբեմն մէկ կողմը

երբեմն մէկալ կողմը կը յաղթէր : Քանի քանի անգամ ուզած էին հաշտութիւն ընել, բայց կերպով մը չէր յաջողած . աս բանիս արդեւք եղող ուրիշ ներքին պատճառներէն զատ՝ ան ալ կար որ նոյն ատենները Եւրոպայի գրեթէ ամէն տէրութիւններն իրարու հետ թշնամութեան ու պատերազմի մէջ դանուելով եւ մէկ կողմը կամ մէկալ կողմը գրգռելով, հաշտութեան խափանարար կ'ըլլային : Աերջապէս երկու տէրութիւնք ալ պատերազմէն եւ աս անորոշ վիճակէն ձանձրանալով՝ 1812ին մոքերնին գրին որ ալ կերպով մը հաշտութիւն ընեն : Խաղաղութեան վրայ խօսելու համար Պուրէշ քաղաքն որոշուեցաւ, եւ երկու կողմէն ալ հոն մարդիկ խաւրուեցան : Սակայն աս հեղուս ալ խաղաղութեան պատգամաւորները կամ դործակալները չկրնալով պայմաններուն վրայ իրարու հետ միաբանիլ, բանը խիստ շատ երկրնցաւ : Աս տեսնելով՝ երկու կողմն ալ՝ որ, ինչպէս ըսինք, Մանուկ Պէյին հաւատարմութեան, արգարասիրութեան, միայն հասարակաց բարոյ բաղձացող եւ միանգամայն քաջ քաղաքագէտ ըլլալն աղէկ գիտէին, զինքն ի ծածուկ իբրեւ մէջերնին իրաւընսիր գրին եւ իրեն յանձնեցին որ աս բանս գլուխ տանի, իւրաքանչիւր տէրութիւն՝ մէկալ տէրութեան ընտրութիւնը գիտնալով :

Ստուգիւ ծանր եւ դժուարին դործք էր ասիկա, եւ մեծ էր երկու տէրութեանց ալ իր վրայ ունեցած վրաստահութիւնը : Բայց ինք՝ իրեն առաջարկուած պաշտօնը յանձն առնելու համար՝ աւելի մեծ վստահութիւն պահանջեց . այս ինքն՝ ուղեց որ երկու տէրութիւնք ալ անկեղծութեամբ ի ծածուկ յայտնեն իրեն թէ խաղաղութեան դաշանց պայմաններուն մէջ ամէն մէկուն վերջին սահմանն ուր է, կամ թէ իւրաքանչիւր տէրու-

Թիւն մինչեւ ուր կ'ուզէ եւ կրնայ զիջանիլ դիմացինին: Ինչպէս ըսինք՝ ասիկա արտաքոյ կարգի մեծ վտառահաւ թիւն պահանջել էր. ի վերայ այսր ամենայնի Մանուկ Պէյ երկու տէրութեանց առջեւն ալ այնպիսի մեծ համարում ունէր, որ երկուքն ալ առանց դժուարութեան իր խնդիրը կատարեցին: Եւ իրենց ակնկալութեան ու վտառահաւութեան մէջ չվրիպեցան ալ:

Մանուկ Պէյ երկու կողման վերջին պայմաններն իմանալով, իբրեւ ճշմարիտ արդարասէր եւ իր պարտքին ծանրութիւնը ճանչցող մարդ՝ ըստ ամենայնի միջին ճամբան բռնեց, եւ մտքին մէջ ան որոշեց եւ առաջարկեց, որն որ թէ արդարութեան համաձայն եւ թէ երկու կողման ալ օգտակար կը տեսնէր: Անոր համար երկու կողմն ալ սիրով եւ ուրախութեամբ ընդունեցան իր որոշումը: Ասան զի երկու տէրութիւնք ալ, վերը զրուցածներնուս պէս՝ պատերազմէն ձանձրացած ըլլալով եւ միանգամայն ժամանակին պարագաներէն ու Եւրոպայի ընդհանուր վիճակէն ստիպուելով՝ Մանուկ Պէյին առջեւը դրած պայմաններնուն մէջ շատ մեծ զիջում ըրած էին: Իսկ ինք ոչ մէկին եւ ոչ մէկալին՝ չափէն աւելի տալով, հապա իր վրայ դրուած պարտաւորութեան համաձայն՝ արդարութեամբ վարուելով, բանը երկու կողման բաղձացածէն եւ յուսացածէն աւելի աղէկ կերպով լմնցուց: Ասով այնչափ ժամանակէ վեր բաղձացուած խաղաղութիւնը հաստատուեցաւ: Անոր համար ալ Մանուկ Պէյին երկու տէրութեանց առջեւ ունեցած մեծ համարումն իրաւամբ շատ աւելցաւ. եւ Ռուսաց կայսրն իր հաճութիւնը ցուցնելու համար Ալլատիմիրի կարգին ասպետութեան շքանշանը տուաւ իրեն:

Աս գործողութիւնը՝ որն որ իր շորս հինգ տարւան

մշակական եւ առանձնացեալ կենաց մէջ իբրեւ զարտուղութիւն մըն էր, այսպէս պատուով ու փառօք լմբնցընելէն ետեւ՝ Մանուկ Պէյ նորէն իր ցանկալի առանձնութեան դարձաւ. եւ առջինէն աւելի փութով իր երկրագործական զբաղմանց ետեւէ սկսաւ իյնալ: Բայց ափսոս որ նախանձուն ու թշնամութեան թունա որ խայթոցները զինքն երկայն ժամանակ հանդարտ չթողուցին: Իր թշնամիքը՝ որոնք իր կենաց դարան գործելէն եւ զինքը Գրան աչքէն հանելու ջանալէն երբեք չէին դադրեր, կարծես թէ նոյն ժամանակ իրենց ջանքն ու շարութիւնն աւելի եւս սաստկացուցին, եւ ամէն կերպով ետեւէ կ'ըլլային իրենց շար նպատակին հասնելու: Եւ նոյն ատենները տէրութեան բոլոր սանձերը ձեռքն ունեցողին (չալէտ էֆէնտիին) արիւնուռ շարձութեան նայելով՝ հաւանական էր որ կարենային իրենց աս շար կամքը դուրս տանիլ: Մանուկ Պէյին մայրաքաղաքին մէջ ունեցած բարեկամները՝ նոյն բաներն իրեն կ'իմացընէին, եւ գլխաւորաբար վերջին պարագան առջեւ դնելով՝ կը յորդորէին ու կ'աղաչէին որ ինք զինքը շուտով ապահովացընէ օտար տէրութեան երկիր մ'անցնելով:

Արկայն ժամանակ դէմ դրաւ Մանուկ Պէյ աս խրատներուն ու աղաչանքներուն. որովհետեւ իր հայրենասիրութիւնը թող չէր տար որ իր տէրութեան երկրէն դուրս ելլէ, վասն զի կը յուսար որ հոն մնալով՝ միշտ առիթ կ'ունենայ անոր ծառայութիւն ընելու. միանգամայն կը վախնար որ օտար երկիր երթալով՝ իր հաւատարմութիւնը կասկածի տակ կ'էջնայ եւ թըշնամեաց զբաղարտութիւնները կը հաստատուին. դարձեալ իր սիրելի հպատակներէն ալ չէր կրնար բաժնուիլ: Բայց վերջապէս երբ որ ազդարարութիւնները

խիստ շատցան, ալ աւելի երկայն ատեն հոն կենալն անխոհեմութիւն սեպելով՝ հարկադրեցաւ ելլել ուրիշ երկիր մ'երթալ: Սակայն վերը յառաջ բերուած պատճառին համար չուզեց Ռուսաստան երթալ, ուր որ ապահով էր թէ մեծ ընդունելութիւն կը գտնէ, հապա Աւստրիայի Գրանսիրուանիա գաւառն անցաւ (1813ին, Ապրիլի սկիզբները): Խօսքերնիս շատ շերկընցընելու համար՝ չենք ուզեր իր հպատակներէն բաժնուելու ատեն՝ անոնց ունեցած ցաւոյն ու կսկծին վրայ խօսիլ. աս միայն կը զուցենք որ ամէն մէկերնին զինքը կորսընցընելով՝ իրենց միակ ապաւենն ու օգնականը, իրենց սիրելի հայրը կորսընցընելու վտանգի մէջ եղածի պէս՝ լարով սղբով իրմէ կը բաժնուէին: Երկայն ատեն աս ցաւն ու տրամութիւնը տեսեց, եւ մինչեւ հիմայ իր յիշատակը մէջերնին անմոռաց մնացած է:



մէկ տարւան միջոցը՝ կրնանք իր բուն պանդխտութեան ժամանակն անուանել :

Մանուկ Պէյինն աս անորոշ վիճակին ու մեծ արքայ-
մութեան մէկ պատճառն ալ ան էր՝ որ իր ընտանիքէն
հեռու կը գտնուէր : Պուքրէշէն ելած ատեն՝ զանազան
պարագաներ չէին ներած իր ամուսինն ու զակընները
մէկտեղ առնելու . իսկ հիմակ անոնց անձկոյնն ու կարօ-
տովը մաշելով՝ թէպէտ եւ շատ կը ջանար ու ետեւէ
կ'ըլար որ քովը բերել տայ, բայց իր թշնամեաց չա-
բութիւնն աս իրաւացի փափաքանաց կատարումն ան-
կարելի կ'ընէր :

Հոս հարկ է որ փոքր տեղեկութիւն մը տանք իր
անական կենաց վրայ, զորն որ՝ իր հրապարակական կե-
նաց պատմութեան թելը չկտրելու համար՝ մինչեւ հի-
մայ շոյշատակեցինք : — Ինչպէս որ պատմութեանս
սկիզբները անցողակի նշանակեցինք, Մանուկ Պէյին
առաջին կողակիցը՝ գրեթէ ինը տարի հիւանդութիւն
կրէլէն ետեւ՝ առանց զուակի մեռաւ : Մանուկ Պէյ
1795ին երկրորդ անգամ կարգուելով՝ քանի մը տարի
վերջը իր աս աշխարհքիս մէջ ունեցած մեծ փափաքն
բոտ մասին կատարուեցաւ՝ աղջիկ զուակ մ'ունենալով :
Բայց աս ուրախութիւնը բոլորովին կատարեալ չէր՝
քանի որ չունէր մանչ զուակ մը՝ որն որ իր տունն ու
ինչքը ժառանգէր եւ անունը յառաջ տանէր : Աս իր
մեծափափաք իղձն ալ կատարուեցաւ (1810ին, Մարտի
7ին) երբ որ ծնաւ իր անդրանիկ որդին, որուն անուն
դրաւ Յովհաննէս Մուրատ . եւ առաւել եւս իր ուրա-
խութիւնը մեծցաւ ետեւէ ետեւ ուրիշ զակըններ ալ
ստանալով :

Արդ ինք իրմէ կրնայ իմացուիլ որ ասանկ պարա-
գայից մէջ սրչափ դժուար ու ծանր էր իրեն իր սիրելի

ընտանիքէն բաժնուած մնալը: Անոր համար ալ, ինչպէս վերը զրուցեցինք, ամէն միջոց ի դորձ կը դնէր՝ որ զանոնք իր թշնամեաց դարանակալութիւններէն ազատելով՝ քովը բերել տայ: Աերջապէս ուրիշ բոլոր փորձած միջոցներն օգուտ չընելով՝ Ռուսաց կայսեր դիմեց, եւ անոր պաշտպանութեամբը՝ հաղիւ տարիէ մը աւելի ժամանակ անցնելէն ետեւ՝ ընտանիքը կրցան Պուքրէշէն ելլել (1814ին, Յունիսի կէսերը) եւ Աւստրիայի երկիրն անցնիլ: Աւելի կրնայ մարդ իմանալ՝ քան թէ խօսքով բացատրել թէ Մանուկ Պէշին եւ թէ իր ընտանեաց ուրախութիւնը, երբ որ՝ այնչափ հեռաւորութենէ ետեւ՝ վերջապէս կրցան իրարու հետ միանալ Գրոնշդաա (Պրաշով) քաղաքը, ուր որ Մանուկ Պէշ իր նոյն ատեն բնակած Հերմանշդաա քաղքէն իրեններուն դիմացն եկած էր:

Աս կողմանէ բաղձանքը կատարուելէն ետեւ՝ սկսաւ որոշակի մտածել իրեն հաստատուն բնակութեան տեղ մը գտնելու վրայ: Եւ թէպէտ Աւստրիայի կառավարութեան կողմանէ իրեն զանազան օգտակար առաջարկութիւններ կ'ըլլային, բայց ինք չէր ուզեր զանոնք մէկէն ի մէկ ընդունիլ. որովհետեւ իրեն անանկ կ'երեւար որ եթէ Ռուսիայի մէջ հաստատուելու ըլլայ նէ, հոն աւելի ազգայինք գտնուելով՝ ազգին աւելի մեծ բարիք կրնայ ընել՝ քան թէ Գրանսիլուանիայի մէջ: Միտքնան կու դար որ Պետարաբիա գաւառին մէջ նոր քաղաք մը շինել տայ, եւ բնակութիւնը հոն հաստատելով եւ իր հին բարեկամներն ու ծանօթները եւ զանազան կողմերէ Հայազգիք ժողվելով, անոնց մէջ իր կեանքն անցընէ:

Ինք աս մտածմանց ու վարանմանց մէջ եղած ատեն՝ մէյ մ'ալ հրատարակուեցաւ որ բոլոր Եւրոպայի թագաւորներն Աւստրիայի մայրաքաղաքը պիտի ժող-

վուին: Արծես թէ աս լուրն իրեն ազդարարութիւն
 մ'եղաւ. ուստի թէպէտ հազիւ քիչ մը ժամանակ էր՝
 որ իր ընտանեաց դողը սկսած էր սփռիլ, սակայն
 եւ այնպէս՝ ալ իր անորոշ վիճակին վերջ մը տա-
 լու մտք՝ ելաւ Ախէննա եկաւ (Յուլիսի մէջ): Նոյն
 մայրաքաղաքին մէջն ալ շուտ մը ճանչցուելով՝ սկսաւ
 ամենէն իր աստիճանին վայլած պատինն ու մեծարանքն
 ընդունիլ: Այսին պէս վեհութիւնն ու իշխանական
 մեծութիւնն մը կը փայլէր, որ անմիջապէս անունը՝ Հայ-
 կազնեան իշխան դրին, եւ զինքն ուրիշ կերպ չէին ա-
 նուաներ: Տեղ մը զացածին պէս՝ սաստիկ բազմութիւն
 կը ժողովէր, եւ եթէ երկրնկեկ ալ մնալու ըլլար նէ՝
 ժողովուրդը ժամերով կը սպասէր՝ որ մէյ մը զինքը
 տեսնէ. տեսնուած ատեն ալ՝ ամէն մարդ մեծ յարգու-
 թիւն կը ցուցնէր: Մանաւանդ իր առատածեռնու-
 թեանն ու ողորմածութեան վրայ ամէնքը կը զարմա-
 նային: Երկայն պատերազմներու պատճառաւ շատ մար-
 դիկ աղքատացած ու վերջին աստիճանի կարօտու-
 թեան մէջ ինկած ըլլալով՝ խիստ շատերն իրեն կը դի-
 մէին, եւ ինք զամէնքը դո՛հ կ'ընէր: Արծես թէ իր
 բնութեան դէմ էր մէկէ մը երես դարձնելը, մէկու
 մը խնդիրքը մերժելը:

Ախէննայի մէջ մնացած ժամանակը՝ թէ Ռուշ-
 ճուկ ու Արօտանդնուպոլիս եւ թէ Պաքրէշ անցու-
 ցած կեանքէն տարբեր կեանք մը կ'անցընէր: Թէ որ
 առջի տեղերը նախ իր վաճառականութեան հետ էր եւ
 ետքը բոլորովին քաղաքականութեան կը զբաղէր, իսկ
 երկրորդ տեղը՝ դրեթէ բոլոր երկրագործութեան եւ իր
 հպատակաց երջանկութեան վրայ մտածելով ու աշ-
 խատելով կ'անցընէր ժամանակը, ուստի եւ իսկզբան
 վաճառականն ու քաղաքագէտ եւ վերջը երկրագործ ու

տնտես էր, կրնայ ըսուիլ որ հիմակ ալ բոլորովին ուսումնական էր: Ասան զի, ինչպէս որ պատմութեան սկիզբներն ըսինք, տեղւոյն ու ժամանակին ներածին շափ՝ ուսում սորված ըլլալով, ըստ բաւականին աղէկ հայերէն գրաբար գիտէր. ուստի եւ բոլոր հրատարակուած հայերէն գրքերը քովն ունենալով ու ետեւէ ետեւ առնելով, ժամանակին մեծ մասը կ'անցընէր կարգալով ու միտքն օգտակար տեղեկութիւններով զարգարելով: Եւ որովհետեւ պղտիկութենէն եւրոպական մշակեալ լեզու մը սորված չըլլալով (հայերենէն ու տաճկերենէն զատ՝ վալաքերէն ալ գիտէր, որն որ աղէկ կը խօսէր) մեծամեծաց հետ տեսնուած ատեն շատ նեղութիւն կը քաշէր, անոր համար՝ որպէս զի ազգային տղոց դիւրին ըլլայ գաղղիներէն լեզու սորվիլ, ուզեց որ հայերէն լեզուով գաղղիներէն քերականութիւն մը հրատարակուի, որն որ իրօք ալ իր ծախքովը տպուեցաւ հոս մեր վանքը 1816ին:

Աս իր ուսումնական կենաց ընթացքին մէջ իր ապագայ բնակութեան տեղւոյն վրայ ունեցած տարակոյսները մէկէն փարատեցան եւ միտքը հաստատուեցաւ, որով եւ իր ընթացքը փոխուելով՝ առջեւը նոր դաշտ մը բացուեցաւ իր առանձնութենէն ու քաշուած կեանքէն ելլելու եւ մարդկան երջանկութեան համար՝ իրրեւ թէ ի ծածուկ բրածը՝ աւելի ընդարձակ կերպով եւ հրապարակաւ գործելու: — Երբ որ Ռուսաց Աղէքսանդր կայսրը Մանուկ Պէյին Ախէննա ըլլալն իմացաւ, ուզեց հետը տեսնուիլ: Առջեւն ելած ատեն (1814ին, Հոկտեմբերի 3ին) զինքը շատ սիրով ու պատուով ընդունեցաւ, եւ արդէն յառաջուրէն վրան ունեցած համարումն աս առաջին տեսութեան այնպէս մեծցաւ, որ անմիջապէս իրեն բարձրապատիւ (excellence) տիտղոսն

ու զօրապետի (général) աստիճան տալէն զատ՝ միանգամայն զինքը ներդործական քաղաքական խորհրդական անուանեց :

Մանուկ Պէյ աս վեհանձն կայսրմէ դատած սերէն՝ ու պատուէն, ինչպէս նաեւ անոր պաշտօնատեսարց իրենց ուցուցած մեծարանքէն քաջալերուելով, վերը զուցածներնուս պէս, ալ ինք զինքն որոշեց որ Ռուսաստան երթայ հաստատուի : Ուստի երբ որ առաջին տեսութենէն քիչ մը ետքը նորէն կայսեր առջեւն ելաւ, համարձակեցաւ իր խորհուրդը յայտնելու եւ հարկաւոր հրամանները խնդրելու : Աս խնդիրներուն զլխաւորներէն մէկն ան էր՝ որ Պեսարաբիա դաւառին մէջ, ուղած տեղը քաղաք մը շինէ, եւ հոն հայազգի բնակիչներ ժողովէ. երկրորդ՝ ամէն տարի առանց մաքս վճարելու՝ տէրութեան մէջ 100 հակ վաճառք կարող ըլլայ խոթել՝ ինչ տեսակ նիւթ որ ուզէ նէ : Այսորն աս ու ասոնց նման մեծամեծ շնորհքներն ու արտօնութիւնները չէ թէ միայն սիրով շնորհեց, հապա իր կայսրութեան շինութեան ու բարգաւաճութեան այսպէս գործակից ըլլալ ուզելուն համար մասնաւորապէս շնորհակալ եղաւ, ինչպէս յայտնի կ'երեւայ նոյն բնակալին առանձին նամակէն՝ զորն որ 1815ին Փետրուարի 22ին Մանուկ Պէյին գրեց :



Մանուկ Պէյի Բուսաստան հաստատութիւնը — Բահ :

Այս կերպով Մանուկ Պէյ ընելիքն որոշելէն ետեւ՝ քանի մը ամիս ալ Ախէննա կենտրով՝ հարկաւոր պատրաստութիւնները կը տեսներ : Նոյն միջոցին ալ մեծ պատիւ ու սէր դտաւ չէ թէ միայն Բուսաստան կայսրմէն եւ անոր պաշտօնատէրներէն, այլ նաեւ ուրիշ թագաւորներէն ու նշանաւոր մարդիկներէն՝ որոնց ծանօթ էր իր մեծարոյ համբաւը : Այսպէս ամէն բան կարգի դնելէն ետեւ՝ Գրօնշդատ դնաց (1815ին, Յունիսի մէջ), ուր որ իր ընտանիքը կը կենային, եւ քանի մը շաբաթ անոնց քով մնալէն ետքը՝ ինք առանձին Պեսարաբիա դնաց, որպէս զի անձամբ նոյն տեղերն աղէկ մը աչքէ անցընէ եւ հաստատուելու տեղն որոշակի ընտրէ : Հոն քիչ մը ատեն ասդին անդին պտրտելով եւ մտադրութեամբ ամէն կողմանէ քննելով, յարմար տեղ մը գտաւ Փրութ ու Գանուր գետերուն մէջտեղը, եւ անմիջապէս ելաւ Պեսարաբիա դնաց (1816ին, Փետրուարի մէջ), ուր որ կայսրը զինքը շատ սիրով ու պատուով ընդունեցաւ, նոյնպէս կայսրուհին եւ կայսեր եղբարքն ու քոյրերը :

Նոյն մայրաքաղաքը կեցած ժամանակը՝ Մանուկ Պէյին համարման ու համբաւին աւելնալուն շատ նպաստաւոր եղաւ : Այսին զի թէպէտ իր հոն երթալուն բուն

պատճառն ան էր՝ որ իր շինելու քաղքին եւ ուրիշ անձնական գործոցը վերաբերեալ քանի մը խնդիրները կարգի դնէ, բայց միանգամայն տէրութեան երեւելի գործոց վրայ ալ իր խորհուրդներովը շատ ազդեցութիւն բրաւ : Աս իր խորհրդոց մէկ մասին նպատակն էր Պեսարաբիա զաւառը, որուն վրայ նոյն ժամանակները կառավարութիւնը զանազան կարգադրութիւններ կ'ընէր : Արդ Մանուկ Պէյ իր հասուն փորձառութեամբն ու վերջին ատենները նոյն զաւառը պարտելով բրած զննութիւններովը՝ քանի մը բան առաջարկեց, որոնք տէրութեան պաշտօնէից առջեւ շատ հաճոյ ըլլալով՝ ըստ մասին անմիջապէս ի գործ դրուեցան, ըստ մասին ալ նշանակուեցան, որպէս զի պատշաճ ժամանակին գործադրուին :

Աս ըսածներնէս ինք իրմէ կրնայ իմացուիլ որ Մանուկ Պէյին՝ իր շինելու քաղքին համար բրած խնդիրները չէին կրնար կառավարութեան կողմանէ մեծ ընդդիմութիւն գտնել : Իրօք ալ կայսրն ամենայնի հաւանեցաւ . եւ վրան աս շնորհքն ալ աւելցուց՝ որ իր նոր գնած երեք կալուածներուն, որոնց զլիաւորն է Հրնչեշտ, զանազան մեծամեծ արտօնութիւններ տուաւ : Միանգամայն շատնցուրնէ անոր սպասաւորութեան մէջ գտնուող Աստուածատուր Աւետեան եւ Պապիկ Յակոբեան Պարոնայց ալ զանազան զինուորական պատիւներ ու աստիճաններ շնորհեց : Մէկու մ'ալ, որն որ ատենօք Մանուկ Պէյին ծառայութիւն բրած էր եւ նոյն ժամանակ Ռուսաստան կը գտնուէր, առատ ուժիկ կապեց :

Այսպէս մեծ պատուով դարձաւ Մանուկ Պէյ Պեսարաբիա (1816ին, Յուլիսի մէջ), ուր որ քանի մը որ վերջը նաեւ իր ընտանիքն ալ հասաւ : Որովհետեւ շի-

նելու քաղքին վրայ դեռ խնդրոյ տակ եղող քանի մը բան կար, մինչուկ անոնց կարգի դրուիլը՝ բնակութիւնը հաստատեց իր Հնչեշտ կալուածին մէջ, եւ հոն ալ Ալալաքիա բրածին պէս՝ սկսաւ խնամով միտ դնել երկրագործութեան ու իր հպատակաց վիճակը լաւացընելու: Աս իր վախճանին հասնելու համար ուղեց նոյն կալուածն ու դեղը շէնցընել, ստուգիւ ալ քիչ ժամանակուան մէջ իր աչալըջութեամբն ու խնամքովն պնպէս յառաջացուց ու ծաղկեցուց, որ հարիւր անուորէ աւելի զանազան ազգերէ մարդիկ չորս կողմանէ հոն գիմեցին, եւ իր շինել տուած աներուն մէջ բնակելով՝ իր նպաստաւորութեամբը ոմանք երկրագործութեան, ոմանք ալ վաճառականութեան ետեւէ սկսան ըլլալ: Այսպէսով ան ստորին դեղը քիչ ատենուան մէջ Պետարաբիա գաւառին երեւելի գիւղաքաղաքներէն մէկն եղաւ, որուն հաստատուիլը եւ բնակչաց հանդստութիւնն ու բարեկեցութիւնը՝ որն որ կրնայ ըսուիլ թէ մինչեւ հիմայ կը տեւէ, Մանուկ Պէյին մեծանձնութեան ու առատաձեռնութեան մէկ ցոյցն է եւ պիտի ըլլայ մինչեւ աշխարհքիս վերջը:

Բայց իր սիրտը դեռ կատարեալ դո՛հ չէր. վասն զի ետեւէ ետեւ անակնունելի դժուարութիւններ երեւան ելլելով, ինչպէս որ մեծ գործառնութեան մը մէջ հասարակօրէն կ'ըլլայ, թէ իր եւ թէ կառավարութեան բաղձանաց դէմ՝ քաղքին շինութեան սկսելուն արդեւք կ'ըլլային: Աերջապէս երբ որ անդամ մ'ալ շուտ սկսելու խնդիրը կրկնեց, կառավարութեան կողմանէ աս ուրախալի պատասխանն ընդունեցաւ թէ Այսսեր նոյն նիւթին վրայ տուած հրամանը՝ Պետարաբիայի կուսակալ Պահմեթէվ իշխանին խաւրուած է, որուն հետ քաղքին շինութեան վրայ անձամբ խօսելով՝ ամէն

բան իր ուզածին պէս լմննցած կը գանէ : Սակայն ափսոս որ Մանուկ Պէյ աս իր բաղձանաց կատարումը չկրցաւ արդեամբ տեսնել . որովհետեւ անդուծ մահը՝ որն որ սչ պատուոյ կը նայի , սչ հարստութենէ կ'ակնածէ եւ սչ ալ հասակի միտ կը դնէ , նոյն իսկ ան օրը՝ որ կուտակալին հետ պիտի խօսակցէր , վրայ հասնելով եւ իր պատուական կենաց թելը տարաժամ կտրելով , ամենուն վախճան տուաւ :

Նոյն տարաբախտ դիպումածը Պր. Մսեր մեզի խորհած տեղեկութիւններուն մէջ այսպէս կը ստորագրէ : Սպարապետ Պենինքսոն , զօրաց երկրորդ հրամանատարը , նոյն ատենները Պեսարաբիա գանուելով՝ Հնչեշտէն երկու երեք ժամ հեռու տեղէ մը պիտ'որ անցնէր : Մանուկ Պէյ՝ որն որ յառաջունէ զինքը կը ճանչնար , կալպընա ըսուած զեղը զինքը բարեւելու գնաց եւ հրաւիրեց որ հրամայէ զիշեր մը իր տունն անցընէ : Սպարապետն աս հրաւերը սիրով ընդունելով՝ երկրորդ օրը (1817ին , Յունիսի 20ին) սպայից բաղմութեամբ ու քովն եղած բոլոր զինուորական մեծերով Հնչեշտ եկաւ : Եւ որովհետեւ Պահմեթէվ կուտակալն ալ սպարապետին զիմացն եկած էր , եւ ինչպէս զրուցեցինք՝ Մանուկ Պէյին հետ պիտի խօսէր , անոր համար ինքն ալ մէկտեղ նոյն տեղն եկաւ : Մանուկ Պէյին ընդարձակ ապարանքն այս ամենայն երեւելի մարդիկներու բաղմութեամբ ան աստիճանի լեցուեցաւ , որ բաղմութիւ սննեակները չբաւելով՝ հարկ եղաւ գաւթին մէջ վրաններ կանգնել :

Ըն ատենները Մանուկ Պէյ շատ ընտիր ու պատուական հեծնելու ձիանք ունէր՝ Արաբիայէն ու Տաճկաստանէն բերուած : Սպարապետը նոյն ձիերը տեսնելու բաղձանք ցուցընելով՝ Մանուկ Պէյ երկու հատը

չուտ մը պատրաստել տուաւ, եւ ախտապետին հրամայեց որ հեծնայ ու զանազան դժուարին հրահանգներ ընէ: Բայց նոյն մարդն անոր ուղածին պէս աղէկ չկրնալով ձիավարել, սիրտը նեղանալով՝ ինք, որ շատ քաջ ու վարժ էր հեծելութեան մէջ, զանիկա վար իջեցուց եւ շուտ մը ձիուն վրայ նետուելով՝ սկսաւ անանկ աղէկ ու ճարտարութեամբ վարել, որ բոլոր ներկայ եղողները թէ ձիուն ազնուութեան եւ թէ իր քաջ ձիավարութեան վրայ սկսան սաստիկ զարմանալ ու ծափ զարնել: Սակայն ուրիշներն այսպէս զարմացման մէջ եղած ատեն՝ ինք մէկէն՝ ձին կեցքնելով՝ վար կ'իջնայ, եւ հազիւ սաստիկ հեւալով՝ կարող կ'ըլլայ մօտ եզող քարէ սանդղի մը ոտքը նստիլ:

Շուրերն ու իր մարդիկն աս եղածին վրայ արտաքրկարգի այլայլելով՝ կ'աճապարեն քովը կը վազեն, եւ հոգով ու ցաւով կը սկսին պատճառը հարցընել: Ինք կը ջանայ զիրենք հանդարտեցընել, բտելով որ շուտով ձիավարած ատեն՝ կուրծքը թամբին գնդածեւ առաջքին զարկած պիտ'որ ըլլայ, ինչու որ կրճոցը ձախ կողմը սաստիկ ցաւ մը կը զգար: Մանաւանդ որ անկէ մէկ ամիս յառաջ անգամ մը ձիէ վար իջնալու ատեն՝ շունչը կտրած եւ քիչ մը ետքը ամէն բան անցած ըլլալով, կը համարէր եւ ուրիշներն ալ կ'ապահովընէր որ աս հեղ ալ այնպէս արեան շատութենէ պատճառած շնչարգելութիւն մ'ըլլայ եւ քիչ մը վերջը անցնի: Բայց սակայն երբ որ երթալով ցաւը խիստ սաստկացաւ, հարկ եղաւ որ առնեն զինքը սենեակը տանին եւ անկողին խոթեն:

Բոլոր բազմութիւնն իրար անցնելով՝ կը ջանային օգնութիւն ընել. սակայն դժբախտ պատահմամբ մը նոյն ժամանակ ո՛չ իր անձնական բժիշկը հոն էր, ո՛չ

ալ սպարապետին միշտ քովը պտրտցուցած բժիշկը մէկտեղ կը գտնուէր : Անոր համար շուտ մը շորս կողմը ձիաւորներ ելլելով՝ բժիշկ վնասուելու դացին : Այն միջոցին զօրապետներն եւ ուրիշ մեծամեծ մարդիկ սկսան անձամբ բժշկի գործք գործելով՝ փափկարար աւիշներով մարմինը շփել, յուսալով որ անով օգուտ մը կ'ըլլայ : Բայց բանը բանէն անցած, մահը զօրաւոր բազուկներով իր զոհը բռնած էր : Սաստիկ ցնցմանէն սրտին երակը պատուած ըլլալով՝ քիչ մը ետքը սկսաբերնէն արիւն գալ, որուն ամենուէին բժշկական դարման մը օգուտ չէր կրնար ընել : Այսպէս՝ երթալով արեան հեղձումը սաստկացաւ, եւ վերջապէս կէս գիշերէն երկու ժամ ետքը հոգին աւանդեց :

Արկրորդ օրը (Յունիսի 21ին) առտուանց կանուխ Գիշնեւ քաղքէն բժիշկներ հասան եւ շուտ մը արիւն առին : Ոմանք թանձր արիւն ելլելը տեսնելով՝ կարծեցին որ դեռ ոգին վրան է եւ միայն շունչը բռնուած, ուստի եւ սկսան յոյս ունենալ : Բայց շուտ մը ասակնկալութիւնն ալ կտրեցաւ, եւ ան սաստիկ ցաւերն ու տրտմութիւնը՝ որով մեռնելուն լուրը զամէնքը պատած էր, քիչ մը ժամանակ ուրախութեան փոխուելէն ետեւ՝ նորէն աւելի եւս սաստկութեամբ ամէն կողմ պաշարեց :

Արկրորդ օրը մարմինը մեծահանգէս շքով Գիշնեւ քաղաքը տարուեցաւ, ուր որ բազմութիւ մեծամեծներու եւ անհնարին բազմութեան ներկայութեամբ՝ Հայոց եկեղեցւոյն դաւթին մէջ թաղեցին : Գերեզմանը մինչեւ հիմայ նոյն եկեղեցւոյն դրան առջեւը դրսի կողմանէ կը տեսնուի, երկաթի դեղեցիկ վանդակով պատած :

Այսպէս իր առողջ տարիներուն մէջ, քառասուն-

եւութ տարւան, կնքեց կենացը գեղեցիկ ընթացքը
 Մանուկ Պէյ Միրզայեան, անհնարին սգոյ եւ ցաւոյ
 մէջ թող տալով չէ թէ միայն իր ընտանիքը, ազգա-
 կաններն ու բազմաթիւ բարեկամները, հապա նաեւ
 բոլոր ազգայիններն ու ամէն զինքը ճանչցողները, մա-
 նաւանդ աղքատները՝ որոնց հայրն ու խնամակալն էր,
 եւ իր բոլոր հպատակները՝ որոնց բարեկեցութեան ու
 երջանկութեան հիմնադիրն եղած էր :



Մանուկ Պէյ վեց զաւակ ունեցաւ, չորս աղջիկ եւ
 երկու մանչ : Երկու որդիքը գեռ կենդանի են : Ան-
 դրանիկը՝ Մուրատ Մանուկ Պէյ ըստ մեծի մասին հօրը
 Հնչեչտ կալուածին մէջ կը բնակի ու զաւկըներ ունի :
 Իսկ երկրորդը՝ Գրիգոր Մանուկ Պէյ՝ աշխարհք մտած
 չէ . յառաջագոյն կայսերական թիկնապահաց մէջ էր,
 բայց հիմայ հրաժարած է ու Փարիզ կը կենայ : Չորս
 աղջիկներէն երկուքը մեռած են, իսկ մէկն ամուսնա-
 ցած է Լազարեանց ազնուատոհմ Խաչատուր Աղային
 հետ :



- Ա. Թորսէնիկլի օղլուին սկզբնաւորութիւնը: — Մանուկ Պէյին ծնողքը, իր տղայութիւնն ու պատանեկութիւնը: 5
- Բ. Մանուկ Պէյին գովելի հանգամանքը: — Թորսէնիկլի օղլուին կը ծանօթանայ եւ մեծ սէր ու համարում կը գտնէ: 11
- Գ. Թորսէնիկլի օղլուն խիստ կը մեծնայ ու փաշայութեան պատիւ կ'ընդունի: — Մանուկ շատ կը փառաւորուի: — Մանուկին թշնամեաց նենգութիւններն ու խայտառակիլը: 16
- Դ. Թորսէնիկլին կը մեռնի եւ իրեն կը յաջորդէ Ալեմտար Մուստաֆա փաշան: — Մանուկ նոր փաշային առջեւն ալ մեծ համարում կը ստանայ: — Պէյութեան աստիճան կ'ընդունի: 25
- Ե. Սուլդան Սէլիմին պղտիկութիւնը, գահ ելլելը, իր ազնիւ հանգամանքներն ու ըրած կարգաւորութիւնները: — Եէնիչէրիներուն ապստամբութիւնը: Սուլդան Սէլիմին գահէն իջնալն ու Սուլդան Մուստաֆային թաղաւորելը: 31
- Զ. Մուստաֆա փաշան իր կողմնակիցներովը զորօք կոստանդնուպոլիս կ'երթայ: — Սուլդան Սէլիմ կը մեռնի եւ Սուլդան Մահմուտ կը թագաւորէ: 41
- Է. Մանուկ Պէյ կոստանդնուպոլիս կը հասնի եւ կը ջանայ Մուստաֆա փաշային անխոհեմ ընթացքը փոխել տալ: — Քէօսէ քէհեա: — Մանուկ

- Պէյին վերջին անդարարութիւնն ու մեծանձնական որոշումը: 50
- Ը. Ապստամբները վեզիրին ապարանքը կրակի կուտան: — Մուստաֆա փաշան ինք ղինքը քաջութեամբ պաշտպանելէն ետեւ՝ շարաշար մահուամբ կը մեռնի: 57
- Թ. Մանուկ Պէյ զարմանալի կերպով մահուրնէ կ'ազատի ու նախ Ռուշուկ ետքը Պուքրէշ կը փախչի 66
- Ժ. Մանուկ Պէյին Պուքրէշ հաստատուին ու հոն բրած բարիքը: — Ռուսաց եւ Օսմանեանց մէջ խաղաղութեան միջնորդ կ'ըլլայ: — Աւստրիայի երկիրն անցնիլը: 72
- ԺԱ. Մանուկ Պէյ վիէննա կու գայ եւ Ռուսաց կայսեր հետ կը տեսնուի: — Միտքը կը դնէ որ Ռուսաստան երթայ եւ հոն հաստատուի: . . . 79
- ԺԲ. Մանուկ Պէյին Ռուսաստան հաստատուին ու մահը: 85

